Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5628

891.99
U-44

Ушкинскій пустынь 11 августа 1891 г. 24 ч. д.

Пинежскій уѣздъ 1892 г. 25 ч. д.

9011

891.99
Ա-44

ԵՐԿՈՒ ՔՈՅՐ

ԵՂԵՐԱԿԱՆ ՎԷՊ

(ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Դ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՏՓԽԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ՀԱՄԲԱՐՅՈՒՄԱՑ ԷՖԻԱՃԻԱՆՑ ԵՒ Ը-Դ

1872

4061
ՊԵՏ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Армянская Библиотека
ՀԱԽՀ-ՍՍՀ Հ.
им. А. Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հրատարակություն

Բաղդասարյան

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«ՍԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ»
ԱՐԱԳՐԻՒ:

Дозволено Цензурою 1872 года 25-го Августа.

ԳՐԱԴԱՐԱՆ
5095-50
2003

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

Ա.

Ես 12 տարեկան էի և կարդում էի Շ.ՀԵ. դիւղի քահանայի մօտ: Մէկ ամառուան շաբ օր էր: Տանձի ծառի տակ, տէրտէրից հեռու նստած, որպէս թէ դասս էի սերտում, բայց երեսս էր միայն գրքի դիմացը, իսկ աչքերս մի անբնական դիրքով այս կողմ այն կողմ էին նայում, մանաւանդ դէպի տէրտէրը շուտ շուտ էի ձըգում, որ տեսնեմ արդեօք քունը չտարաւ շատ սաղմոս մրմնջալով, որ վեր կենամ տեղից ու փախչեմ դէպի գեղը և խառնուիմ ըղջասէր երեխայոց հետ, բայց այդ ժամանակ ես բոլորովին ուրիշ դէպքի հանդիպեցայ, այնպիսի դէպքի, որ մինչև այսօր էլ չեմ կարողանում առանց սարսափելու յիշել:

Նինջն արդէն սկսել էր բռնանալ տէրտէրիս վրայ և յոյս կար, որ մինչև ներհման հասցնէր, յանկարծ մի անծանօթ երիտասարդ եկաւ, և չըդիտեմ ինչ ասեց ինչ չասեց, տէրտէրս բոլորովին սթափեցաւ և ընկաւ դունատիոնովը: Այս ժամանակ ես արդէն ուզում էի կանգնել 'ի պատիւ նորեկ հիւրին, բայց այնքան մօտիկ էին, որ հասկանայի նոցա ցածր ձայնով խօսելը: Տէրտէրս հրամայեց ինձ որ երթամ տուն հաց ու-

տելու։ Ես ճանապարհ ընկայ, բայց յիշեալ Երիտասարդը այնպէս դրաւեց ինձ, որ մի անսովոր հետաքրքրութիւն ստիպեց ինձ հետամուտ լինել և իմանալ, թէ ո՞վ է արդեօք այդ պարոնը, և այդ պատճառով սկսայ բախչի մէջը մօլ շրջել։ Սորա վերայ շատ ժամանակ չանցաւ. Երիտասարդը տերտերիս աջը համբուրեց և ճանապարհ ընկաւ դէպի այն կողմը, որ կողմով որ ես պէտք էր երթայի հաց ուտելու։ Ես հասայ նորա քամակից և երե խայական հետաքրքրութեամբ սկսայ եթեսին նայել, ոտքին նայել, և այսպէս դրաւվելուս համար մի քանի անգամ էլ ոտքս քարին դիպչելով վեր ընկայ և կարմրեցայ, բայց չընդհատեցի իմ նկատողութիւնքս։ Երիտասարդը ամենևին ուշք չէր դարձնում ինձ վերայ և կարծես չէր տեսնում, որ ես որսկանի շան պէս իւր չորս կողմովը պտտուտ պտտուտ էի անում և քիչ էր մնում ոտքի տակն ընկնիմ։ Այսպէս շարունակուեցաւ մեր ճանապարհորդութիւնը և ես մոռացայ, որ արդէն գիւղից դուրս ենք եկել։ Այս ժամանակ նոր արդէն տեսաւ ինձ Երիտասարդը և սկսաւ հարցնել։

— Դու ո՞ւր ես գնում, բալա ջան։

Ես շփոթուեցայ և նոր աչք բացի, տեսայ որ հեռացել եմ ճանապարհից, սկսայ կցկտուր կերպով պատասխանել, թէ ես գնում եմ հաց ուտելու։

— Դու ո՞ւմ տղան ես, յետոյ հարցրեց։

Ես պատասխանեցի։

Հա՜։ Մեր . . . ։ տղան ես . . . Դէ գնա՛, բալա՛ ջան, գնա՛ հաց կեր։

Մեր . . . . ասելով, ինչ ուզեց ասել չը հասկացայ, բայց բնաշնութեամբ ենթադրեցի, թէ սա իմ

ազգական պէտք է լինի, բայց ինչո՞ւ այսպէս սառնութեամբ է վարվում ինձ հետ, իմանալով որ ես այստեղ օտար եմ, պէտք էր որ գգուէր ինձ, ինչպէս իմ միւս բարեկամներս անում էին պատահած ժամանակը։ Ես ըսկսայ աւելի խոր նայել երեսին և անշարժ կանգնել։ Նա դուրս եկաւ ճանապարհից, վեր բերաւ ուսից իւր արծաթաբանդ հրացանը, ողջունեց նայեց և դրաւ կշտին։ Նա նստած էր։ Հանեց քամարից քաշ արած մաշկեկի միջից ատրճանակը և այն էլ դրաւ մօտը։ Ցետոյ կրկին նայեցաւ ինձ վերայ և մի խոր հառաչանք արձակեց կուրծքից քանի մի կցկտուր խօսքերի հետ, և ապա դառնալով դէպի ինձ ասաց.

— Բալա ջան, գնա՛ տերտերիդ ասա, դայ ինձ հաղորդի։

Ես սկսայ զարմանալ և անշարժ մնալ։ Այս մարդը հիւանդ չէ, մի բան չէ, ինչի՞ է ուզում հաղորդուիլ, ասացի՞ ինձ ու ինձ։ Բայց նա կրկնեց իւր խնդիրը։

Գնա՛, բալա ջան, գնա՛։ Ես հեռու տեղ պիտի գնամ, կարելի է ինչ պատահի ճանապարհին, դրա համար ուզում եմ հաղորդուիլ։

Ես հնազանդեցայ և հաղիւ երկու երեք քայլ հեռացել էի, յանկարծ թնդաց ատրճանակը և գիւղացիք դիմացէն նկատելով սկսան վազել դէպի իմ անծանօթ բարեկամն։ Այս ժամանակ ես յետ նայեցայ ու Երիտասարդի կուրծքը արիւնաթաթախ տեսնելով, ուշաղնաց ընկայ վայր։

—

Բ.

Աշունք էր։ Մի անտառուտ ձորամիջում մեծ խաբոյկ էին վառել ութ գիշերևգնաբաց, որոնք մի քան զմիւսը հատաւաղուկ եւ քաջատոզջ երիտասարդներ էին։

— Տղէք, ի՞նչ սաղ կրդայ էս կրակին, ասաց նրանցից մինը, ընդհատելով հատարակաց խօսակցութիւնը։

— Լաւ խոզ, պատասխանեցին քանի մի հոգի միաբերան։

— Դէ, ո՞վ էք պատրաստ։

— Ես, ես էլ, ես էլ. լսուեցան քանի մի ձայներ։

— Հէնց ուր որ կը հրամայես, ասաց մէկ ուրիշն էլ։

— Եղ լաւ ասացիր, պատասխանեց առաջարկողը։ Ես երկուսիդ կը հրամայեմ, որ գնաք մէկ լաւ խոզ բերէք, երկուսիդ էլ, որ գնաք հաղող բերէք, երկուսիդ էլ, որ գնաք մէկ պղինձ, մէկ ջրաման, աղ, հաց բերէք. երկուսս էլ կը մնանք էստեղ։ Դէ վեր կացէք։ Խոզն գնչեցը կը բռնէք ուսուլով. ու էն սահմանը զայիմ կը կապէք, որ ձէնձուն չը հանէ ու խոզարածներին զարթացնէ։ Հաղողը ձաղարանց բաղեցը կը բերէք. ծոցն

խոզ էլ կարող էր խանձել։ Երբ որ վեց հոգին գնացին և մնացին այս երկուքը, դոքա սովոր լինելով այդպէս բաների, ոչինչ մտածողութեան մէջ չընկան, թէ սրդեօք իրանց ընկերքը յաջողութեամբ կը վերադառնան, թէ՞ կընկնին թակարդի մէջ և վաղը իրանց անունն էլ նրանցի հետ կը խայտառակուի ջահիլութիւնը մոռացած ծերերի առաջև։

— Ես ոչինչ բանի վրայ փիքր չեմ անում, պատասխանեց Արզումանը, բայց էս դիշեր մէկ երազ եմ տեսել, էս սաղ օրը դրա վրայ եմ մտք անում, թէ երաբաբ ի՞նչ պէտք է պատահի։

— Խէր ըլի, ասա՞ տեսնեմ ի՞նչ ես տեսել։

— Մէկ սիպտակ ձիու վրայ նստած էի։ Ինպէս մէկ ձի էր, որ աստղերի հետ էր ուզում խաղայ։ Ես էլ երազս կապել էի, ամէն ասքուկարդը վերաս էր։ Գեղի առաջևը խաղացնում էի ձիս, բոլոր գեղացիք, ինձ էին մտիկ տալիս, ինձ էին թամաշա անում, ու շատերն էլ կանչում էին — վէր արի, վէր կընկնիս։ Ես նրանց չէի լսում, ես մտիկ էի տալիս, որ տեսեմ Հերիքնազը էլ ինձ տեսնո՞ւմ է թէ չէ։ Հէնց էս վէքրումն էի, մէկ էլ տեսնեմ մի քանի հարս ու աղջիկ, Հերիքնազս էլ նրանց միջին, ճանապարհի դրաղին կանգնել, ինձ են թամաշա անում։ Էս որ տեսայ, աւելի ասքացայ ու ձիուս դլուխը բայ թողի։ Զին թռաւ, էլ չիմացայ թէ դլուխը բանել էի . . . .

— Յետոյ, ո՞ւր գնայ ձին։

— Զին քոռացաւ, թէ աչքերն արնով լցուեց չեմ դիտայ, ճանփէն ծռեց ու մի բաշ ընկաւ էդ աղջկերանց մէջը։ Երկու հոգի ընկան ձիու տակը, ձին գլխի

վրայ անկուեց, ես էլ բերանսրվէր գետնին փռուեցայ։ Սրա վրայ զարթեցի։ Ի՞նչ կասես, սա լաւ նշան չէ։ Զի ու տակ ընկնողը Մարիամն ու Հերիքնազն էին։ Աշկարա երևում էր, որ ես մուրազս չը պիտի հասնեմ։

— Ի՞նչ ասեմ, օրը գիտէ։ Շատ անգամ մարդ փիս էրազ էլ տեսնում է, բայց թէ օրը բարի է, էրազն էլ բարին է կատարվում։ Դիտի սուտ, Աստուած ըղորդ՝ Օրաջարա չարա եօխ։ Ինչոր լինելու է, կըլի, էրազի ըռխին չի մտիկ տալ։

Այս միջոցին կաթսայի գնացողները եկան։ Հացաղ, ջրաման էլ էին բերել. ու մի ուրիշ կապոց էլ դը ըին Արզումանի առաջև։ Արզումանը բաց արաւ այդ ծրարը և նորա միջից հանեց՝ մի եփած չաղ հաւ և քանի մի հատ դաթա։ Արզումանը իսկոյն իմացաւ, թէ ինչ տեղից պէտք է լինի այդ, և թէև շատ ուրախացաւ այդպիսի յուսոյ նշաններ ընդունելով, բայց այսու ամենայնիւ ասատիկ բարկացաւ, որ իւր հրամանը ճշդիւ չեն կատարել գնացողները։

— Տղէք, դուք մեր անումը պէտք է խայտառակէք, ասաց Արզումանը բարկանալով։ Ես ձեզ ասեցի էնպէս պէտք է մանէք գեղը ու էնպէս դուս գաք, որ մի շուն, մի կատու էլա չիմանայ, ձեզ ի՞նչպէս գտան, որ էս բաներն ուզարկեցին։

— Աստուած, երկինք, Արզուման, մի հոգի էլա չի իմացել։ Մենք ամէն բան վեր կալած Ղիսունց տան կշտովն անց էինք կենում, մէկ էլ տեսնինք մթնումը չափարի տակին մի շուաքի պէս մի բան է երևում, մոտեցայ, տեսնեմ մի հարս։ Ես ասի հրէս կը փախչի որ-

տեղ որ է, բայց նա փեշլեցս բռնեց ու էդ տուա. ինձ, լուռ ու մունջ, առանց մի խօսք խօսելու: Ցեռոյ ես ճանաչեցի. ասի, դու Մարիամն ես. նա գլխով արաւ. էս Արզումանի համար է, նա էլի գլխով արաւ ու փախաւ:

Արզումանը գլուխը քաշ դցեց ու հառաչելով վենթվենթաց քթի տակին. էրաղ, էրաղ:

Այս ժամանակ հրացանների ձայներ լսուեցան: Տղերքը յանկարծ վեր թռան տեղերից և սկսան կասկածել, թէ ինչի իրանց ընկերների վերայ արձակուեցան այդ մարդասպան դրծիքները, բայց սորա վերայ շատ չանցաւ հաղորդի դնացողները եկան: Շալվարների լէն վոսկերքը հաղորդով ու խնձորով լցրել ու խուրջինի պէս ուսներին էին դցել: Բեռը ցած դրին ու կարմրած երեսներից քրտինքը դատակներովը սրբելով՝ նստեցին կրակի դրաղին:

— Տղէք, ոչ ով խօ չը տեսաւ ձեզ, հարցրեց Արզումանը:

— Բաղվանչին տեսաւ . . . վայ էն տեսնելուն, որ տեսաւ . . . իրան մահը տեսաւ . . աշխարհքը գըլխին մթնեց, մեզ չը ճանաչեց. ասաց գողերից մինը յոգնածութիւնից շնչարգելուելով:

— Տղէք չըլնի՞ խեղճի օրը սեայրվք:

— Չէ՛, չէ՛ . . . մի ծիծաղ էր, ծիծաղ: Դեռ էսպէս խելքը բան չէինք արած:

Ամանք բաղը թէ չէ, դնացինք բաղվանչու դադին մոտիկ ավինք տեսանք էնտեղ չի: Մենք ուզեցանք առաջ բաղվանչուն տեսնենք, որ ինքը մեզ չտեսնի ու միբաշ թաքուն տեղից թուանքով բանով խփի: Դէս

ու դէն ընկանք, տեսանք վերի մեծ խնձորքի տակին քամակի վրայ պարկած խոբմիացնումա: Մենք էլ էս կուղէինք: Շարվարս հանեցի տուի Մադոյին, ասի դու դընա արխային հաղորդ քաղէ, ես սրան կըպահեմ: Մադոն դնաց բաղաքաղ, ես ուսուլով մնացայ բաղվանչուս, խանչալս հանեցի ու մահուան հրեշտակի նման գլխավերևս կանգնեցի: Մի խելքիմ ժամանակ մեռածի պէս խոբմիացնում էր, մէկ էլ էրաղ տեսաւ, թէ քամակը քամի մնաւ, խշխշոցն ականջ մնաւ, թէ մոծակները զուռեցին, մէկ էլ տեսնեմ ժաժումաժա դալի: Չէ, տեսայ որ սա գլուխն էլ ա ուզում բարձրացնի, ես խանչալս պսպղացրի: Բաղվանչիս մահն առաջին տեսաւ թէ չէ, քաղցր քնի մէջ մնաւ: Մադոն իրա բանը որ պըրծաւ, բաղնցը դուրսկեկաւ, ինձ շվայրուց: . . Մենք կիսաձամփի էինք, որ մի բաղվանչի նոր վեր կացաւ քամակներից թուանք դցեց, մկկելներն էլ նրա ձէնի վրայ իրանց թուանքները դարդկեցին: . . .

Խոզի դնացողները նոյնպէս եկան: Սոքա էլ իրանց արածները պատմեցին եւ շուտով կատարեցին խոզի աւդօդաֆէն, այսինքն խանձեցին: Արզումանը ոչինչ բանի ձեռք չէր տալիս, ոչինչ չէր խօսում, միայն երբ որ խոզը մաքրեցին և կորտելու վրայ էին, առաջարկեց, որ մի անդամը (ազդրը) կորեն ուտեն իրան և թողնեն երթալու գիւղը: Տղերքը հասկացան նորա միտքը և խոկոյն կատարեցին նորա խնդիրը: Արզումանն ամէն բանից իւր բաժինն առնելով ճանապարհ ընկաւ, ոտքով դէպի մի անծանոթ խրճիթ, իսկ երևակայութեամբ դէպի Մուհամէդի եօթներորդ երկինքը:

Գ.

Գ . . . գեղջ վերի թաղումը մի տուն կար բոլորովին կղզեացած միւս տներից: Այդ տան չորս կողմովը բաւականին բարձր չափաւ էր քաշած, որ պարսպի չափ ամրութիւն ունէր, և ինչպէս ասում են հեքիաթներումը, ղուշն իրան թեւովն, օձն իրան փորովը չէր կարող դորա վերայով ներս թափանցել: Ժամանակով մեծ տուն էր այդ տունը: Մի անգամից ութ ինը օրօրոց էր օրօրվում այդ տանը, չորս հինգ թոռոն հաց էր թխվում Աստուծու օրը: Երկու դուռան էր դուրս գալի այդ տանիցը, վաթսուն գլուխ կով ու դոմեշ էր կթվում. սուրով ոչխարներ, բալուխներով խոզեր իլխիներով ձիաներ էին պահում: Այդքան ապրանքի կառավարութեան համար ոչ մի վարձկան ծառայ չունէին: Տան ախպէր էին որդոց ու թոռանց տէր, որոց թիւը հասնում էր մինչև եօթանասունի: Բայց երբէք չէր պատահում, որ դոքա ամէնքը երբ և իցէ 'ի միասին մի սուփրի վրայ դանուին, 'ի միասին իրանց նահապետի չորս կողմը ժողովուին: Քանի մի հոգի տարուայ մեծ մասը սարերումն էին անց կացնում, ըստ որում ոչխարներ էին պահում, մի քանիսը, որպէս տաւարած՝ գոմերումն էին մնում, որ մի աւուր չափ հեռու էր գիւղից, մնացածներն էլ հեռաւոր դաշտերում վարուցանքով էին պարապում: Այս հանգամանքը այն վատ կողմն ունէր, որ վարեռութեան մէջ էր ձգում նրանց հեռու պահելով տնական և հասարակական կեանքից, բայց միւս կողմանէ այն լաւութիւնն էլ ունէր, որ բոլոր անդամները իրարմէ հեռու մնալով՝

միշտ իրարու կարօտ էին քաշում և իրարու հետ սիրով մնում:

Ահագին մեծութիւն ունէր այդ տան շինութիւնը, և եթէ այդպէս շէն չըլլներ, մանողի վերայ սարսափ կը բերէր, յիշեցնելով, որ հեքիաթների մէջ ասում է որ սարսափ էր բերում մանողի վերայ մանաւանդ ախապաշարեալ գիւղացու վերայ: Հարիւր երեսուն տարեկան էր, որ մեռաւ այս տան վերջին նահապետը և ինքը ցոր երանելու պէս ականատես էր իւր բոլոր ժառանգների և հարստութեան կարճ միջոցում ոչընչանալուն, և նորա պէս Աստուծոյ փառքը իւր բերնից չը պակասցրեց մինչև մահը: Ես շատ անգամ եմ տեսել այդ նահապետին: Յակովը էր նորա անունը և միշտ միտս էր ձգում Հրէից Յակովը նահապետին: Շատ անգամ եմ համբուրել նորա ձեռքը և նա ինձ օրհնել է: Դորա օրհնութիւնը մեծ տպաւորութիւն էր դրում իմ մանկական սրտի վերայ: Սուրբ էր համարվում դրանց օջաղը և սովորութիւն կար գիւղի մէջ, նորասրսակ հարսուփեսաներին, եկեղեցուց դուրս բերելուց յետոյ, կը բերէին դրանց օջաղը համբուրելու: Զոգում էին նորասրսակները և օջաղի քարից համբուրում և ծերունազարդ Յակովբի օրհնութիւնը ստանալով գնում էին իրանց մուրազին հասնում:

Ահա սոյն այս տանից մնացել էին երկու աղջիկ միայն: Մեծի անունը Մարիամ էր, իսկ փոքրինը Հերիքնազ: Մարիամին մի զարաբաղցի մարդ ուզել էր և տան փեսայ դառել, Հերիքնազին էլ իրանց մօտ էին պահում: Յայտնի բան է այն մեծ տանը չէին բնակում, այլ մի ուրիշ փոքր սենեկում: Մարիամը շատ սիրուն

էր, Հերիքնազն անման էր. երկու հուրի մալաղ։ Մարիամը ուզում էր Հերիքնազին տալ Արզումանին, հեռանալով իւր սիրելի քրոջ սրտի ընտրութեանը։ Արզումանը նոյնպէս մեծ օջաղի որդի էր, բայց այժմ իւր մօր միւս ճարն էր։ Նա չունէր ոչ հարստութիւն, ոչ մի ուրիշ բան, բայց միայն մի քաջութիւն, մի անվեհեր սիրտ, որ շատ անգամ ի չարն էր գործ դնում։ Մի տեսակ ժառանգական հպարտութիւն կար նորա մէջ, որովհետև նա իւր չքաւոր տեղովը հարուստ ու կարող մարդու շլինք չէր ծռում և նրանց բոլորովին իրան թշնամի, իւր հայրական սեփականութեան յափշտակիչ համարելով՝ միշտ աշխատում էր վնասել նրանց, ոքան որ իւր ձեռքիցը կը գար։ Արզումանի ահից ոչոք չէր կարողանում մի լաւ ձի պահել։ Այս տղան ոչինչ բան չէր գողանում բացի ձիուց։ Սորա պատճառը հողերտանները աւելի լաւ կիմանան, միայն պէտք է այս էլ ասեմ, որ այսու ամենայնիւ անհնարին բան էր, որ մի անգամ Արզումանին տեսնողը չը սիրահարուէր նորա վերայ, իւր բարեկազմ և կատարեալ հասակի հետ մի գրաւող և քաղցրական զօրութիւն էլ ունէր այդ տղան։ Այդ յատկութեամբը նա կախարդում էր իւր բոլոր ընկերներին և ամեն մի խումբ կազմելիս միշտ նրան էին ընտրում իրանց գլխաւոր, նա լինում անօրէնը, առաջնորդողը, հրամայողը։ Նորան սիրում էին իւր թշնամիներն անգամ ու շատ անգամ տեղը եկած ժամանակ ասում էին, մի ձի, մենք դիտենք, որ դու ես տարել, բայց քու չարին փոխ ըլի։ Պէտք է այս էլ գիտենալ, որ այս գեղացիքը այն գեղացիներիցը չեն, որոց մէջ մի քաջ երիտասարդի երևելը հաղուագիւտ բան է, և այդպիսի մէկը երևելուն պէս սարսափ է ձգում ամբողջ գիւղի վերայ։ Գող Նեղեկը, որ սարսափեցնում էր ամբողջ Շիրակը, այս գիւղը մտած ժամանակ հաւի պէս կուչ էր գալիս, գիտէր, որ այս տեղի ամենայետինը անգամ իրան բանի տեղ չի դնել։

—

Դ.

Այս գիշերը մօտ էր լրանալու։ Լուսնակը մի ջիդարոյ բարձրացել և արեգակի ճառագայթները դողդողալով սփռել էր մի անկողնու վերայ։ Այդ անկողնին մի սրահի մէջ էր, որ ուղիղ դէպի արևելք էր նայում։ Վերոյիշեալ ցանկապատի մէջն էր այդ սրահը, և Մարիամն ու Հերիքնազն էին նոյն անկողնու մէջ պարկած։ Վնոյ հրեշտակը տարածել էր նոցա վերայ իւր թևերը և կարի քաղցր երազիկների մէջ էին նոքա այս բոգէիս։ Մարիամի մարդ Շամլը, որ իւր բոլոր կեանքը ոտոր-դութեամբ էր անց կացնում, այժմ թիֆլիզ էր գնացել իւր աշխատութեանց պատուղը տնական կարիքների հետ փոխանակելու, իւր հրացանը երկու գնտակով լցրել կախել էր իւր հնոջ մօտ և խստիւ պատուիրելով որ մի անհաւատարիմ ոտք էգտեղ մտնելուն պէս առանց երկար մտածութեան զոհուի դորան։ Հերիքնազն էլ իւր համար մի ատրճանակ ունէր և դորա վերայ միշտ փորձ անելով ուզում էր իւր սիրածի ունեցածին հասցնել իւր ճարտարութիւնը։ Երբ որ իմանում էր, թէ այս ինչ նշանի խալսթը Արզումանը ստացաւ, նա այդ օրը մի տասն անգամ աւելի էր կրկնում իւր փորձը, որոց ձայնը լսելով՝ դրացիները կարծում էին թէ շա-

միրը կլինի անպատճառ։ Դոքա թէև Հերիքնազից ամէն բան կը հաւատային, բայց այդ բանին ականատես չէին լինում։ Շամիրը միշտ գանգատվում էր, թէ բարութիւն պակասում է և չէր կլինի ընկնում, որ Հերիքնազն է նորա վառօղի գողը։

Լուսնիակի շողքը ուղղեց Մարիամի երեսին ընկնելով զարթացրեց նորան և զարթնելուն պէս մի ոսոխունի ձայն հասաւ ականջին։ Արզումանն էր այդ, որ ափարի վերայից թրըմփաց։ Մարիամը փոքր ինչ ահ զգաց և ձեռքը մեկնեց դէպի հրացանը, բայց մէկ էլ մտածեց, որ սա անպատճառ Արզումանը պիտի լինի։ որին անհամբեր սպասում էր, թէև չէր պատահած, ոչ մի անգամ, որ դիշերով նորան հիւրընկալած լինի Ասում են սիրտը սուրբ կըլի ու նախազգալու զօրութիւն ունի։ Գոյթ է թէ սուտ այս բանը, ես չըդիտեմ, միայն այս անգամ ճշմարտուեցաւ։ Մարիամի նախազգացմունքը։ Շտապաւ հաղաւ նա իւր շորերը և նստեց տեղի մէջ։ Արզումանն արդէն դիտէր Շամիրի բացակայ լինելը, այդ պատճառով համարձակ ան ուաջ գնաց եւ Մարիամին տեսնելով՝ բարի իրիկուասեց։

— Արզուման դու ես, ասաց Մարիամը, որպէս թէ լաւ չըճանաչելով։

— Ես եմ, պատասխանեց Արզումանը։

— Էդ ի՞նչ կայ ձեռիդ։

— Ոչինչ, մի քիչ միս է, մի քիչ էլ հաղող է ու խնձոր։

Մարիամը վերկացաւ իսկոյն, ձեռքից առաւ այդ անները և իրան համեցեք արաւ նստացրեց, պատուիրելով՝ որ Հերիքնազին չը զարթուցնի։ Հերիքնազը վաղուց արդէն զարթել էր և սուտ քունն էր դրել իրան, գլուխը եօրղանի մէջը թաղելով։ Բայց Արզումանը նայելով այդ եօրղանի վերայ սասսիկ բարկանում եւ նախանձում էր նորա վերայ, որ իւր սիրուհուն իւր աչքի առաջև այդպէս անդթութեամբ փաթաթել, անջըպտել է իրանից։ Նորա երևակայութեան առաջև այս բոպէիս, եօրղանը դոշակը, բարձը, անկողնակալը, և մինչև անգամ շընչակայ պատերն ու քարերը ոգի սատացած՝ որը ուրախանում ու համակրութիւն էր ցոյց տալիս իրան, ոմն էլ սնապ էր անում և խնդում Արզումանի վերան, նորա աչքում եօրղանը այս վերջիններից էր։

Մարիամը Արզումանի բերածները տեղաւորելուն պէս, յետ քաշեց կրակի անթեղը, և խանձողների ծայրերն իրար մօտեցնելով սկսաւ վառել կրակը։ Մի քանի բոպէ չանցած ճուռաճեղ շինեց և մի քանի շամփուր խորոված։ Արզումանը շատ ասեց, որ իշտահ չունեմ, հաց եմ կերել, ջափա մի՛ քաշել թէև սուտ էր ասում. և Մարիամն էլ թէպէտ հաւատում էր նորա խօսքին, բայց անկարելի բան էր, որ իւր ասածը չանէր։

— Դէ որ էդպէս է, ասաց Արզումանը, քրոջդ էլ վեր կացրու. թող նա էլ հաց ուտի, մինչև նա չըվեր կենայ, ես թիքա չեմ դնիլ բերանս։

Մարիամը համաձայնութեան ժպիտ ցոյց տուաւ ու գնաց ներսը, տան մէջ շոր փռեց, ճրագ վառեց սուփրա գցեց, Արզումանին ներս կանչեց նստացրեց, ինքը դուրս եկաւ, որ քրոջը զարթեցնէ։

Սուտ քնած Հերիքնազը, Արզումանը ներս գնաց

թէ չէ, գլուխը բարձրացրեց, և սկսաւ չեմ չեմ անել քրոջ առաջարկութեանը և կամակորութեամբ՝ չուզեց ներս երթալ: Մարիամը ներս գնաց ու ուզեց սուտ ու մուտ պատճառներով քրոջ չը դալը բացատրել: Արզումանը աւելի պարկեշտութեան վերագրելով այդ բանը, լռեց, բայց հալալ հաց էլ չը կերաւ: Նա աւելի լաւ էր համարում Հերիքնազանից մօտիկ քաղցած նստել, քան թէ նորանից հեռու՝ առատ սեղանի վերայ: Շուտով դուրս եկաւ և իւր առաջուան տեղը նստեց: Մինչև Մարիամը սուփրէն կը հաւաքէր, ամէն բան իւր տեղը կը դնէր Արզումանը աչքը գցել էր ճրագի վերայ, և տեսնում էր թէ ինչպէս գիշերաթիթեռնիկը ճրագի չորս կողմովը պտըտուելով՝ այրում էր իւր թեւերը, որով վերջապէս խեղդաւ բոլորովին և ընկնելով ճրագի վերայ այրուեցաւ. Արզումանի համար, որ այդ բոպէին ամենայն բան սէր էր շնչում, սկսաւ կցկտուր խօսքով ասել — ճրագին սիրում է փարվանան, գլխովը պտըտվում է, բայց անգութ ճրագը նորան չը խղճալով էրում է:,, Այս լսեց Հերիքնազը ու սկսեց փնթփնթալ քթի տակ, թէ՝ փարվանան ճրագին չի սիրում, ուզում է հանգցնել նորան, նա էլ ջգրու էրում է:

— Լեղուիդ մատաղ, ասաց Արզումանն իր մտքումը, էդ քաղցը լեզուովդ որ դու անիծես էլ, ես օրհնանքի տեղ կընդունեմ: — Ա՛խչի էդ ի՞նչ ասեցիր ,մէկ էլ ասա, ստիպեց Արզումանը:

— Ասացի, որ հասկանաս, չասացի որ սովորես, պատասխանեց Հերիքնազը իւր սովորական հեգնական ձևովը:

— Ես հասկացայ, ինչ որ ասեցիր:

— Որ հասկացար, էլ ինչի՞ ես ասում մէկ էլ ասա:

— Էնից էնպէս ուզում եմ խօսացնեմ: Ինչ որ մեծացել ես, էլ քու խօսելը չեմ լսել, էնից իմանում էի, թէ խօսիլը մոռացել ես: Ամմա ինչ կը մոռանաս, դուն էն պտուղն ես որ . . . Միտք է, որ մի օր բաղիցը գալիս, էնքան խօսեցիր, որ գլուխս ցաւեց, ես ասեցի՝ քիչ խօսի, գլուխս տարար, դու էլ բարկացար վրէս . . . Ո՞վ գիտէր, թէ յետոյ դու էդպէս . . . .

— Իդպէս ի՞նչ:

— Էհմի էլ ես չեմ ասիլ քու ջգրու:

— Մի ասիլ, ես էլ չեմ խօսիլ քեզ հետ, որ էլի չասես գլուխս տարար: Թէ դու լաւ մարդ ես, էս կէս գիշերին ինչի՞ ես եկել մեր տուն: Դու չէիր գիտում, որ Շամիրը տանը չի՞:

— Գիտում էի, էնդուր եկայ:

— Որ եկար,ի՞նչ կարող ես անել, հրէս դաբանչէն կշտիս դրած, ո՞վ կարայ ինձ մօտենալ:

— Դաբանչէդ ինձ համար ես դրել կշտի՞դ . . . Էլի էն գիժ աղջիկն ես, Հերիքնազ, ես էնից իմացայ թէ հիմի խելօքացել ես . . . Ա՛խչի, ախըր . . .

— Ախըր ի՞նչ . . .

— Ոչինչ . . . Դու ասում էիր չեմ խօսիլ, բա ինչի՞ ես էդքան խօսում:

— Ի՞նչ անեմ, զօռով խօսեցնում ես:

— Դէ մի լաւ բան խօսիր, մի հեքեաթ ասա, ականջ դնենք:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА
ՀԱՅԿ-СССР
Մ. Մ. Ա. Մեսրոպի անվան

— Ես հեքաթ չեմ գիտում, դու ասա, ես անկաջ կըդնեմ:

— Վայ թէ խաբես ինձ, դու քնես, ու ես հենց իմանամ թէ անկաջ ես դնում:

— Չեմ քնիլ, ասա՛:

— Դէ անկաջ դիր, ասեմ,

— Լսում եմ:

— Էլելա, չի էլել մի աղջիկ ա էլել . . .

— Անունն էլելա Հերիքնազ. . .

— Չէ Հերիքնազ չէ, Թող ասեմ:

— Լա՛ւ, դէ ասա՛:

— Էդ աղջիկը ունեցել ա . . .

— Մի քուր, անունը Մարիամ.

— Լա՛ւ, դէ ասա,

— Էդ աղջիկն ունեցել ա մի պառաւ մէր . . .

— Էդ Գիւլլուզարն ու իրան աղջիկն են, իմացայ, իմացայ . . .

— Էլ չեմ ասիլ, ականջ չես դնում, քեզ պէտք է պատժեմ . . .

— Հը՛, դաբանչէն կշտիս ա, հա՛ . ,

— Էդ ինչ դաբանչաունիս դու, որ էդքան պարծենում ես, ես քու ձեռքիցդ պէտք է խլեմ:

— Խելօք կը կենա՞ս, թէ չէ, խօսեց վերջապէս Արզումանը:

— Հա, հա, հեռացիր, հիմի Մարիամը դուս կը գայ:

— Չեմ հեռանալ, մինչև չասես, սիրում՞ս ինձ թէ չէ

— Դէ Թող, լաւ:

— Չէ, պիտի ասես:

— Արզուման ջան, Թող, հոգուդ մատաղ:

— Ե՛ս քեզ մատաղ, ես: Ասա միանգամ. „քեզ սիրում եմ" էս սահաթիս Թողնեմ:

— Ինչի՞, զօռով ՞ես, չեմ սիրում:

— Բաս հիմի կը Թողնեմ, իմացայ . . . տեսնում եմ, որ ինձ չես սիրում: Արզումանը խռովածի պէս եղաւ և ուզեց Թողնել Հերիքնազին: Բայց հիմի էլ Հերիքնազը ըստ իւր կարգին չԹողեց նորան և երկու ձեռօք փաԹաԹուեց շլինքին: Արզումանի սիրտը այնպէս շարժուեցաւ, որ քիչ մնաց լաց լինի:

— Էլ. ինչի՞ ես հարցնում. դու չես գիտում, որ սիրում եմ քեզ: Որ չը սիրէի, քեզ ով կարող էր էս տեղ ներս Թողնել, ասաց Հերիքնազը և համբուրեց Արզումանի ճակատից:

— Բաս ինչի՞ չը վեր կացար էլախտ, որ քեզ կանչեցինք:

— Ամանչեցի. . .

— Ամանչեցիր, այ Թէ ամաչեցիր. . .

— Դէ լաւ, Թող հիմի

Մարիամը լսելով, որ սոքա իրարու մէջ խօսակցութիւն են բաց արել, գիտութեամբ մոլ էր անում տանը, որ չը գայ և սոցա խօսակցութիւնը չը խանգար է, բայց տեսնելով, որ ջահիլները շատ են շարութիւն անում, դուրս եկաւ, որ խելօքացնէ նրանց.

— Էդ ի՞նչ քաղցր զրիցի մէջ էք, Ա՛րզուման: Ա՛խչի Հերիքնազ, չես ամանչում, ինչի՞ ես խօսում:

— Բա ինչի՞ է ինքը խօսում:

Տղի ադաթն է, կըխօսի, աղջիկը պէտք է չըխօսքան կենայ:

— Ինչի՞, ես ի՞նչ մեղաւոր եմ, որ Աստուած ինձ աղջիկ է ստեղծել: Էլ էս լեզուն ինչի՞ համար է, որ չբիւսեմ:

— Լսո՞ւմես, Արզուման, ի՞նչ է ասում մեր աղջիկ պարոնը:

Շատ ըղորդ է ասում, ես ու իմ Աստուածը:

— Հիմի կը դրստես, մարդոց խասիաթը էդպէս է: Հիմի սա սուտ էլ որ ասի, քեզ ըզ. . . .

Ցանկապատի դրան թխթխկոցը Մարիամի խօսքը դանակի պէս կտրեց:

— Շամիրն է. Ա՛րզուման, շուտ արա՛ հեռացիր, թէ չէ գլխներիս փիս բան կը գայ: Այս ասելով ճրագը հանգցրեց Մարիամը: Մթնից օգուտ քաղելով՝ Արզումանը մի վերջին համբոյր էլ տուաւ իւր հերիքնազինու իսկոյն հեռացաւ:

——

Ե.

Մարիամը դեռ էս դուռը բաց չարած փեսայու այցելուի հետքերը աշխատեց ոչնչացնել: Հաղորդը, միսը թագցրեց քունջու պուճախներումը, կրակը անթեղնեց և ճրագը հանգցրեց: Վերջապէս դուռը բացուեցաւ, Շամիրը ներս մտաւ, ինքաւ ձիուցը, վեր բերաւ խուրջինը և սկսաւ ձին ման ածել հայաթումը: Այդ երթևեկելու ժամանակ մի ոստիւնի ձայն հասաւ նորա ականջին: Զափարի չորացած խիուշը ճրթճրթալով

իմացուց Շամիրին, որ մի ծանր ոտք իրան ճնշեց վերևից:

Աստուած մի՛ արասցէ, որ մարդ խայնութեան կրքով վարակուած լինի: Չկայ ոչինչ ցաւ, ոչինչ ախտ, որ դրա չափ հալումաշող լինի մարդու հոգին, ինչ ասես, որ այդ բոպէին չըմտածեց Շամիրը, որ առանց այդպիսի շարժառիթի էլ միշտ երևակայում էր ինք իրան, որպէս թէ իւր կնիկն իրան անհաւատարիմ է գտնուել, որպէս թէ ինքն իրան աչքովը տեսել է ամեն բան, սկսում էր պռոշները կծոտել, ատամները կրճտացնել: Մի մարդ, որ առանց որ և իցէ պատճառի այսչափ կասկածոտ, այսչափ խային ու նախանձոտ լինի, ինչ կը լինի նորա դրութիւնը, եթէ երբ և իցէ իւր երևակայութիւնը իրականի փոխուած տեսնէ:

,, Ճրագը վառուած էր, ինչո՞ւ յանկարծ հանգաւ, ո՞վ պիտի լինի եարաբ էս եկողը: Ախմախ, ախմախ, Շամիր, գլխին զարկելով՝ բացագանչեց Շամիրը: Ես ինչի՞ թխկթխկացրի, ինչի՞ փախցրի որսս: Այսպէս շարունակ քանի մի ժամ սկսաւ երթևեկել և մռթմռթալ ինքն իրան:

Մարիամն իմացաւ, որ իւր մարդն մի բանի հոտառել է, և սկսաւ հարց ու պատասխաններով իւր դատավճիռը յօրինել: Հերիքնազը կատաղում էր ինք իրան և անմեղութեամբ երևակայում էր, որ եթէ բանը դէպի վատը երթայ, ինքը կասէ ճշմարիտը և կը սպառնայ անգամ Շամիրին. թէ ինքը մի տղայի սիրել է և նորան է ուզում երթալ, ուրեմն նորա կասկածները ու միջամտութիւնն այստեղ աւելորդ է բոլորովին:

Մարիամը տեսաւ, որ մարդը շատ է ուշանում

մտածեց որ իւր յարաբերութիւնը սովորականէն չըփոխէ և ստիպէ նորան ներս գալ։ Գնաց ձին առաւ ձեռքիցը, ասելով՝ քանի ման ածես . . . Մարիամը ձին տարաւ գոմը։ Շամիրը մնաց մի առ ժամանակ տեղն ու տեղը փնտացած։

Թարաքամի շունը քաղաք մտած ժամանակ պոչը փորի տակն է ձգում և այնպէս կուչ գալիս, որ տեսնողն ասում է սորա պէս խեղճ ու վախկոտ արարած չը կայ աշխարհիս երեսին։ Բայց եթէ այս միևնոյն շանը տեսնես իւր սովորական տեղը, իւր ոչխարի մօտ, իւր տիրոջ տան առաջև, բոլորովին այլ հասկացողութիւն կը կազմես նորա մասին։ Պոչը չամբար է անում, դնում մէջքին, և այնպէս է բոլթա տալիս վեհանձն առիւծի պէս, որ թաւադի որդին անգամ տեսնելիս կը նախանձի նորա նազաշարժութեանը։ Փորձ փորձիր ահա այս տեղ մօտենալ նորան և դու կը տեսնես այսուհետև, թէ ի՞նչ գազանի հետ գործ ունիս։ Այն քաղաքացիքը, որոնք քաղաքի մէջն են ճանաչում գիւղացոց, շատ սխալ գաղափար են կազմում նոցա մասին։ Նոքա այստեղ միայն խեղճութիւն եւ յիմարութիւն են երևցնում, ուրիշ ոչինչ, և այդ են տեսնում միայն քաղաքացիք և աւելի խղճում կամ արհամարում։ Չեն կարծում որ նոքա էլ են մարդիկ և իրանց ունեցած բոլոր կրքերը նոցա մէջ ևս կայ և այն չափազանցութեամբ։ Ո՞ր քաղաքացին կարող էր հասկանալ թէ Շամիրն ի՞նչ գազան է, բայց նա այժմ իւր տունն է հասել, քաղաքում ներս քաշած պոչը այստեղ չոբանի շան պէս չամբար է արել, ուզում է հասկացնել, որ ինքն է այս տան տէրը, ուզում է իւր

տղամարդութիւնը ցոյց տալ։

Շամիրը մեր բարեկամ Փրէյդումի յիշած Դիզակու արջերիցն էր։ Նկել էր Վրաստան, որպէս թէ մարդ դառնալու, բայց այնպիսի մի գիւղի մէջ էր ընկել, որ իրանք կարօտ էին դեռ ևս մարդանալու։ Մի բուդալ տղայ էր Շամիրը երբ որ եկաւ այս գիւղը և Մարիամինց տանը նոքարութիւն էր անում մի քանի տարի։ Հանգամանքը այնպէս բերաւ, որ Յակովբի մեծ օջախը անշքացաւ և Մարիամին խորհուրդ տուին Շամիրին ուղղելու, որ տան-փեսայ դառնայ իրանց օջախի ճրագը վառ պահի և այլ այնպիսի պառաւական խրատներով Մարիամին պսակեցին Շամիրի վերայ։ Այս ամուսնութիւնը Մարիամի սրտով չէր, բայց մի անգամ որ ասաց հնազանդ եմ, էլ այնուհետև ոչինչ կարող էր անել։ Մի քանի ամիս որպէս նորապսակ սէր ցոյց տուաւ, և մեղրալուսինն անցուցանելուց յետոյ երբեմն փորացաւ, երբեմն սրտացաւ ունիմ ասելով, որ չէր յօժարում իւր ամուսնու հետ լինել։ Շամիրը ըսկզբումը հաւատում էր իւր կնոջ ասածներին, բայց հետըզհետէ դէպի ինքը սառնութիւն նշմարելով՝ սկսաւ մտածել, թէ իմ կինը ինձ չի սիրում, ապա ուրեմն մի ուրիշին է սիրում անպատճառ։ Այս անտեղի կասկածը հալում, մաշում էր Շամիրին։ Նա սկսաւ ամեն մի տեղ գնացած ժամանակը երկար միջոց նշանակել և ինքը միշտ վաղօրօք երևիլ երբեմն մէջ գիշերին, երբեմն փոքր ինչ ուշ կամ վաղ, որ իւր կնոջ մօտ մարդ գտնէ և կատարելապէս համոզուի իւր կասկածանաց մէջ. բայց երբէք չը յաջողեցաւ նորան այդպիսի մի բանի հետք նշմարել։ Եւ այս անյաջողութեանց համար

փոխանակ ուրախանալու, փոխանակ խոստովանելու նորա անմեղութիւնը, բարկութիւնն աւելի էր գալիս, թէ ինչու իւր բոլոր ճիգն ու աշխատանքը 'ի զուր են անց կենում: Սորա համար միշտ առիթ էր փնտրում Մարիամին ծեծելու, և այդպիսի առիթներ էն քիչը շաբաթը միանգամ գտնում էր, բայց սորանով ոչ միայն չգրաւեց Մարիամի սէրը, այլ աւելի ևս զզուացրեց նորան և սաստկացրեց նորա ատելութիւնը: Այս անգամ ահա որպէս թէ յաջողեցաւ իրան վերջապէս մի բան նշմարել, բայց ինչպէս սկսէ գործը, ոչ ոքի երես չտեսաւ, մտածեց որ լռէ մի առ ժամանակ և լռեց: Բայց վայ այն լռելուն, որ սա լռեց: Միայն արտաքուստ էր այդ լռութիւնը, իսկ 'ի ներքուստ տանջում մաշում էր ինք իրան զանազան ցնորքերով: Ներս գնաց վերջապէս Շամիրը և լուռումունջ շնթռուկեց իւր հոմար գցած տեղումը:

—

Զ.

Արզումանը գնաց: Միւս օրը հախսը իրանն էր: Տղայոց մօտ հասաւ թէ չէ, զարթացրեց նրանց, թէ եզինքը վեր են կացել, կը ցրուին կը կորչեն, առաւօտեան ման կը գանք, էլ չենք գտնիլ: Առաւօտեան արշալոյսը երևաց թէ չէ, հաւաքեցին եզները, ականեցին ու իւրաքանչիւր գութանի եզները ջոկջկելով տարան լծելու:

— Ա՛ղզուման, ո՞ր տափդ պիտի գնանք, ասաց մանչկալը այնպիսի բարձր ձայնով, որ կարծես Արզումանը իրանից կէս վերստ հեռու էր: Գիւղացիք, մանաւանդ այս գիւղացիք սովորութիւն ունէին խիստ բարձրաձայն խօսելու: Այսպէս դու կըտեսնես մի տան օջախի բոլորի շուրջը նստած քանի մի անտաշ հսկաներ, որոնք մէկմէկու հետ այնպէս են խօսում, որ կարծես նոցա զրուցընկերը իրանց մօտ չէ նստած, այլ կամ կարին է կամ մի այլ սենեակում միջնապատով անջրպետած իրանցից, կամ թէ հայերէն չիմանաս, կը կարծեն թէ սոքա չէ թէ խօսում են, այլ կռվում են, և մի երևելի վէճ կայ իրանց մէջ: Այժմ երևակայիր, թէ խաղաղ ժամանակը որ այսպէս են, կռուի ժամանակն ինչպէս կը լինին ուրեմն: Ինչպէս կուզես, այնպէս համարէ. որքան էլ որ չափազանցութիւն տաս բանին դարձեալ իսկական ստուէրը կը լինի: . . .

— Վերի հողերը, ճաղարանց տափը, պատասխանեց Արզուանը աւելի մեղմ և տխուր եղանակով:

— Հը՛մ . . . գիշերս կռվի էրազ եմ տեսել. . . Ասում են էս գիշերուայ էրազը օրը կը կատարի. . . .

— Էրազ էլ որ տեսած չը լինէիր կուլն ըլնելու էր անպատճառ:

Հիմի գնանք, ինչ որ ըլնի, կը լինի . . .

— Գնանք: Մանչկալը հրամայեց և գութանն ըսկսաւ ճլվզտալով երբմիշ ըլլալ դէպի ճաղարանց տափը:

Գութանը տեղ հասցրին, և հալու հինգ վեց ակօս էին արել, յանկարծ գիւղի մէջ մի շփոթ ընկաւ:

— Ա՛դա, Մարտիրոս, Կիրակոս, հանէք, մեր տա-

վը վարումն։ Մէկ տեսէք էդ ոՀվա, էդ աչքերն արնով լցուած, մեծ թիքէն անկաջը թողեցէք, ասաց մի թէև ալէոր, բայց բաւականին ժիր ու առոյգ մարդ, որ ճաղարանց տան նահապետն էր թաթոս անունով։

— Էլ ոՀվ պիտի ըլի, Արզումանն ա։ Բա չը լսեցիր էրեկ, որ քոխվիցը տափ էր ուզում, նա էլ մեր հողը նշանց տուաւ թէ գնա վարի՛ր, ասաց կանչուած երիտասարդներից մինը այսպիսի եղանակով, որ զրգռող էր բանը քան թէ խաղաղացնող։

— Տօ ես քոխվի . . . Տօ հասէք, տղամարդիկ չէ՞ք . . . Ես գող Արզումանի համար եմ փուշ կըտրել, տակուի հանել, քարեր հաւաքել, խամհատել, որ նա գնայ էս օրուան օրը իմ մուլքը ձեռքիցս խըլի՞ . . . Տօ հասէք դրա . . . . . .

Այսպէս պատկառելի ծերունին ինչ որ բերանն եկաւ, գուրս թողեց և տասը քսան բռի արջերի խըրախոյս տալով՝ ուղարկեց Արզումանի դէմ։ Բոպէ չանցած տեղ հասան, ըստ որում չէին քայլում, այլ վազում էին, կարծես առջևները փախչող կար, պէտք է բռնէին։

— Հօ . ՛ . հօ։ Ո՛ն արէք տղէք, գոչեց իւր սովորական ձայնով մաՀկալը։ Ա՛րզուման, էս արջերը մեզ վրայ են գալի գլխիդ ճարը տես։ Արի դուս գցենք գուլթանը, ասենք ախպեր, ձեզ ըլի, չենք ուզում, թաք ըլի մի արուն չանէք ըստեղ։

— Յետոյ էս փափախը գլխիս հարամ չի՞ ըլի, էլ ինչ երեսով պէտք է մանեմ գիւղը, որ մի քանի թաղի թուլա ինձ պէտք է վախացնեն։ Տուր ինձ էդ սըրբիչը, ասաց Արզումանը բարկանալով և մաՀկալի ձեռից առնելով սրբիչը, որ մի հաստ դագանակ է ծայրը ակշաՀև երկաթ հագցրած։ Մի կատաղութիւն եկաւ քաջ երիտասարդի վերայ, ջանն սկսաւ դողդղալ կոկչող փահլեվանի պէս և այնպէս էր զգում այս բոպէին ինքն իրան, որ ոչ թէ քսան, այլ հիսուն մարդ չըպիտի կարողանան հովութիւն տալ իւր տաքութեանը։

Տափատէրները հասան թէ չէ, գուլթանի եղները ակօսից հանելով դուրս քշեցին հողիցը և գուլթանը գցեցին քարերի ու փշերի մէջը։ Հնար չեղաւ այստեղ բան հասկացնելու, ամենքն էլ սկսան գոռալ, ամենքն գոչել, մէկը միւսի խօսքը չէր լսում։ Եղան էր, որ վերայ էր գալիս սորա նորա գլխին, էլ բըհիր ասես դանակ ասես, չոմբաղ ասես, մահակ ասես, նորեկների կողմից իջնում էր սորա նորա գլխին, սորա նորա թիկունքին։ Հոտատները մի մի ճիպոտից աւելի բան չունէին, իսկ դորանով էլ ոչինչ չէին կարող անել, ճարահատեալ փախան, որ իրանց անձէն գլուխը ազատեն։ ՄաՀկալի գլուխը վաղուց արդէն կիսել, վեր էին գըցել ակօսի մէջը։ Խեղճ կենդանիները, այն անբան եզ ու գոմէշներն անգամ չազատուեցին կոշտ մահակների հարուածներից։ Բայց ի՞նչէր անում այս միջոցին Արզումանը։ Նա սկզբումը սկսաւ իւր ձեռի սրբիչով միայն ինքը զինքը պաշտպանել, և աշխատելով հասկացնել նրանց, թէ ի՞նչ իրաւունքով է վարում այդ հողը բայց տեսաւ որ աչքերն արնով լցուած է, ոչինչ չեն ուզում լսել, մանաւանդ երբոր տեսաւ իւր մաՀկալի կիսաշունչ ընկնիլը սրփիչի զօրութիւնը պաշտ-

պանողականից յարձակողականի դարձրուց և մի քանի բոպէի մէջ բոլոր եկողները վեր թափեցան միայն մէկը կարողացաւ իւր գլուխը պրծացնել և գիւղը հարայի վազել: Գիւղից նոր նոր մարդիկ եկան աւելի անտարբեր հոգով, բայց էլ ի՞նչ օգուտ, ինչ որ լինելու էր, եղել էր: Երեք մարմնի մէջ այլ ևս հոգի չը կար, մէկն հոգեվարք էր և միւսներն էլ վտանգաւոր դրութեան մէջ: Հայհոյանքն ու կռիւը սուգի ու շուանի փոխուեցաւ: Գեղից սայլեր բերին և իրանց քաջերին տարան, որին սաղացնելու, որին թաղելու:

—

Է

Կարելի է արդեօք նկարագրել այն ծերունի մօր դրութիւնը, որ այս բոպէիս իմացաւ թէ իւր միւնուճար որդին, իւր աչից մուրազի վրայ եղող Արզումանը այնպիսի մի փորձանքի է պատահել, որ նորա տեսութիւնից յաւիտեան պիտի զրկուի:

Խեղճ պառաւը գութանաւորի համար առաւօտեան կերակուրը բերելիս ճանապարհին տեսաւ, որ շատ մարդիկ են վազվզում դէպի իրանց գութանը, սկսաւ կասկածել թէ էս ի՞նչ է պատահել արդեօք, չըլինի՞ իւր երեխայի գլխին մի վատ բան է եկել: Պառաւ Շողակաթը մի տարօրինակ կասկածոտ բնաւորութիւն ունէր: Ամեն մի անակնկալ փորձանք պատահած ժամանակ միշտ իւր Արզումանին էր միտը բերում թէ նա էլ էնտեղ չէ՞ր արդեօք, չը լինի՞ նրան էլէ մի բան պա-

տահել: Երբոր լսում էր այս ինչ գիւղը մարդ են սպանել, այն ինչ տեղը մարդ է խեղդուել, մէկը ձիուց կամ ծառից վէր է ընկել, մէկը սէլի տակովն է էլել, մէկին շունը կծել է, մէկը վարազի բերանն է ընկել և այլ ինչ և ինչ այսպիսի մի բան, անդադար ախ ու վիշ էր անում թէ չլինի՞ իմ Արզումանն է, և այսպէս վարաման մէջ էր լինում մինչև Արզումանի գալը: Եւ ի՞նչ կը լինէր որ այսպէս չը լինէր: Քանի՞ քանի անգամ խեղճին բօթու էին տուել դրացի կանայքը խմբովին տունը լցուելով և մէկէն ի մէկ իրանց օռնոցն սկսելով, որ շատ անգամ ողջ մնացողին անգամ մահուան պատճառ է լինում: Ութը որդի էր մեծացրել խեղճ պառաւը, որոնցից միայն մինն ունէր այժմ: Միւս եօթը եղբարքը բոլորեքեան քսան — քսաներկու տարեկան ժամանակն էին մեռել, բայց բոլորն էլ փորձանքի հանդիպելով. ոչ մէկը իւր բնական մահով, մի որևիցէ տկարութեամբ չէր մեռել, ոչ մէկին մի սառը ջուր չէր տուել վերջին անգամ իւր մայրական ձեռքով:

Խեղճ պառաւը ճանապարհի մէջ տեղը նստեց, որ խելքը գլուխը ժողովէ և մէկ լաւ իմանայ, թէ էս ինչ բան է: Անց ու դարձ անողներից ոչ ոք նրան պատասխան չը տուաւ, մինչև մօտեցաւ մեռելոց սայլը, որոց չորս կողմը պատած մարդոց լաց ու կոծի աղաղակը դմբդմբացնում էր մօտակայ սարերն ու ձորերը: Ծերունի մայրը որքան որ կասկածոտ էր, այսուամենայիւ չէր կարող կարծել, որ երկու ժամու միջոցում այնպիսի մի դէպք լինի պատահած, որ իւր միւնուճար որդին զրկէր իրանից: Յուղարկաւորներից մինը,

որ Արզումանի ազգականներից էր, մնտեցաւ պառաւին և սկսաւ մի առ մի հասկացնել բանի էութիւնը աւելի խոհեմ կերպով, վերջումը աւելացնելով՝ որ Արզումանին չստիպէ տուն գալու, ըստ որում եկածին պէս կրբռնուի:

— Բաս էլ չը պիտի՞ տեսնեմ ես իմ որդու երեսը:

— Կը տեսնես, ոմ է ասում չես տեսնիլ, բայց հիմի հարկաւոր չի տեսնել: Սպասիր մութն ընկնի, էն ժամանակը . . .

Պառաւը, որպէս կայծակից ընդհարուած, տեղն ու տեղը նստեց, թէ վեր ընկաւ, ինչպէս կուզես այնպէս իմացիր, և սկսաւ խենդի նման անբնական ձեւաշարժութիւններով մի առ ժամանակ մռմռալ, փոքր առ փոքր սաստկացաւ նորա կսկիծը և սկսաւ բառանչել, քան թէ գոչել իւր ձայնի բոլոր ուժովը — Արզումա՜ն Արզումա՜ն . . . Զարիազանցութիւն չի լինիլ, եթէ ասեմ հարիւրից աւել անգամ եղեւ այս անունը կրկնեց, մինչև ուժից ընկնելով, թալկացած մեկնուեցաւ ճամփի մէջ տեղը: Մօտը եղող երիտասարդը շալակեց կիսաշունչ պառաւին և տարաւ տուն:

—

Ը.

Գիւղի մէջ տուն չը կար, որ կամ սպանուածների կամ վիրաւորուածների ազգական չը լինէր, այս պատճառով ահա ամբողջ գիւղը սգի մէջ էր մտել:

Բրոի գեղեցիք, անսահմ կիրքերի տէր: Մի որ և իցէ կիրք երևցած ժամանակը մնացեալ բոլորը այնպէս են անյայտանում, որ կարծես նոցա հետքն անգամ չի եղած իրանց մէջ:

Խելքն է, որ տիրում է մարդուս կիրքերի վերայ և թոյլ չի տալիս մէկը միւսին յաղթելու, բայց այդ խելքից զուրկ են գիւղացիք: Տեսել եմ աչքովս, որ մայրը որդու առաջևը չոքած, հայրը ձեռները խաչած, կամեցել են իրանց զաւակի առաջքն առնել կռուի ժամանակ, բայց դորանով աւելի է կատաղել նա փոխանակ մեղմելու իւր բորբոքեալ ախտը: Անասնոց մէջ միայն կարելի է սորա նմանը տեսնել: Երկու ցուլ, երկու գոմէշ, երկու շուն կռուելիս, հնար չկայ միմեանցից անջատելու, որքան խփես այնքան աւելի կը կատաղացնես:

Մեր գեղացիք թէև առհասարակ կոպիտ մարդիկ են, բայց այսու ամենայնիւ սոցա մէջ ևս կայ սէր, բարեկամութիւն, հաւատարմութիւն, մեծահոգութիւն և այսպիսի գովանի յատկութիւնք: Միայն երկու բանի համար խաթրապահութիւն չը կայ, այդ երկու բանն է հողը և ջուրը, սոցա համար է լինում կռիւը սաստիկ և շատ յաճախ գործը հասնում է մարդասպանութեան: Բայց առ այժմ այս խնդրի վերայ չը խօսենք, որ շատ չը հեռանանք մեր բուն պատմութիւնից:

Մի կարի տխուր կերպարանք ստացաւ Դ. . . գիւղը, ոչ մէկի բերնում ժպիտ չէր երևում, ոչ մէկի երեսին ծիծաղ չէր գալիս: Մարիամն ու Հերիքնազը նոյնպէս մանակից էին հասարակաց տխրութեանը:

Մի կողմանէ թէև ուրախ էին, որ Արզումանը յաղթել էր թշնամիներին, միւս կողմանէ էլ լաւ զգալով, որ այդպիսի յաղթութեանց համար պատիժ ու աքսոր է մրցանակը, սաստիկ տխրում էին: Շամիրը դէպի ոչ ոք համակրութիւն չէր ցոյց տալիս, այլ միայն նախանձում էր, որ ինքը մասնակից չէ եղել այդ կռուին, որ իրան վերայ էլ խօսէին: Նա կարծում էր, թէ ինքը յաղթող կը հանդիսանար և այնուհետև ոչ ոք չէր համարձակիլ անհաւատարմութեամբ նայել իւր տան վերայ: Սպանուածներից երեքն ճաղարանց տանիցն էին: Թէպէտ սոքա քան զշուն շատ էին, քան զգէլ ուվարէս, բայց այսու ամենայնիւ երեք մեռել միանգամից տանը գտնուելով քարացրել էին Թաթոսին և չէր իմանում որի վերայ սգայ, որի գլուխը լայ:

Թաթոսի խղճմտանքը տանջվում էր: Նա սպանութեանց մասնակից էր համարում ինքն իրան, ըստ որում ինքն եղաւ նրանց զրդռողը, ինքն ուղարկեց նրանց: Բայց իւր անձը գերդաստանի մէջ արդարացնելու մտօք անիծում էր Արզումանին և հրամաններ էր հանում, որ նորան բռնեն անպատճառ և արդարադատութեան մատնեն: Քոխվան վաղուց արդէն այդ մասին տնօրէնութիւն էր արել: Սարդիկ էր ուղարկել տեղական իշխանութեանը իմաց տալու, որ գան ականատես լինին գործի հանդամանքին և վաղը միւս օրը իրան չը մեղադրեն: Կասկած չըկար, որ իշխանութիւնը գալուն պէս պէտք է բռնել տար Արզումանին: Արզումանի բարեկամներն այդ գիտէին, նորան աղաչեցին, որ փախչի: Այդ տեղից մօտիկ էր Խրամը, որ հազարաւոր մարդոց համար կարող էր անառիկ բերդի պաշտօն կատարել: Մինչև իւր թշնամիքը բռնելու մասին կը մտածէին, նա արդէն Խրամի զառիվայրից ցած էր իջել և ո՞վ կարող էր այլ ևս իմանալ, թէ ո՞ր քարափի կամ ո՞ր քարայրի մէջ է: Նոքա մտածեցին թէ երբ և ցցէ գիւղը կը մտնի, տեսութեան կրգայ իւր մօրը, ժամանակ միայն հնար կայ դուռը վերայից կողպել և ստիպել անձնատուր լինելու: Բայց մեռնողների ազգականները Արզումանին իշխանութեան ձեռքը ձգելու մտադրութիւն չունէին, այլ մտածում էին մի որ և ցցէ տեղ անզգոյշ և անպատրաստի գտնել և գաղտնի կերպով գիւլլախորով անել, որով և առնել իրանց արեան վրէժը: Բայց Արզումանը իւր անձի ապահովութեանը համար երկիւղ չունէր ամենևին: Նա առանց այս էլ տարուայ մեծ մասը թափառելով էր անց կացնում, երբեմն որսորդութեամբ և երբեմն գողերի հետ: Որտեղ մի ընկերութիւն կար գողերի, նրան յայտնի էր, որ տեղ մի փախստական կար, նորա ծանօթն էր: Բանի որ այդ փորձանքին չէր հանդիպել, նա նախանձում էր փախստականներին նրանց հետ ընկերութիւն արած ժամանակը եւ կասկածում էր, թէ մի՝ գուցէ սրանք իրանց աւելի քաջեն համարում, ըստ որում կարողացել են իշխանութեան ուշադրութիւնը գրաւել և իրանց անունը հռչակել ամբողջ գաւառի մէջ: Ես ինչ եմ արել, ասում էր ինքն իրան, մի քանի ձի եմ գողացել ջգրու, էն էլ հաստատ չը գիտեն, որ ես եմ գողացել: Այսպէս էր մտածում Արզումանը մինչև այս փորձանքի պատահելը, բայց հիմայ, երբ որ ճարահատեալ փախստականի տիտղոսը կամայ ակամայ իւր վերայ առաւ, որ սա լաւ բան չէ, մանաւանդ այն ժա-

մանակ երբ սիրել և սիրուել է սիւել: Գնած թէ արթուն միշտ Հերիքնազին էր տեսնում, որ արտասուալից աչքերով ասում էր նորան — էդ ի՞նչ արիր, Արզուման, նորա համար խլեցիր իմ սէրը, որ ինքդ չը վայելես և ուրիշներին չը թոյլ տաս վայելելու: Եօթն օրուայ չափ կարողացաւ Արզումանը հեռու մնալ իրանց գիւղեցը և ոչոքի աչքումը չերևալ: Նա գնաց իւր ծանօթ գողերի մօտ, որոց պատմելով իւր գլխի անցքը, աւելի զրաւեց նրանց սէրն ու համարմունքը, բայց այս հանգամանքը ամենևին չըմխիթարեց իւր ախրած սիրտը, չըկատարեց իւր սրտի պահանջմունքը, չը յագեցրեց իր սիրոյ քաղցը . . .

Մէկ գիշեր մեր փախստականները Լիճան Խրամի աւերակ վանքերի մէկի մէջ անձրևի պատճառով, եւ ուզումէին գիշերը այնտեղ անց կացնել: Արզումանը ուզեց օգուտ քաղել գիւղի մօտաւորութիւնից և երթալ իւր Հերիքնազին տեսնելու: Երբոր փոքրինչ հանգարտուեցան, Արզումանը հրաման ուզեց աւազակապետից, որ երևելի Դալի Նարին էր:

— Դեռ վաղ է, էդպէս շուտ գնալ, պատասխանեց թուրքը: Թող փոքր ինչ հանգարտուին գեղացիք, մեռելներին մոռանան, սաղերի համար խղճան, էն ժամանակը գնա, բան չեմ ասել: Բայց հիմի ձաղարանց Թաթոսը ո՞վ գիտէ գեղի ամեն քնջնումը մի մի պահապան է դրել քեզ համար:

— Որ իմանամ թէ կտոր կտոր կանեն, ճար չը կայ, պէտք է գնամ, պնդեց Արզումանը: Էս էլ ասեմ ձեզ, որ ես մեր տունը չեմ գնալու: Պահապաններ որ լինին մեր տան մօտերքին կը լինին:

— Լաւ, ինչպէս ուզումես, էնպէս արա: Թէ որ կուզես, մեր աղերանցից էլ մի երկու ձիաւոր թող գան գեղի տակին թաղ կենան, թէ որ բան է մի փորձանք պատահելու լինի, օգնութեան հասնեն:

— Էդ էլ չի հարկաւոր, ես մենակ կերթամ, միայն ձեր որդի ձին որ լաւն է, էն ինձ տուէք:

— Իմ սև ձին քեզ փէշքէշ, ասաց աւազակապետը: Սևը լաւ է, գիշերն էլ մութն է, ոչոք չի տեսնիլ: Միայն ձիով չմտնես գեղը, որ ոտի ձէնը չը լսվի, շուն ու մարդ չը հաչի վրէդ . . .

Այս խօսակցութեան ժամանակ յանկարծ մի մարդ ներս մտաւ և մի խումբ մարդկերանց հանդիպելով՝ տեղնուտեղը մեխուեցաւ: Այս մարդը որքան որ ինքը վախեցաւ, միևնոյնքան էլ մեր քաջերին վախացրեց, որոնք իսկոյն հրացաններ ձեռք առան և ոտքի կանգնելով դոչեցին

— Թարփանմա, վուրդրիս, (չը շարժիս, խփեցինք):

Նորեկը ուրիշ ինը հրացանների խողովակների պսպղալը իւր դիմաց տեսնելով, քիչ մնաց պիտի համբանար, բայց մէկ էլ խելքը գլուխը ժողովելով հասկացրուց, թէ ինքը մի որսորդ մարդ է և բոլորովին անգիտութեամբ մտաւ այս տեղ: Սորա ձայնից Արզումանը ճանաչեց, որ Շամիրն է: Աւազակապետի ականջին քշփշաց, որ Շամիրին դուրս չթողնեն մինչև առաւօտ: Բաւականին մութն էր, և անհնարին էր կերպարանքից ճանաչելը: Շամիրին հրաւիրեցին նստել, և ասացին իրան, որ չեն կարող թողնել մինչև առաւօտ, ըստ որում չեն կարող հաւատալ նորան որպէս ան-

ծանօթ մարդու։ Շամիրը ասաց, որ ինքն էս միտք չունի առաւօտ երթալու և աւելացրեց, թէ ես մի քաջաէծ եմ սպանել և բաւականին միս ունիմ պարկիս մէջ, եթէ կամենաք կրակ վառեցէք խորոված անենք։

Շամիրի փորը աւելի նորա համար էր ցաւում, որ այս մարդոց երեսը լուսով տեսնէ, և խիստ փափագում էր Արզումանին սրանց մէջը տեսնել, որ միւս օրը երթայ գիւղումը պարծենայ, թէ ինչպէս ինքը մի գիշեր կարողացել է աւազակների հետ անցկացնել եւ նոցա մէջ տեսնել Արզումանին։ Աւազակները հրամայեցին Շամիրի առաջարկութիւնը կատարել. նոքա առանց այս էլ, մտադիր էին կրակ վառելու, ըստ որում բաւականին թրջուել էին, հարկաւոր էր իրանց շորերը ցամքացնել։ Բայց Շարմիրը իւր նպատակին չը հասաւ։ Արզումանն արդէն գնացել էր և այնպէս գնաց, որ Շամիրն ամենևին չիմացաւ, որ նրանց մէջից մի մարդ պակսեցաւ։

Ասած է, ,, գողն ի՞նչ կուզի — մութը գիշեր ", բայց մեր Արզումանին որ հարցնէիր այս բոպէիս, թէ ի՞նչ կուզես, կասէր — Շամիրի բանտարկուելը։ Մութը գիշերովը նա այնքան չէր ուրախ, որքան այդ յաջող դէպքովը։ Նա եօթն օր սպասել էր միմիայն Շամիրի երկիւղից, թէ ինչպէս գնայ Հերիքնազի մօտ, Շամիրը տանը կը լինի, և շատ մտածելուցը այս միակ հընարքը գտաւ միայն, որ երթայ ուղղակի Շամիրի մօտ և նորա պաշտպանութիւնը խնդրէ գիւղ մտած ժամանակը, որով և միշտ միջոց կունենայ իւր Հերիքնազին տեսնելու։ Բայց հիմի բանն այնպէս եղաւ, որ իւր առաջուան մտադրութիւնն ուրիշ օրուան թողնելով՝ լաւ համարեց օգուտ քաղել բարեպատեհ դիպուածքից։ Քանի որ այս փորձանքին չէր հանդիպել Արզումանը, մտքումը դրել էր Շամիրին մօտենալ և նորա հետ քանի մի օր որսորդութեան երթալով բարեկամանալ ու խնդրել նորանից Հերիքնազի ձեռքը, բայց հիմի, երբ հանգամանքը ուրիշ կերպարանք ստացաւ, էլ ի՞նչ առաջարկութիւն կարող էր անել։

Մարիամը նոյնպէս յուսով էր, որ մօտ օրերս ընշանադրութիւն կը լինի և ինքն էլ ազատուած կը լինի իւր ամուսնու անտեղի կասկածներից, բայց հիմի կարող էր ասել մի թէ որ երբ և իցէ ունեցել է այդ մտադրութիւնը և մինչև անգամ պատիւ է ունեցել մին անգամ էլ կիշեր ժամանակ հիւրընկալել նորա։ Մի կողմանէ ուրախ էր Մարիամը, թէ լաւ է որ նշանուած կամ պսակուած ժամանակը չը հանդիպեցաւ այդ փորձանքը, ուրեմն հիմի կարելի է ուրիշ վնասայ գտնել Հերիքնազի համար, բայց միւս կողմանէ իւր սէրը այնքան շատ էր դէպի Արզումանը, որ լաւ էր համարում նա անուանով միայն փեսայ համարուի, քան թէ մի ուրիշը ստուգապէս։ Հերիքնազն էլ այս համոզումն ունէր։ Հերիքնազը Արզումանին պատահած գիշերից սկսեալ, ձեռները ստէպ ստէպ շրթունքներին էր մօտեցնում։ Նա կարծում էր թէ միայն իրան է յայտնի, թէ որքան քաղցր է սիրականի շրթունքների դիպած տեղերը։ Նա համբուրում էր իւր ձեռները։ Համբուրում էր նորա բերած խնձորները և այնպէս անարատ պահպանում։ Չէր ուզում ուտել, որ իւր սիրելու յիշատակը աչքէն չը հեռանայ։

Թ.

Երկու քոյրերը դարձեալ զգուելէին միմեանց այն միևնոյն սրահի անկողնումը, որոյ մէջ պատահել էր առաջին անգամ Արզումանը։

— Հերիքնա՞ղ.

— Հը։

— Ա՛խչի չես քնե՞լ։

— Քունս չի տանում։

— Ինչի՞ չի տանում։

— Չի տանում էլե՛. համ զարթուն եմ, համ աչքերս խփած էրազներ եմ տեսնում։

— Ի՞նչ ես տեսնում.

— Ինչ եմ տեսնո՞ւմ.

— Հա՛.

— Ո՞վ գիտէ, ինչ ասես տեսնումեմ։ Միթամ ես աղի շորեր եմ հաբել, եարաղ, ասբաբ կապել վըրէս ու մի թռչնակ ձիու վրայ նստել եմ։ Մի սարի գլխի չորսդաթանի մի քոշկուսարահի եմ շինել տուել, չորս կողմովը բերդի նման պատ եմ քաշել տուել, մի մեծ երկաթէ դուռն եմ անել տուել վրէն. երկու ասլան էլ կապել տուել դռանը, որ իսկի մի մարդ էլա չը կարենայ ինձ մօտ գալ. . . յետոյ շատ բաներ եմ անում, սաղ աշխարհքը դողում է իմ ձեռքին . . .

— Ով որ դալիս է քեզ ուզելու գլուխը կըտրել ես տալիս, էնպէս չի՞։

— Մմենակ էդ չեմ անում . . .

— Արզումանին տանումես քեզ մօտ . . .

— Չէ։ Նրան բռնումեն։ Մի մէյդան տեղ սնեբ են կանգնացնում, ուզումեն էնպէս խեղդեն. ինչպէս որ Մամմադ Ալուն խեղդեցին, մի՞տդ է։ Մարդիկը, կիտուելեն չորս կողմը դիպ էլ թամաշայ են անում, ոչով սիրտ չի անում ձէն հանի, կամ օգնի։ Ես նստում եմ իմ թռչնակ ձիուն, մի ձեռիս դալխանս եմ բըռնում մէկէլ ձեռիս թուրս. ասլաններիս էլ առաջս եմ գցում, ընկնում էդ մարդկերանց մէջը, ոչ մէկը չի ազատվում ձեռիցս, որին ես, որին ձին, որին իմ ասլանները, դիփունանցն էլ ջարդում կոտորումենք։ Ճաղարանց թաթոսի քեալլե միջին որ խփումեմ թրովս, ոչխարի պէս շաղկումեմ, կէսը մի ասլանի բերանն է ընկնում, կէսը մէկէլի . . .

— Յետոյ մնումէ մենակ Արզումանը.

— Հա։ Նրա համար մի ուրիշ ձի եմ ըլում տարբած, եարաղ-ասպարով, Արզումանը նստումէ իր ձիուն, յետոյ գնումենք մեր քոշկուսարային . . . .

— Ով գիտէ էրազումդ էնց միշտ Արզումանին ես տեսնում։

— Ի՞նչպէս չեմ տեսնում։ Բայց տեսնումեմ թէ չէ, էնպէս ուրախանումեմ, որ էն սահաթը զարթնումեմ։

— Քու բանը շատ դժուար է։

— Վերաս ծիծաղումես, հա՞։

— Չէ, չեմ ծիծաղում, բայց Արզումանը քու նշանածդ չի. մի բանդ չի, նրա համար ինչի ես քեզ տանջում։ Աղջկայ ադաթն է հազար տղի համար կըասեն, մէկին կըտան։ Չիմի որ նա չելաւ ուրիշի չըպիտի ուզե՞ս։

— Մարիամ Ջան, որ մի բան ասեմ, հօ չես ծի-
ծաղել վերաս

— Ինչի՞ եմ ծիծաղում, ասա։

— Գիտես ի՞նչ կայ, ես մարդ չեմ ուզում, ես
սիրելեմ ուզում։ Ես որ տեսնում եմ Շամիրի կոպ-
տութիւնը, դա որ ինքն շահ ու սուլթան է համա-
րում, էնպէս բարկանում է վրէդ, էնպէս ծեծում, որ
կասենաս դու նրա եսիրն ըլես, իմ ջիգրն էնպէս է դա-
ւէս, որ սկսում եմ ատել մարդկերանցն էլ, կընկդե-
րանցն էլ։ Մարդկերանց էնդուր համար եմ ատում, որ
էդպէս կոպիտ արջեր են, մի անգամ դրանց երեսին
ծիծաղ չես տեսնել մի անգամ մի քաղցր խօսք չես
ըել . . .

— Կնկդերանցն ինչի՞ ես ատում։

— Ենկդերանց էնդուր եմ ատում, որ իրանք ի-
իրանց բանի տեղ չեն դնում։ Կասենաս իրանք էլ են
ուրախանում, որ էդպէս ծեծվում են ամեն օր։ Էն
օրը չէ՞ր ասում Հռոմը, թէ էն մարդն ի՞նչ մարդ ա,
որ կնդայ գլխիցը մահակը պակսացնի։ Հիմի հախը չի՞,
որ դրան օրը քսան անգամ ծեծե՞ն։ Ինչպէս չատէ
մարդ էնպէս կընկանը, որ միշտ ծեծուիլ է ու-
զում . . .

— Հիմի դիմի էլ հօ Հռոմի պէս չեն։ Շատերը չեն
էլեն ուզում ծեծուել, բայց ամենից շատ նրանք են
ծեծվում։Դեռ լսուած չի, որ Հռոմին իրա մարդը
ծեծած ըլի, դրա համար է, որ դա էդպէս մեծ մեծ է
բրթում։ Թող մի քանի անգամ թրխկացնեն դրա
գլխին, եղանը գլխին կոտրատեն, ոսկի տակ դցեն թաղ-
քի պէս հարեն. էն ժամանակն էլ չի ասիլ էդ խօս-

քը։ Հիմի քու ասելովդ ինձ էլ չըպիտի սիրես, նրա
համար որ ուրիշ կնկդերանց պէս ես էլ չեմ ձէն հա-
նում։

— Զէ՛, քեզ ինչպէս չըսիրեմ, որ Շամիրը զօռով
է, դու չես կարող նրան յաղթել։

— Մի վախի գիփունանց մարդիկն էլ Շամիրի պէս
զօռով են։ Բայց որ դու բոլոր մարդկերանցն ատում
ես, Արզումանին ինչի՞ ես սիրում, նա էլ մեր մարդկե-
րանցիցը չի՞, դեռ նրանցից էլ բեթար է։ Մեր մարդի-
կը մարդ չեն սպանում, բայց տեսար, նա մէկ օրու-
մը երեք չորս մարդ սպանեց։

— Արզումանը որ նրանց չսպանէր, նրանք պիտի
սպանէին նրան։ Ճաղարանք քան ըզշուն շատ են, քան
ըզգել ուվարէս։ Նրանցից երեքը սատկեցին, տեղն էլի
քսաներեք կայ, բայց նա իր մօր միանուճարն է։ Դրանք
ադքատ կոխոզ որ կասեն նրացից են։ Ինչի՞ էին դը-
նում կռիւ, նա հօ զօռով չէր վարում նրանց տա-
փը։ Ա՛խ. թէ ես կը լինէի Արզումանի տեղակ, նրանց-
ից մէկին էլա սաղ չէի թողնիլ։ Մենք քառասուն օ-
րավար տափ ենք ունեցել, ինչի՞ են խլել մեր ձեռիցը։
Մեր տափերի շատ փայը հիմի ճաղարանք են վարում։
Ինչի՞ խեղճացանք, հա՞։ Մեր Շամիրն ինչի՞ պիտի ա-
մեն օր սար ու քոլ ընկնի, ինչի՞ մեր տափերիցը մի
քանի օրավար էլ նրան չեն տալիս, որ նա էլ վարու-
ցանքով պարապի, իրա տանը նստի, էդպէս սար ու
ձորերում չմեծանայ, որ արջա կտրուել, էլ հետը չի
խօսվում, բայց որ մարդամէջա մանում, չի կարում
երկու խօսք խօսի, նրանք մարդավարի բաների վերայ
են խօսում, սա իրա ձորերիցն ա խաբար տալիս։ Էն-

գուր է ասում խեղճ Հոռոմն է, թէ մարդամիջի մարդը ըլի, հարիւր թուման պարաքս ըլի. . . Ա՛խ, թէ ես մոդրով կըլէի, ես եմ գիտում, թէ փիս մարդկերանց հախիցն ինչպէս կը գայի: Բայց հիմի մի խեղճ աղջիկ եմ, ինձ ո՞վ մարդու տեղ կը դնի:

— Ինչի՞, հէնց հիմի էլ, ով ասես քեզնից փախենում է: Էն օրը Շամիրն ինձ ուզում էր ծեծի, բայց դու որ աչքերդ վրէն չռեցիր, նա քու ահու դուրս գնաց տանից:

— Ես մաքումն շատ բան եմ դրել. դու համբերի: Ճաղարանց հախիցը ես պիտի գամ, դրանց քօքը ես պիտի կըարեմ: Թաթոսին պիտի թողնեմ մէնակ, որ իրա աչքովը տեսնի, թէ ինչպէս են իրա տղերքը մէկը մէկելի եղեւից գիւլլախորով ըլում:

— Դու էտէնց ասա: Ճաղարանց Թաթոսը մաքումը գրել է, որ քեզ իր տղի համար ուզի:

— Ո՞ր տղի.

— Մաղոյի.

— Պնչեմ Մաղոյի վրէն, նա ինչ շուն է, որ ես նրան մարդու տեղ դնեմ:

— Բաս միտքդ ինչէ: Դու հէնց ըղորդ ըղորդ մաքումդ գրել ես, որ ուրիշ մարդ չուզես:

— Աստուած էն օրը մահ տայ ինձ. . . . Երբոր դուք կուզէք զօռով կշտներիցդ ռադ անել, էն ժամանակը Աստուած ողորմած է:

— Լա՛, մի բեղամաղ ըլի, ես հանաք եմ անում: Ո՞վ կարող է քեզ ասել աչքիդ վերայ ունք կայ: Քանի որ ես սաղ եմ, դու մի՛ վախի. ում որ կուզես, ում որ կըսիրես, նրան կտամ: Բայց ես զարմանում եմ, որ դու էդպէս շուտ սիրեցիր Արզումանին:

Ես չեմ փանում Արզումանին, նա լաւ սրտի տէր է, նրա բոյ ու բուսաթը հազար Մաղոյի ածի, բայց հիմի նրա աստղը թռաւ, էլ նա լաւ օր չի ունենալ: Կարելի է թէ հէնց նա ինքը քեզ ասի, էլ չեմ կարող քեզ առնել, ուրիշ մարդ գտիր քեզ համար:

— Նա ինքը քեզ կասի, կրէնեց Հերիքնազը հառաչելով: Էդ չեմ հաւատում: Մենք նոր չենք սիրում մէկմէկու: Ինչոր խելքի եմ եկել, էն օրուանից էսը ես միշտ վարավուրդ եմ արել, նա մի օր էլա աչքն ինձանից չի հեռացրել: Ըղորդ է, չենք խօսացել իրարու հետ, բայց մեր սրտերը միշտ մէկմէկու հետ են էլել: Կուզես հաւատա՛յ, կուզես մի՛: Մարիամ, շատ անգամ բաղի կամ ջրի ճանփին մաքովս անց է կացել, թէ հիմի որ յետ մտիկ տամ, Արզումանին կը տեսնեմ: Ցետ եմ մտիկ տալի, երկուսս էլ կարմրել ենք մէկմէկու մտիկ տալով: Հիմի փորձանք էր, պատահեց, կամ կը բռնեն կամ կը բաշխեն: Քանի որ նա սաղ է, ես էլ կապրեմ, երբոր նա, Աստուած մի արասցէ կը մեռնի, ես էլ կը մեռնեմ: Աշխարհիս երեսին ոչով սաղ չի մնալու, մի օր էլել ենք մի օր պիտի մեռնենք, լաւն էն չի. որ արդար մեռնենք անթառամ պսակին արժանանանք:

— Դէ որ էնքան շատ է ձեր սէրը, որ մէկմէկու սիրա, մէկմէկու տեղ իմանում էք, աբա իմացիր, հիմի որտեղ կըլինի Արզումանը

— Դու ծիծաղում ես ինձ վերայ, ես գիտեմ. . .

— Չեմ ծիծաղում, քու ազիզ ա՛րեը, ես հաւատում եմ քու խօսքին: Ես հիմի նրա համար եմ հարց-

նում քեզ, որ իմ սիրան ասում է, հիմի որտեղ որ է Արզումանը կը գայ, դու ինչպէս ես կարծում

— Խեղճ աղջիկ, ինչի՞ ես յուսահատուել: Արզումանն էն պտուղը չի, որ էդպէս շուտ կորչի: Թէ որ քու մաքով նա էդքան վախկոտ է, էլ ինչի՞ ես սիրում նրան:

— Չէ՞ նա վախկոտ չի, բայց ո՞վ գիտէ: Ճաղարանց տղերքը մի մի թուանք առած նրա քամակիցն են ման գալիս . . .

— Մի՞ վախենար, ճաղարանց տղերքը գեղեցն են էդպէս հարբով դուս գալիս որ խալխին հաւատացնեն թէ իրանք շատ զօրաւոր են. բայց մի քիչ հեռանում են թէ չէ շուտ շուտ դէս ու դէն են մտիկ տալիս, որ իրանք չսպանուեն մի բաշ: Քնի՛, քնի՛ շատ մի՛ վիքը անի: Էրազումդ կը տեսնես Արզումանին, նա քեզ կասի հիմի ո՞ր տեղ է:

— Բաս ասում էիր հիմի կը գայ որտեղ որ է՞:

— Ես ի՞նչ գիտեմ, բալքի չեկա՞. ասաց Մարիամը և բարձրաձայն յօրանջեց: Այս յօրանջումը ապդելով Հերիքնազի վերայ, նա էլ իւր բերանը բաց արեց և օդի առատ հոսանք ներս քաշեց: Քնի հրեշտակը մօտեցաւ վերջապէս և իւր թևերի տակ առաւ հիւրի փարիներին:

—

Ժ.

Մարիամն ու Հերիքնազը քաղցր քնի մէջ էին՝ երբոր մօտեցաւ նրանց Արզումանը: Լուռ ու մունջ

նստեց անկողնակալի մօտ և չը ղեմիշեց նրանց զարթացնել: Մի քիչ կը նստեմ ու կերթամ, ասաց ինքն իրան. չը զարթացնեմ սրանց, մեղք են: Բայց ինչպէս բան անեմ, որ սրանք էդուց իմանան, որ ես եկած եմ էլել: Մտածեց որ մի թել կապի Հերիքնազի մատին: Տրեսի թելի ծայրիցը կտրեց և անցաւ Հերիքնազի կողմը: Հերիքնազը կիսով չափ բացուել էր: Արզումանը ձեռքը մեկնեց; Բայց ձեռքը ելեքտրական հարուած ստացածի պէս սկսաւ դողդողալ: Նա յետ քաշեց իւր կոշտացած ձեռքը և գլուխը մօտեցրեց, որ լեզուով կամ շրթունքներով վերցնէ Հերիքնազի քնքուշ ձեռնիկը: Բերանը բաց արաւ Արզումանը ու կամացուկ դրաւ Հերիքնազի թաթիկի վերայ: Նրա գլուխը ծանրացաւ, էլ չը կարողացաւ բարձրացնել: Հերիքնազը երազի այդ ժամանակ փոխեց իւր կերպարանքը. Նրան թվում էր, որպէս թէ մի ծառի տակ պարկած է մէջքի վերայ և փոքրիկ երեխայի իւր կուրծքի վերայ բռնած խաղացնում է: Երեխան թրթռում է իւր կուրծքի վերայ և ինքն էլ պապար պապար է երգում: Բայց հեռվհեռէ սկսաւ բեղարիլ, նրա շնչառութիւնը ծանրացաւ: Ուզում էր թողնել երեխային և գլուխը բարձրացնել, բայց չէր կարողանում: Նրա երազական տեսութիւնները սկսան փոյթ առ փոյթ փոփոխուիլ. նրան ճնշում են, խեղդել են ուզում: Վերջապէս կարողացաւ բղաւել Հերիքնազը; Արզումանը կայծակի արագութեամբ բաձրացրեց գլուխը և տեղը հանգարտ նստեց: Նա անկողնակալի գլխի կողմն էր, նրան չը նըշմարեցին:

— Քեզի, էդ ինչ էր, ինչի՞ ծիկայ տուիր. ասաց Մարիամը զարթնելով:

— Ոչինչ, երաշխաւոր էի, պատասխանեց Հերիքնազը, երեսը շարժելով դէպի քոյրը.

— Երեսդ խաչահանէ:

— Անուն հօր, և որդոյ և հոգւոյն սրբոյն ամէն խաչ, օգնեա՛ ինձ: Ամենակալ Տէր, թողս մեզս իմ: Այսպէս ինչքան աղօթք գիտէր, մրմնջաց Հերիքնազը և ամրապէս գդուելով իւր քրոջը, կրկին քնի մէջ մրաւ: Մարիամի քունը փախաւ էլ չկարացաւ քնել:

— Մարիա՜մ, քնած ես, թէ զարթուն, խօսեց վերջապէս Արզումանը:

— Արզուման դու ես. ասաց Մարիամը:

— Ես եմ, հօ չէք բարկանալ իմ գալուս վերայ:

Ա՛խ, էդ ի՞նչ ես ասում, Արզուման: Դու ի՞նչ գիտէիր, որ Շամիրը տանը չէ:

— Ես նրան տեսայ էս իրիկուն:

— Նա էլ քեզ տեսաւ:

— Չէ՛, նա ինձ չը տեսաւ: Էս դիշեր նա չի գալ, մնաց նաշխու վանքումը:

Ա՛յ որ լսեց Մարիամը, միամտեցաւ և խոկոյն վեր կացաւ տեղից, որ Արզումանի համար ընթրիք պատրաստէ:

Հերիքնազը մնաց մենակ դարձեալ Արզումանի հետ: Նա լսելով սրանց խօսակցութիւնը խոկոյն զարթեցաւ, բայց փոխանակ խնդալու և ուրախանալու մի խորը տխրութեան մէջ մտաւ:

— Հերիքնազ, քնած ե՞ս:

Հերիքնազը գլուխը բարձրացրեց:

— Ինչի՞ չես խօսում, ասաց Արզումանը, գլուխը դնելով Հերիքնազի կուրծքին.

— Ի՞նչ խօսեմ, ասաց Հերիքնազը և սկսաւ հեկեկալ:

— Ախչի դու լաց ես ըլում:

— Ասում են, քեզ պիտի բռնեն, ուղարկեն Սիբիր: Ա՜խ, ե. ե. ես կը. կը. կը մեռնեմ . . .

Մի վախիլ, հոգիս, ինձ ոչով չի կարող բռնել, ասաց Արզումանը և սկսաւ գլուխը շոյելով ճակատից համբուրել: Մի վախիլ հոգիս, ինձ չեն բռնել: Մի քանի ամիս անցնի, բանը կը հանդարտուի:

— Վա՜յ թէ էդպէս չըլի:

— Որ էդպէս չըլի, էն ժամանակ էլ ուրիշ բան կը մտածենք, հեմիկուանից ինչ հարկաւոր է դարդ անիլ: Էն ժամանակ քեզ վեր առնեմ կերթանք Օսմանլու: Էնտեղ Հայ-քրիստոնէք շատ կան, մի քաղաքում, մի գեղում կը կենանք, մեր գլուխը կը պահենք: Թէ որ բանն էսպէս պատահի կը ասա, որ տանեմ քեզ:

— Վրեզ հետ Սիրիր էլ կերթամ չէ թէ Օսմանլու: Կերթանք Ստամբօլ: Մարիամին էլ կը տանենք:

— Ի՞նչ ենք անում Ստամբօլը. կերթանք Ղարս, Արզրում, էս մօտիկ տեղերը: Բայց, Հերիքնազ, մի բան եմ ուզում ասել քեզ:

— Ասա՛:

— Ո՞վ գիտէ, աշխարհք չի իմանում թէ մեկէլ մարդ ինչ կը դայ գլխին: Թէ որ բանն էնպէս պատահի, որ երկար ժամանակ էլ չի տեսնենք մեկ մեկու, խօսք կը տաս ի՞նձ, որ մինչև իմ մահը չը լսես, ուրիշ մարդու չը դնաս: Էս նրա համար եմ ասում, որ դու աղջիկ ես, թէ-կուզ շատ էլ սիրելիս ընիս ինձ, էդ չեն հարցնի քեզ, զօրով կը տան մի աղի: Շատ էլ որ

հակառակուիս կը փախցնեն, ի՞նչ պէտք է անես։ Ես տղայ եմ, ինձ ոչով չի կարող զօրով աղջիկ տալ։ Դու գիտես որ ես քեզ սիրում եմ, գիտես, որ վաղուց եմ սկսել քեզ սիրել, բայց յոյս չունէի, որ դու էլ ինձ ես սիրում։ Մտքումս ասում էի մեծ օջաղի աղջիկ է, հպարտ կընի կարելի է թէ լայեղ չանէ ինձ ուղի, ասի մին մենակ տղայ է, անուշն էլ վեր էլած թէ գող է։ Բայց հիմի տեսնում եմ, որ դու լաւ սիրտ ունիս։ Իմ կեանքը իմ ապրացնողը հիմի դու ես։ Հենց որ իմացայ թէ դու ուրիշի ես գնացել, էն օրը ես գլխիցս ձեռք կը վերցնեմ, էլ ո՞ւմ համար, ինչու համար պիտի ապրեմ, մի մեր ունեմ, նա էլ էսօր կայ, էգուց չկայ, ոտի մէկը գերեզմանումն է։

— Ասում ես դու աղջիկ ես քեզ զօրով մարդու կը տան, զօռով կը փախցնեն։ Մէկ որ, խելք տղան էդ չի անիլ, պէտք է առաջ աղջկայ կամքը իմանայ, տեսնէ նա էլ իրան հաւանում է թէ չէ։ Ամեն աղջիկ հօ մէկ չի ըլի, էնպէսն էլ կըլի, որ էդպէս մարդու ղլուխ կը կորի։ Հիմի ինձ ո՞վ կարայ փախցնի, մինչև ես ինքս չուզենամ։ Դու տեսնում ես, որ մեր Մարիամը ինձ իրա աչքի լսի պէս է պահում, նա իրա ղլուխը յետ է դրել ինձ համար։ Դրա համար իսկի մի միտք անիլ։ Լաւ իմանաս, որ ինչպէս ես եմ քեզ համար, էդպէս էլ դու ես ինձ համար։ Երբոր իմանամ, մէկի ապրացնող եմ, կեանքն եմ, էլ իսկի կերթամ ուրիշի։ Երբ որ դու ինձ ես սիրում, ես քեզ, էլ ուրիշ ի՞նչ հարկաւոր է մեզ։ Ես իմ աչքովը տեսնում եմ, որ շատերի սէրը մինչև պսակն է քաշում։ Պսակվում են թէ չէ՝ մարդ ու կնիկ շուն ու կատու են դառնում,

էլ չեն սիրում մէկ մէկու։ Հենց սրա համար մտքումս դրել էի որ քեզ ասեմ—էսպէս մնանք միշտ, որ սիրենք մէկ մէկու։ Ես հենց իմանում եմ, թէ աշխարհքումս ոչ մէկը ինձ նման բաղդաւոր չի, քանի որ ես սիրում եմ քեզ . . .

Արզումանը լսելով Հերիքնազի այդ դիւցազնական խօսքերը, չիմացաւ ի՞նչ պատասխան տայ, ի՞նչպէս շնորհակալ լինի նորանից։ Մինչև այսօր նա սիրում էր Հերիքնազին, որովհետև Հերիքնազը մի հատիկ էր այդ դիւղումը իւր գեղեցկութեամբը, իւր արիութեամբը։ Այն աղջկերանցից էր Հերիքնազը, որին սովորաբար «ղըզըղլա» անուն են տալիս գեղըցիք։ Կանացի քնքշութեան և գեղեցկութեան հետ նա ունէր և այրականութիւն, որ հարկաւոր դէպքերում գործ էր դնում և զարմացնում կտրիճներին։ Երբ որ նա լինում էր մի խումբ աղջկերանց մէջ իրանց սովորական խաղերի ժամանակ, ոչ մի տղայ նորա ահուց չէր համարձակել նրանց մօտենալ։ Երբ որ նա ձի էր նստում սար կամ ուխտ գնալիս, շատ անգամ տղի գտակ էր դնում գլխին և վարժ հեծանողի պէս ձին խաղացնում և զարմացնում ամենին։ Բոլոր նշանուելու տղերքը նրա աչքում ճանճեր էին թվում, նա ինք զինքը Արաբի-Զանգի էր համարում և Շահ-Իսմայիլ էր փնտրում։ Արզումանն էր միայն նրան գրաւում, միայն նորանից էր ամաչում և նորա սէրն էր աշխատում գրաւել։ Ահա այս յատկութեանց համար Արզումանը նորան սիրում էր, բայց չէր կարծում, որ նորա մէջ կը հանդիպի և սիրոյ, նորա մէջ կը գտնի խելք, դատողութիւն։ Եւ ճշմարիտն ասել Հերիքնազը մինչև հիմի կարծես թէ չունէր էլ այդ

յատկութիւնքը: Այդ կայծերը նորա սրտի և ուղեղի մէջ թագ էին կացել մինչեւ այսօր և բարեպատեհ հանգամանքի էին սպասում արտափայլելու: Հերիքնազը սիրել էր մտածել, մտածումէր իր վրայ, իւր ապագայի վերայ, իւր սիրած մարդոց վերայ, շրջապատ հանգամանքների վերայ և որովհետև դոցա մեծ մասի վերայ չունէր ոչ մի կանխակալ կարծիք, չունէր նախապաշարեալ խրատատու, այդ պատճառով իւր պարզ և բնական դատողութեամբը միշտ կամ համարեա միշտ անսխալ եզրակացութեան էր գալիս և համոզվում իւր կարծեաց մէջ: Արզումանը, որ 'ի բնէ մարդու հոգու մէջ թափանցել գիտէր, և իւր շրջակայ մարդկերանցը անխելահաս արարածներ էր համարում, որ վնտրումէր այնպիսի մարդիք, որ աւելի տղիու, աւելի վսեմ բաներով վերայ խօսէին, այժմ տեսնելով Հերիքնազի մէջ այդ հերոսական վճռականութիւնը, սկսաւ փոխել իւր կարծիքը ինչ որ ունէր Հերիքնազի վերայ և նորա վերայ նայել ոչ միայն որպէս սիրականի, այլ և որպէս հաւատարիմ ընկերուհու և խմաստուն բարեկամուհու վերայ: Այս կարծրասիրտ երիտասարդի հոգին կարծես տեղը հան էլաւ և նորա աչքերը, որ միայն իւր եղբարց մահուան ժամանակն էին թաց էլել, այժմ նորէն սկսան աղբիւրանալ: Բռնեց Հերիքնազի երկու ձեռքը և դրաւ իւր շրթունքների վերայ:

— Հերիքնազ, Հերիքնազ, իմ աննման Հերիքնազ, ասաց նա հեկեկալով: Քու էդ խօսքերը կենդանացրին իմ օխան ախտորցը: Հէնց իմանում եմ, թէ հիմի օխան էլ կշտիս կանգնել, ինձ մխիթարում, ինձ սիրտ են տալիս, թէ մի՛ վախենալ, քամակիդ կանգնած ենք:

Հերիքնազ, երբ որ ձեր օջաղն ու մեր օջաղը փառ էին, մեր անների վերայ էսպէս փորձանքներ չէին գալիս:

Դեղի մէջ մենակ լինելը աշխարհքիս ամեն անբախտութիւնների ցը վատն է: Էսպէս չէր լինել, եթէ մեր մէջ արդար օրէնք, արդար դատաստան ընէր: Բայց ինչաս չունի, ես այսուհետև մենակ չեմ, դու իմ օգնականն ես, դու իմ մխիթարողն ես: Մինչև հիմի դու իմ նշանացուն էիր, այսուհետև երկու բանով էլ աւելի ես, համ քուրս ես, համ ախպէրս: . .

Հերիքնազը փաթաթուեց Արզումանի շինքովը ուսկսաւ նորան մխիթարել: Մի՛ վախենալ, Աստուած ողորմած է, միայն կարողացաւ ասել Հերիքնազը և Արզումանի ճակատից համբուրել: Նոքա երկոքեան լռեցին և այս լռութեան մէջ երջանիկ էին:

—.

ԺԱ.

Վերջապէս Մարիամը դուրս եկաւ և Արզումանին ներս հրաւիրեց հացի:

— Դէ, դու էլ մի՛ կաց, Հերիքնազ ջան, ասաց Արզումանը և ինքը ներս գնաց: Հերիքնազը երկար սպասել չը տուաւ, խկոյն հագաւ շորերը և գնաց Արզումանի մօտ նստեց նորա վերայ թինկ տուած ի պէս:

Աստուն մթնի մէջ աւելի լաւ է լինում մարդու երևակայութիւնը, քան թէ լուսի, դիշերը աւելի քան թէ ցերեկը: Բայց արի ասենք. այս երևոյթը եթէ ճըշ-

մարիա էլէ, մեղ նման մաշուած ու մեռած մարդոց համար է: Անարատ հոգոց մէջ, երևակայութիւնը միապէս վառ է, թէ ցերեկ լինի, թէ գիշեր, թէ լոյս լինի՝ թէ մութը: Բայց թողնենք այս փիլիսոփայութիւնը . . . .

Արզումանը սաստիկ քաղցած էր. և առաւօտն էր կերել միայն մի կտոր թուրքի սաջահաց, բայց Հերիքնազին տեսաւ թէ չէ, ստամքան լուր պահանջից յետ կեցաւ: Զարմանալի բան: Ես ամենևին իշտահ չունիմ, ասաց նա, բայց միտս է, որ էս օր սիրտս թռթռում էր սաստիկ քաղցածութենից: Մարիամը գիտէր, որ ուրախութիւնը իշտահ փակել գիտէ, բայց ախորժակ բանալու հնարքը նոյնպէս գիտէր: Մի քեօռօղլու բաժակ արաղով լցրեց տուաւ Արզումանին, ասելով, իմ ու Հերիքնազի կենացը մի ստաքանով պիտի դարտկես: Այդ խօսքի համար թոյն էլ որ լինէր, կը խմէր Արզումանը: Մի չաղ հաւ էր եփել Մարիամը և մի քանի ձու խաշել: Լաւ ախորժակով կերաւ Արզումանը, բայց հիմի էլ կշտանալու զգացմունքն անյայտացաւ: Մարիամը տեսաւ որ Արզումանի ծամելիքները դադար առնելու մտադրութիւն չունին, վեր կացաւ մի մեծ ամն սալ սալ մածնով լցրեց դրաւ առաջևը: Այս էլ սրբեց մեր հերոսը և յետոյ ասաւ — չանէքս բերարեցին, էլ ոչինչ չեմ ուզում: Ութ օր կայ, ինչ որ էսպէս իշտահալի հաց չեմ կերել:

Այս միջոցին աքաղաղը կանչեց:

Այ զահրումար . . . ասաց Արզումանը հառաչեան աքաղաղի չարի բարձր ձայնով: Երնակ մութն ընկնէր աշխարհքի վրայ, էլ մէկ սաղ տարի չը լուսանար:

Էս ի՞նչէ, էս սահաթս մթնեց, հիմի ուզում է լուսանայ:

— Կուզէս, մի սաղ տարի քեզ մի էնպէս մութը տեղ գցեմ, որ սատանէն էլ չգտնի, ասաց Հերիքնազը:

— Ո՞րտեղ կը գցես:

— Մեր մեծ տան ներսի օթախը: Օխտ տարի կը լի, էդ օթախը մարդ ոտք չի դրել: Կուզէս, արի գնանք տես:

Արզումանի հետաքրքրութիւնը շարժեցաւ և խնդրոյն վեր կացաւ տեղից, որ առանց ժամանակ կորցնելու տեսնէ ինչ օթախ է այդ: Արզումանը լսել էր սրբանց մեծ տան համբաւը, բայց ինքը չէր տեսել: Մի ունվառ ճրագ ու ծծմբաշիւղ վեր առան և մեծ տունը մտնելով՝ վառեցին խնդոյն: Դիմացի պատերը Արզումանի աչքումը չերևացին և կարծեց թէ տան մէջ չէ:

— Ա՛խչի, էս ո՞ւր բերիր ինձ, հարցրեց Հերիքնազին:

— Առաջ արի, մի՛ վախենալ, ասաց Հերիքնազը: Արզումանը մի քանի քայլ առաջ գնալով ճրագը բարձրացրեց և սկսաւ իր չորս կողմն նայել: Ահագին մեծութեան, կոնաձև մի շինութիւն էր այս տունը և վերևն նայողին թվում էր, թէ ուր որ է, պիտի փլի վերան: Ութ սարսափելի հաստութեան սիւների վերայ էին դասուած առաստաղի հաստ հաստ կոճքերը, որոնք արդէն կիսով չափ փտել էին և մօտ էին կործանուելու: Այդ իսկ պատճառով ոչինչ բանի համար գործ չէին ղնում այս տունը, բայց չէին էլ ուզում քան-

դեռ այդ հայրենասանդ յարկը, որ միշտ միտներդը ձրգէ իրանց նախնեաց մեծութիւնը:

Հերիքնազը առաջնորդեց Արզումանին դէպի իւր սատ սենեակը, որ թէև նարսի-օթախ անուն էր կրում, բայց ձիներքամակ ձևի շինութիւն էր բաւականին երկար և ընդարձակ: Ահա քեզ տուն, ասաց Հերիքնազը: Ժամանակով մեր հարսները էստեղ են եղել կենալիս մի տարի էլ դու հարսնութիւն արա: Իստակ կաւլեմ, լաւ կաւլեմ, կը շինեմ քեզ համար, ամեն օր հացդ ջուրդ կը բերեմ, շատ վախտ էլ մօրդ կը կանչեմ, կը գայ էստեղ քեզ կը տեսնի, մինչև կը տեսնենք բանն ինչպէս է ուզում վերջանայ: Հը՞, ի՞նչ կասես:

— Զէ՛. Հերիքնազ ջան: Մի՛ վախիր, ես առանց էս տեղ մնալու էլ քեզ շուտ շուտ կը տեսնեմ, էլ ի՞նչ հարկաւոր է ինքս ինձ բանակի մէջ գցեմ: Բայց էս տեղ մի բան միտս ընկաւ: Մի ժամանակ նորատրաստներին բերում էին էս տեղ համբուրելու, ո՞ւր է էն օջաղը:

— Էդ մեծ տան օջաղն է, արի տանեմ նշանց տամ: Ահա էս է:

— Հերիքնազ, դու հօ հաւատո՞ւմ ես, որ էս օջաղը զօրաւոր է:

Էդ ի՞նչ խօսք է: Մեռնիմ սրա ողորմութենին: Ես ամեն կիրակշտէքի, տհա տեսնո՞ւմ ես, ես քարի վրայ մնում եմ վառում: Ես որ հօրն ու մօրը տեսնում եմ հրաղում, իմ հերը էստեղ է ըլում նստած, իմ մէջն տհա էստեղ, իրարու դիմաց: Նրանք սաղ վախտն էլ միշտ էստեղ էին նստում: Երբ որ իմ հերը տանը չէր

ըլում, ոչով չէր կարող նրա տեղը նստել, բալի վախտ հրեխէքը թէ կը նստէին, էդ էր, թէ չէ ուրիշ մարդ չէր կարող: Հարսներն էլ երբ որ բան չէին ունենում նարսի օթախումն էին նստում, հացի վախտն էլ կը դային էսպէս շարով կը կանդնէին:

— Զարմանք բան է, ինչպէս էլաւ, որ ձեր տունը էդպէս մի բաշ հանդաւ:

— Դա դու ճիստեղացի ես, իսկի չես իմացել:

— Ո՞նց չեմ իմացել: Իմացել եմ, որ խօլերի տարին ձեր տանիքը շատ մեռնող է էղել, իմացել եմ, որ խօլերից յետոյ տաւարի ազարն էկաւ, ինչպէս չեմ իմացել, դիվի էլ գիտեմ, ես էս եմ ասում, թէ. . . մախլասի, Աստուծու փառքը շատ ըլի, ինքը տալիս է, ինքն առնում. . . .

— Շատ անդամ, երբ որ մօրս տեսնում եմ էստեղ նստած, ես իմանում եմ, որ նա սաղ չի, մեռած է, գլուխս դնում եմ մօրս դոգումը, նա էլ ձեռքն է քսում, բայց իսկի բան չի ասում, բան չի խօսում. ինչքան մտքումս դնում եմ, թէ մի անդամ էլ որ երազիս մէջը տեսնեմ, հարցնեմ, ասեմ նանի ջան, ինչի՞ չես խօսում, հէնց ուրախանում եմ, ու դնում կշտին նստում, բայց էն դիշերը, որ դու եկար մեր տուն, էն դիշերը ահագայ էլի մօրս, շատ տխուր, վրէս բարկացածի պէս էր երևում:

— Յետոյ ի՞նչ մտածեցիր, ինչի՞ պէտք է էդպէս բարկացածի պէս ընէր:

— Ո՞վ գիտէ, կարելի է թէ նրա համար ընէր, որ ես . . .

— Նշանուած չես, ու ինձ սիրում ես, էդ չե՞ս ուզում ասել:

— Չա՛:

— Հերիքնազ Ջան, գիտես ինչ կայ: Ես ուզում էի օրինաւոր նշանտուէք անեմ, բայց բանն էսպէս էկաւ: Ես ինձ մօտ մի խաչ մանէթ ունեմ: Էս օր խանջալես ծէրովը ծակեցի զասդի քեզ համար, որ կուծքիցդ կախանես: Այս ասելով Արզումանը հանեց քիսիցը մի խաչ մանէթ:

— Ահա քեզ նշան, թէ որ կուզես, դու էլ քու մատանիքներիցդ մինն ինձ տուր, պատի մատիս կը դնեմ: Արի, իմ հոգի, չոգենք էն օջաղի ղրաղին, համբուրենք սրա քարիցը, թող քու հէրն ու մէրը տեսնեն, ու մեզ օրհնեն:

Հերիքնազը հնազանդեցաւ: Արզումանի ձեռքից առաւ խաչ մանէթը, և ինքն էլ իւր մատից մի մատանի հանեց տուաւ Աղումանին: Զոքեցին, համբուրեցին օջաղի քարիցը, համբուրեցին իրարու շրթունքից և այս լոպէիս հոգով վերացած երկնքումն էին համբուրում իրանք իրանց, ուր չը կայ ոչ ատելութիւն, ոչ նախանձ, այլ սէր, միայն սէր, զի Աստուած ոէր է . . .

Մարիամը տեսաւ, որ ջահիլները ուշանում են շուտով դնայ Նրանց յետքից, և մեծ տան մութը անկիւնումը կանգնած ականատես վկայ էր այդ բոլոր անցքին: Նա ձայն չէր հանում և չէր ուզում խանգարել նոցա արարողութիւնը, որ 'ի սուրբ սրտանց էր: Երբոր իրարու համբուրեցին, յետոյ չոքեցին օջաղի քարից համբուրեցին, նա այդ ժամանակ միայն մոտեցաւ և ասաց.

— Ուխտերդ ընդունելի ըլի, Աստուած մուրազներիդ հասցնէ:

— Ամէն, ամէն, ասացին միաձայն Հերիքնազն ու Արզումանը այնպիսի եղանակով, որից հասկացվում էր, թէ սաքա աւելի նշանաւոր ուխտ ունէին, քան թէ քարերից համբուրելն էր:

Այս միջոցին անգութ աքաղաղը երրորդ անգամ կանչեց և մեր փսխած պետրոսին խնացուց, որ ժամանակ է ապաշխարելու երթալ:



ՄԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա.

Ամառն էր։ Դ . . . գիւղի ժողովուրդը սովորութիւն ունէր ամեն ամառ սար երթալու։ Գեղամայ լճի հեսիսային ծայրից սկսեալ, ուր ընկածեն Դիլիջանու սարերը, մինչև Փարկանայ լիճը, որ Ախալքալաքու և Ալէքսանդրոպոլու մէջ տեղն է գտնվում, բազմաթիւ լերանց գագաթներ և խումբեր կան, որոց մէջ թէև չըկայ երևելի մեծութեան մի սար, որ գրաւած լինի ճանապարհորդների ուշադրութիւնը, բայց իրանց ծաղկափթիթ գագաթներովը և ականակիտ աղբիւրներովը երևելի են ամենամեծ լեռներէն անդամ։

Ահա այս սարերը, որ ձմեռ ժամանակ անմարդաբնակ են լինում և անհիւրընկալ, դորա փոխանակ ամառ ժամանակը իրանց սաղրոտներումը և դաշտերի վերայ անթիւ ոչխարներ եւ տաւարներ են պահպանում։ Որքան որ երևելի է Արագածը իւր պատուական արօտատեղիներովը և անմահական աղբիւրներովը, որոց համար իսկ Թարաքամեքը Աղա-Եաղ անուն են տալիս, նոյնպէս երևելի են և Լալվարը, Լօքը, Ղարախաչը, Ազրիղառը, Թէլլի-Տաղը, և ուրիշ որ մէկն ասեմ, որ մինքան գմիւսը պատուական են համարվում և սարեցուն

կարծել տալիս, որ եթէ եղել է Եդեմական Դրախտ, անպատճառ այս տեղերն է եղել, ուր Ադամը ամառը բնակելով ձմեռն արտաքսուել դնացել է Ղարա-եազ։ Այս սարերի շարերի ստորոտում անտառներ էլ կան և այս կողմանէ երևելի են մանաւանդ Լալվարայ և Լոքի հիւսիսային ստորոտները, որոնց շատ տեղերը իրանց անթափանցելի և դժուարամատչելի լինելովը. կացնի ձայն չի լսուած դեռ ևս։ Այս անտառների մէջ որսերի և առատութիւն ևս կայ։ Այստեղ բօլուկներով խոզեր թաբունով եղջերուներ մանդալիս. ժամանակ ժամանակ եղջերուներն իրանց դոռոցով դրմբացնում են այդ ձորերը։ Այս սարերումը կան և անմատչելի ձորեր ու հովիտներ, որոնք միայն աւազակաց են լինում պատսպարան, Գիւլի-Մամմադ, Ղարանլու-Դարա, Ըէյ Թռնլի, ևն։ Այսպէս աւազակները նոյնպէս մասն ունեն այս ամարանոցներին և ամառ ժամանակ սոցա բախտը աւելի է յաջողում։ Այս տեղ մօտիկ լինելով արտասահմանից, հրաւիրում են նոյնտեղի իրանց ընկերներին ու հաղորդակցութիւնները հեշտացնելով՝ իլխիներով ձիաներ են տեղափոխում այս կողմից այն կողմ, այն կողմից այս կողմ։

Սարեցիք ամբողջ ամառը մի տեղ չեն մնում, այլ երկու կամ երեք շաբաթը միանգամ տեղերը փոխում են, որ տաւարների համար խամ արօտատեղիներ լինին։ Այս տեղափոխութիւնը մի առանձին անյարմարութիւն չի պատճառում, որովհետև դժուար չէ իրանց շարժական տները, որոնք կամ վրան են լինում, կամ ալաչո-խի փէչ, հիւսած եղեզնապատով, հաւաքել մէկ տեղից և մի ուրիշ տեղ տանել։ Այդ բնակարաններին

մեր Հայերն ասում են ԹՈՓ, իսկ Ղարաբաղցիք՝ ՀՕՂԼ։ Իրանց բնակելու տեղերին ասում են ՈՒՐԴ, Թուրքերէն ՍՈՒՐԼԷ, դուցէ Օրդու լինի իսկը, որ բանակ ասել է։ Հայերի ուրդերը բոլորն էլ մի մի յատուկ անուն ունեն, որոցմէ երևելիներն են՝ Քամի-ուրդ, Լանջիվեր ուրդ, Նելքի ուրդ, Վերի ուրդ, Մէջի ուրդ, Ցեխի ուրդ, Մելիք Ապովի Ուրդ, Պեսի (Պետրոս), Պուղի (Պողոս)։

Այն ուրդերը, որոնք մարդկանց անուններ են կրում իրանց վերայ, այդ յառաջ է եկած պատմական աղէտալի անցքերից, երբ Դաղստանի Լեզգիքը արշաւելիս են եղել դէպի այս կողմերը և մարդիկ գերելիս։ Այսպէս պատմում են, որ Մելիք Ապովը այժմ իւր անուանը նուիրուած ուրդումը եօթը Լեզգու գլուխ է կտրել, երեքին էլ պաղ սաղ մաշկել, միայն երկուսին է ազատութիւն տուել, որ երթան իրանց աշխարհքումը խմաց տան։ Ասում են այս դէպքից յետոյ էլ Լեզգու երես չըտեսանք։ Պողոսի համար նոյնպէս պատմում են, թէ ինքը ուր իր նշանածը (հարսնացուն) իրարու կուռ բռնած էդ ուրդովը անց կենալիս են էլել որ դնան Սարու եալ, իրանց դադիքը։ Ցանկարծ Լեզգիքը շրջապատում են և ուզում են իրա նշանածը ձեռնից խլեն։ Քաջասիրտ Պողոսը խանջալը տալիս է իրա նշանածին, ինքը թուրը հանում է ընկնում նրանց մէջը. վեցի գլուխն է կտրում, չորսի մէջեցն է կիսում, բայց Լեզգիքը շատ ժամանակ չեն տալիս ուր ինքը հրացան մէկէն արձակելով գիւլլեսորով են արի երիտասարդին։ Ուր սիրելու մահը տեսնելով Պողոսի նշանածը՝ Զառին՝ ընկնում է խանջալի վերայ և այսպէս երկու անարատ հոգիք անթառամ պսակին են արժանանում։ Եւ ամեն անգամ,

մինչև այսօր էլ, երբոր այս տեղումն անցնումեն մեծերը պատմում են փոքրերին, որ նրանց պէս քաջասիրտ լինին, նրանց պէս հաւատարիմ սիրոյ մէջ, և այս պատմութիւնը այնպէս է տպաւորվում ջահէլների վերայ, որ պռոշները կծոտում են և ձեռները դէպի խանջալները տանում: Բայց թողնենք այս աղեռաղի յիշատակները, որ մարդու սիրտ են կոտրատում և գանք մեր բուն պատմութեանը:

Վարդավառի շաբաթ օրն էր: Սարու եալը, որ վարդի կոկորի նմանութիւն բերող մի սար է, հեռուից նայողին այնպէս էր թվում, թէ ահագին մեծութեան մի ծաղկափունջ է: Ինչ դոյնի ծաղիկ ասես, որ սրա վերայ չկար, մին քան զմիւսը պայծառ, մին քան զմիւսը հոտաւէտ: Հարս ու աղջիկ զուգուել, զարդարուել էին այդ օրը և այդ սարի վերայ ծաղիկ քաղելու էին գնացել, որ միւս օրը կատարեն վիճակախաղի հանդէսը: Ի՞նչ կասկած կայ, որ Հերիքնազն էլ էր դրանց հետ, որ ամեն մի ծաղիկ պոկելիս, ամեն մի խոտի դիպչելիս խղճահարվում էր, թէ մեղք չի՞ն այս ծաղիկները, որ այսպէս անգթութեամբ կորում, հեռացնումենք իրանց արմատից, սրանք էլ հոգի ունեն, սրանք էլ մուրազը փորձելումն եմ թողում: Որ ծաղիկ որ աւելի դալար, աւելի պայծառ էր լինում, նրանց չէր ղեմբշում ձեռը տալ, աշխատում էր այնպէս քայլել, ոտներն այնպէս փոխել, որ ոչ մի ծաղիկ, ոչ մի խոտ չճխլել, չթառամեցնել: Այս մտքի հետ ընկած ինչ ասես երևակայում էր Հերիքնազը: Մի ծաղիկ նրան թվում էր որպէս նորահարս, միւսը որպէս նորափեսայ, մէկը նորահաս, միւսը դեռ մանուկ, մէկին պաչքպչում էր, մէկ-

կելի կշտին նստում նայում էր, զմայլում, հիանում էր նոցա ձևերի կանոնաւորութեան և համաչափութեան վերայ և այնպիսի բաներ և յատկութիւններ էր նշմարում, որ մինչև այսօր իւր աչքին չէր զարնուել, իւր ուշադրութիւնը չէր գրաւել: Մինչև այսօր նոքա անշունչ բաներ էին իրա համար, որոնց անզգուշութեամբ պոկել և հոտ առնել կարելի էր միայն, առանց զննելու, բայց հիմի բոլորն էլ շունչ, բոլորն էլ հոգի առած իրա հետ խօսում էին: Այնպէս էր թվում Հերիքնազին, որ այս ծաղիկները իրան լաւ ճանաչում էին, դիտեն նորա անցկալը, ներկան ու ապագան, միայն լեզու չունին, որ յայտնեն իրան, մխիթարեն նորա տրտնջած սիրտը: Միւս աղջիկները ուրախ ու զուարթ երգելով, դիւլում հայ կանչելով, մէկմէկու բրթելով, հրելով, իրարու տակ ու դլուխ ընկնելով, վազվզում էին մէկ թուփից միւս թուփ, մէկ ծաղկից դէպի միւսը, ասում էին տեսնենք ո՞վ շուտ կը հասնի էն բարձր աղնթափեր ծաղկին, ո՞վ շատ կը քաղի, ո՞վ աւելի շատ դոյն ծաղիկներ կունենայ, և այսպէս վազվզելով բաւականին հեռանում էին, իսկ Հերիքնազը չէր մասնակցում նրանց զուարճութեանը, չէր վազում նրանց հետ, նա կարծես դիտութեամբ յետ էր մնում, որ մենակ մնայ և նա շատ էր սիրում այդ մենակութիւնը: Միւս աղջկերքը հասել էին սարի գագաթին, բայց ինքը դեռ նորա ստորոտումն էր և չէր էլ ուզում ճրանց յետևից հասնելու, որ չըզրկուի իւր քաղաք ցնորքներին:

Արդէն հինգ ամիս էր անցել, ինչ որ Արզումանին չէր տեսել, նորա մասին ոչ մի համբաւ չէր լսել: Այդ հինգ ամիսը նորա համար հինգ տարու չափ ել-

կարութիւն ունէր։ Այդ հինգ ամսուայ մէջ բաւական-նին կերպարանափոխուել էր Հերիքնազը։ Նորա աչքերը, որ առաջ դարձեալ Հայկուհու աչքեր էին վառվռուն և գեղեցիկ, բայց մի տեսակ ապշութիւն ունէին, որ բնական է անկիրթներին, այժմ այդ աչքերի փայլն ու հայեցողութիւնը մի նոր կերպարանք, մի նոր զօրութիւն էին ստացել և իրանք էին ուրիշին ընդհարում, ապշեցնում։ Մի կիրթ ճաշակ ունեցող մէկը եթէ առաջ պատահէր Հերիքնազին, նա մի պպզունութիւն և փայլունութիւն կը տեսնէր միայն, բայց եթէ այժմ տեսնէր, պիտի հիանար և քարանար, և եթէ խելք մնար գլխումը, պիտի կարծէր անշուշտ, թէ սա արամազդեան գերդաստանիցն է, և Հելիկոնեան լեռներից տեղափոխուել է Սարու եալ։ որ փոքր ինչ ժամանակ անցկացնէ հողեղէնների հետ։ Զքնաղատիպ, աննման արարած, բնութեան հրաշալիք, կեանք ծերոց և մահ երիտասարդաց . . . .

Վաղուց արդէն ջահել տղերանց երևակայութեան նիւթ էր դառել Հերիքնազը և Հերիքնազ անունը անյարմար էին համարում նորան տալ։ Դիոնիոգենէսի էին ասում նորա կամ Սիրա-խոսող, ոմանք Աշէ էին ասում, ոմանք Սէհրի, եւ առհասարակ աշխատում էին իրանց սիրած առասպելների հերոսուհիների անունը դրոշմել նորա վերայ, բայց ոչ մէկը չէր կպչում նորան, նա մնում էր դարձեալ Հերիք, Հերիքնազ, որոյ ուղիղն է Արեգնազան։ Շատերը խաղ էին կապում նորա վերայ և կամենում էին Արզումանի արկածքներին նախապատճառ շինել նորան, բայց չէին կարողանում յաջողցնել, չէր ընդհանրանում։ Մի

բիծ, մի արատ չէին կարողանում դնել նորա վերայ, վասն զի նա զօրաւոր օջաղի զաւակ էր, ժողովուրդը պատկառանքով էր նայում դէպի նա և համոզուած էին որ մի որևիցէ անտեղի ակնարկութիւն դէպի նա, անպատիժ չի մնալ։ Շատերը խնամախօս եկան հարուստ և շէն տներից, շատ հեռաւոր գիւղերից և մինչև անգամ քաղաքից նորա համբաւը լսելով՝ եկան ուզելու, շատ անգամ փոյձ փորձեցին փախցնելու, բայց ոչոք չը հասաւ իւր նպատակին։ Մեծ պատերազմ էր այս, աւելի մեծ քան թէ առաջուանից կարող էր երևակայել Հերիքնազը, բայց այսուամենայնիւ նա աներեր և հաստատուն մնաց իւր առաջուան սիրոյ մէջ, և աւելն մի այսպիսի դիպուած աւելի էր արծարծում նորա այդ սէրը։ Ոչոք, բացի Մարիամից չը գիտէր, որ նա նշանուած է, շնչիւն կար միայն, թէ Հերիքնազը սիրահարուած է Արզումանի վերայ, բայց այդ էլ հաստատ կերպով չը գիտէին։ Շամիրը խիստ շատերին էր խօսք տալիս, խիստ շատերից ընծաներ ստանում, որից թամքած ձի, որից արծաթաբանդ հրացան, բայց ոչ մի անգամ չէր կարողանում հասնել իւր նպատակին եւ ճարահատեալ ընծաները յետ էր դարձնում տուողներին։ Ստէպ առէպ սպառնում էր Հերիքնազի վերայ, բայց Հերիքնազը կտրուկ սրախօսութեամբ ընդհարում և ամաչցնում էր Շամիրին։

Հերիքնազը տեսաւ որ իւր ընկերուհիները շատ են հեռացել, էլ չուզեց նրանց եղելից հասնել։ Նըստեց տեղնուտեղը և սկսաւ իւր քաղաց ծաղիկները երգելով փնջել։ Առաջ ջան գիւղում երգեց մեղմ ձայնով, յետոյ սկսաւ բայաթի։ Բայաթին նորա սիրտը

այնպէս շարժեց, որ սկսաւ արտասուել: Սկսաւ լաց լինել Հերիքնազը, առաջ հանդարտ հեկեկանօք, բայց հետզհետէ այնպէս սաստկացաւ նորա կսկիծը, որ ըսկսաւ իւր ձայնի բոլոր ուժովը գոռալ: Հինգ ամսուայ միջոցում շատ բան էր զգացել Հերիքնազը, շատ էր տխրել, բայց ոչմի անգամ չէր լաց էլել: Նորա սիրտը քարացածի պէս էր: Բայց հիմի երբ աչք ձգեց իւր չորս կողմի սարերի վերայ, երևաց իւր առաջև Ղարանլըղ-Դարան, որ մութ անդունդի նման երկար ու մէկ ձգուելէր երկու ահագին լեռների միջով, Հերիքնազի սիրան ուռաւ և ուզեց կուրծքը պատռել: Ահա էդ ձորն է հիմի Արզումանի բնակարանը, ասում էր նորա սիրտը և ուզում էր թռչել դէպի այն կողմը: Հերիքնազը երկար, երկար ժամանակ նայեց դէպի այդ կողմը: Ամեն մի հովիտ, ամեն մի բլուր այժմ ուրիշ դէմքով էին նայում իւր վերայ: Մի տխուր նախազգացմունք գրգեց նորան, թէ այս վերջին անգամն է, որ զմայլում է իւր ծննդարանի շքեղ տեսարաններով, էլ կաթնաղբիւրի ջրիցը չպիտի խմի, էլ բոխուտ սարի հաղարձիցն ու մռռիցը չը պիտի ուտի, էլ ջուխտակ ամարքու վրայ կարմիր թել չը պիտի կապի, որ յիշատակ մնայ և միւս տարին գայ տենսի ու վրան մի ուրիշ թել էլ աւելացնի, էլ Սարու եալի վերայ ծաղիկ քաղելու չպիտի գայ . . . . Այսպիսի տխուր մտածմունքներից յետոյ, մի վատահաճութիւն և թալկութիւն եկաւ նորա վերայ, և պարկեցաւ տեղնուտեղը ցօղաթաթախ ծաղկանոցի մէջը և քունը տարաւ:

Մարիամը տեսաւ որ Հերիքնազը բաւականին հեռացել է, վախեցաւ թէ մի փորձանքի չը պատահի,

մանաւանդ նկատելով որ հեռուից ձիաւորներ են գալիս այնպիսի արագութեամբ, որ կարծես հենց նրան փախցնելու են գալիս: Նա իւր հետ մի խումբ աղջիկ առաւ և սկսաւ սարիցը վայր իջնել դէպի Հերիքնազը: Ձիաւորները Հերիքնազին չըտեսնելով ուղղակի դիմեցին դէպի Մարիամի խումբը: Նրանցից մինը վայր իջաւ ձիուցը և Մարիամն իսկոյն ճանաչեց Արզումանին: Մօտ գնաց Մարիամը և բարևեց: Արզումանը մի քանի խօսք ասեց Մարիամին և իսկոյն ձին նստեց և կայծակի արագութեամբ հեռացաւ իւր ընկերների հետ: Աղջիկները ուրդ հասնելուն պէս չաւ արին ամեն տեղ, թէ Արզումանին տեսանք, Մարիամը նրա հետ երկար խօսեց, բայց մենք չիմացանք թէ ինչ խօսեցին:

—

Բ.

Այս շաբաթ աւուր երեկոյին մի առանձին ուրախութիւն և զուարճութիւն էր երևում սարեցոց մէջ, մանաւանդ ջահիլ աղջկերանց և տղերանց մէջ: Միակարգ շարուած դագէքի առաջև խարոյկները սովորականէն աւելի էին թէժացրել: Կարմրաթշիկ և առոյգակազմ հարս ու աղջիկները պատել էին այդ խարոյկների չորս կողմը: Մի տեղ շուր էին ածել տալիս տաւարածներին, անկաջ դնում, մի ուրիշ տեղ հեքիաթ էին ասում, բայց մի աւելի թէժ խարոյկի մօտ էլ աւելի շատ էին խմբուել տաւարածներն ու աղջկերքը և նրանց հանաքների ու ծիծաղների ձայնը հասնում էր բոլոր խարոյկներին:

Երկինքը բաւականին պարզէր այս երեկոյին եւ թէպէտ լուսինը մթնելուն պէս անցաւ արեւմտեան սարերի քամակը, բայց աստղերի պայծառ լոյսը առանց նուրան աւելի էին լուսաւորել մօտակայ սարերն ու ձորերը: Բաղումքը (մեծարջ) բաւականին բարձրացել էր և ցոյց էր տալիս, որ մօտ կէս գիշեր պիտի լինի, բայց կարծես ոչոք մտադրութիւն չունէր այս երեկոյին քընելու: Հետզհետէ աւելի էին չաղացնում կրակները, հետզհետէ աւելի էին բարձրացնում շուքերի և զուռնաների ձայները:

— Ա՛յ տղէք, քիչ լախուիհաչի տուէք, գնացէք շնթռկեցէք: Առաւօտները ձեզ վերկացնել չի լուում, օրը կէս օրէ ընում կովերն արօտ էք տանում, ասաց պառաւ Հոռոմը բարկանալով տաւարածների վերայ:

— Հը՛մ, էդ քու բանը չի: Ուզում էք մեզ քընացնէք, որ դուք ձեր բանը լաւ տանէք, հա՞: Տղէք սուտ է ասում, խաբում է մեզ, չը քնէք, ընդդիմաբանեց Հոռոմի խօսքին գիշերտաւարածների գլխաւորը:

— Զը քնէք էլ, ոչինչ չէք կարող անել, անմեղ էք անուշ քուններդ կտրում, ասաց մի աղջիկ հեգնելով:

— Դուք մաղ մանեցէք, առաւօտը ձեզ կծկիլ կը տանք ձեր մանածը, սրախօսեց տաւարածներից մինը:

— Հաչեցէք, ինչքան կուզէք, մենք էնքան շատ ենք, որ մեզ ոչինչ չէք կարող անել:

— Ինչքան էլ շատ ըլիք, էլի . . .

— Վո՛յ, գեռինը մնես:

— Քեզ հետ:

— Թո՛ւ:

— Էրեսի՛դ:

— Քու խրատողի էրեսիցը կպչես, էս ի՞նչ աներես զադ է:

— Դու էլ . . . . . .

— Թաղեմ արևը դ, Մա՛կի:

— Դու անիծի, իսկի մի մաղ էլա չի պակսիլ, ուփրու . . . . .

— Ումբրդ կարասը քաշեմ, Մարդի, դու ի՞նչի ես մէջ ընկնում:

— Բերնիցդ հոտ է փչում:

— Հոտես, փիթես, չորանաս քրքրուիս, դուլդուլա ընկնիս, իմացա՞ր, դէ գնա՛ կեր:

— Դու ջրուիս, դալարիս, չորս ոտնանի, չոր ձեռնանի դառնաս, ասա՛ ամէն:

— Ամէնը գլխիդ խառով կենայ:

— Ա՛խչի, թողէք էդ շներին, ի՞նչ էք հաչացնում, դուք քաշուեցէք տեղերդ, թողէք դրանք էնքան կենան, որ ջաները դուրս գայ: Թէ որ ղոչաղ տըղէք են, հալբաթ առաւօտը կերևայ:

— Կերևա՛յ, հալբաթ կերևայ:

— Տօ սո՛ւս կացէք, բան չունի՞ք: Դրանք ի՞նչ են. . . . Մի հերիքնաղ ունին, նա էլ դրանց քօռ բախտիցը հրէն տեղումը պարկած տեղն է տալիս: Եվ ո՞վ պիտի դրանց էրեսը պարզ անի:

Այս աստղը տաւարածների գլխաւորն էր, որ մաղրովից աւելի իշխանութիւն ունի միւսների վերայ: Սա

վեր կացաւ տեղիցը և միւսներին էլ իւր հետ առնելով հեռացաւ կրակներից եւ սկսաւ կարգադրութիւն անել: Ամեն աղբիւրի մօտ չորս-հինգ հոգի ուղարկեց, որ պահպանեն մինչի լուս, բայց ինչո՞ւ համար:

Ներիր ինձ, սիրելի կարդացող, որ մինչև հիմի այս հարցին պատասխան չտուի և դուցէ դու դեռ ևս չես գլխի ընկել, թէ սա ինչ մի անորոշ և միջանկեալ վիճաբանութիւն է: Այժմ ասեմ քեզ.

Աղջկերքը առաւօտեան արշալուսին պէտք է իրանց քաղած ծաղիկը տանեն աղբիւրի ջրով ցօղեն: Ազատ տղերքը, կամ ուղիղն ասել, տաւարածները այդ միջոցին ծաղիկը խլելու սովորութիւն ունեն: Եթէ կարողացան յաջողացնել այդ ժամանակ աղջիկերքը ակամայից ստիպեալ, պէտք է մի ընծայով յետ առնեն իրանց ծաղիկը: Ընծան մի երևելի բան չէ, սովորաբար ուտելեղէններ է լինում, օրինակ ձուածեղ, սեր, թերթերուկ, երբէմն էլ մի քանի ջուխտ նախշուն գուլբայ հետը: Բայց եթէ չըկարողացան խլել այնուհետև Աստուած ազատէ աղջկերանց հեգնութիւններից ու սրախօսութիւններից, այն օրը տաւարածները պիտի սաստիկ ամօթահարուին, որ չեն կարողացել յաղթող հանդիսանալ: Այս երեկոյին ահա վաղուան հանդիսի նախատօնակն էր, որ կատարում էին այնպիսի աստիճանական հաճոյախօսութիւններով, ափսոս միայն, որ Հերիքնազը նրանց մէջը չէր, որ նրա սրախօսութեան հետ էլ ծանօթանայինք:

Ծաղկաքաղից տուն հասնելուն պէս Հերիքնազի բոլոր կազմուածքը սկսաւ կոտրտուիլ և ծնօտիքը իրար

զարկելով՝ իմացուցին, որ այս է ահա դող ասած բանը, որ մինչև այն օրը միայն նորա անունն էր լսել, բայց նորա ազդեցութեանը երբէք չէր ենթարկուել: Արդէն տասնեւութ տարեկան էր Հերիքնազը, բայց դեռևս տկարութեան պատճառով անկողնու մէջ չէր մտած: Երկու տարեկան ժամանակն էր ծաղիկն ու կարմրուկը հանել, բայց այնպէս հեշտ էր եղել, որ ոչ մի հետք չէին թողել նորա կազմուածքի վերայ և չէր էլ յիշում, թէ այդպիսի տկարութիւն ունեցել է երբ ևիցէ: Միայն տասներեք տարեկանից սկսեալ երբեմնապէս գլխացաւ էր զգում, բայց դոքա ոչ միայն այնքան սաստիկ չէին, որ նրան պարկելու ստիպէին, այլ մի առանձին դուրեկան ազդեցութիւն էլ էին գործում նորա երևակայութեան վերայ: Բայց այժմ ընկել էր դողի անգութ ճանկերը, որ առաջ ու առաջ մրսացրեց ու կոտրտեց, յետոյ ձգեց մի անտանելի էրոցքի մէջ և Հերիքնազն սկսաւ խենդի պէս խօսել ինքն իրան:

Արզումանը երբոր Մարիամին տեսաւ Սարի-եալումը, նրան իմաց արաւ, թէ հարկաւոր բան ունեմ ասելու քեզ. այս գիշեր կսպասեմ քեզ վերի աղբիւրի մօտ: Մարիամը գնաց ժամադրեալ տեղը: Արզումանը, որ այնտեղ թագ էր կացած, մօտեցաւ Մարիամին:

— Ասա՛ տեսնեմ, ի՞նչ ունես ասելու, ասաց Մարիամը:

— Էն եմ ուզում ասել, որ ես էս քանի ամիսը էն կողմումն էի (սահմանից դուրս): Էնտեղ մի քանի ճանանչներ գտայ, խօսք տուին, որ լաւ կընդունեն, լաւ կըպահպանեն ինձ, եթէ գնամ իրանց մօտ բնա-

կուիմ։ Ես տեսնումեմ, որ իմ եղեւիցս մարդիկ են մանգալիս, ուզում են բռնեն, ես չեմ ուզում երկրորդ անգամ ձեռներս արնոտ անել, թէ չէ ճաղարանց ինսնու ջինսը կը կտրացնեմ։ Բայց ճաղարանք էլ որ չը լինին, իշխանութիւնը առանց պատժի չի թողնիլ ինձ։ Ես պատժից էլ չեմ վախնում, բայց իմ կեանքը ինձ համար թանգ աժէ, քանի որ սիրումեմ Հերիքնազին . .

— Վերջապէս ինչ ես ուզում ասել, էդ բոլորը առանց քու ասելու էլ գիտեմ։

— Վերջապէս էն է, որ ուզումեմ Հերիքնազին առնել էն կողմն անց կենալ, եթէ դաբուլ կանէք։ Ինտեղ, ինչպէս մեր օրէնքն է, կը պսակուինք ու մեզ համար հանդարտ կապրինք։

— Ես համաձայն եմ, Արզուման։ Թէպէտ շատ դժուար է ինձ համար իմ մի հատիկ քրոջից զրկուիլը, բայց լաւ է էդպէս անես, քան թէ սաղ աշխարհքը մեզ վրայ հաչացնես։ Բայց գլուխս, Հերիքնազը հիմի հիւանդ պարկած է, նա դողացնում է։ Պէտք է մի քիչ համբերես։ Եգուց չէ էլօր կերթանք ներքի ուրդը։ Ինտեղ չորս կողմը անտառ է։ Կարող ես մթնով գալ ջուխտակ ածարքու մօտերքը, ես էլ կը գամ էնտեղ, երբ որ լաւացած կը լի Հերիքնազը, քեզ իմաց կը տամ . .

Այս միջոցին քանի մի տաւարածներ շրջապատեցին Արզումանին ու Մարիամին. Արզումանը դրանց տեսնելով փախաւ, բայց Մարիամին բռնեցին։

— Ծաղիկը մնադ է, տուր, բզաւեցին երեք չորս բռի արջեր։

— Ի՞նչ ծաղիկ, ի՞նչ էք խօսում, ասաց Մարիամը շփոթուելով։

— Թողէք, թողէք, ասացին միւս տաւարածները, որոնք ճանաչեցին Արզումանին։ Դրանց ծաղիկը ուրիշ կռուածաղիկ է, մեր ուզած ծաղկիցը չի, ասացին տաւարածները և սկսան մէկ մէկու ականջում քչփչալ, տեսա՞ր տեսա՞ր, Արզումանն էր, Արզումանն էր . . .

—

Գ.

Միւս օրը սովորական հանդէսը մեծ ուրախութեամբ կատարեցին աղջկերքը։ Ծաղիկը կիսել էին և տուել երկու խումբի ձեռք։ Առաջին խումբի ձեռից խլեցին տաւարածները և ուրախութիւնից գժուածի պէս փախան, իսկ միւս կէսը խաղաղ և հանգարտցողելով, վերադարձան սրտխօսութիւններով։ Տաւարածները երբոր իմացան իրանց խաբուած լինելը, ած ծաղիկները խաչաձև փնջեցին և կովերի ճակատներիցը կախեցին, և այսպէս համ կովերը զարդարեցին ծաղկիներով, համ աղջկերքը կատարեցին իրանց հանդէսը առանց տղայոց հարկ տալու։ Բայց տղայքը մնաածեցին, որ այս նուրահնար խորամանկութեան առաջքը եկող տարի առնեն, որ ընծայից չը զրկուին։

Առաւօտեան վաղ վեր կացաւ Հերիքնազը և ուզում էր հանդիսին մասնակցել, բայց Մարիամը թոյլ չտուաւ, թէ կըմրսես ու դողդ կը կրկնուի, տաք կաց, որ լաւանաս շուտով։ Մարիամը չը պատմեց իւր գլ-

շերային այցելութիւնը Հերիքնազին թէ մի գուցէ հիւանդ լինելով լաւ տպաւորութիւն չանէ վերան: Հերիքնազը երկու մատանի ուղարկեց Մարիամի ձեռով, որ էն էլ գցեն բղուղի մէջ: Դրանցից մէկը իւր համար էր, իսկ միւսը Արզումանի: Այդ մատանիքները գուրս եկան թէ չէ, իրանց հարւանի աղջիկը Մաղթաղը վազելով բերաւ Հերիքնազին և սկսաւ մի առ մի յայտնել բոլորի վերայ ասածները:

— Դէ՛ ասա տեսնեմ, Մաղթաղ ջան, սրա համար ի՞նչ դուս էկաւ, ասաց Հերիքնազը ցոյց տալով իւր մատանին:

— Դրա համար Դախունց Թէլլուն ասեց.

Սիրելեմ սերն էրեսին
Ըէհան թերն էրեսին,
Ով իմ սիրածն ինձ չը տայ
Աստծու կրակն էրեսին:

— Ամէն, ասաց Հերիքնազը ուրախանալով: Դէ հիմի էլ էս ասա՛, սրա համար ի՞նչ դուս եկաւ:

— Դրա համար զիւլջհանը ասեց.

Ա՛յ տղայ, դու բաղոմն արի,
Ոտներդ շաղոմն արի,
Էս թաղը ղալմաղալ ա,
Ման արի, էն թաղոմն արի:

— Արի, մի՛ վախիլ, ա(րի, մռմռաց Հերիքնազը, բայց Մաղթաղին կարծիք չը տալու համար, սկսաւ խօսացնել նրան:

— Մաղթաղ, խօ սուտ չես խօսում, լաւ միարդ է, որ էդպէս դուս եկաւ:

— Իմ ախբօր աղեղ արևը, սուտ չեմ ասում:

— Ում համար ինչ որ դուս է եկել դիվ էլ միտս է: Ձեր Մարիամի համար այ ինչ դուս եկաւ.

Գնացի ջուրը ջրի,
Ոտը ընկաւ օձի լեղի,
Իմ հօրն ու մօրն ի՞նչ ասեմ,
Ինձ տուին զարիբ տղի:

— Էդ էլ է դրուստ դուս եկել, բղորդ որ զարիբ ապի է գնացել, բայց հէրն ու մէրն ինչ անեն, այս խեղճերը չէին խաբար իսկի: Դէ հիմի էլ Շամիրինն ասա թէ միտդ է:

— Շամիրինը դեռ չէր դուս եկել, որ ես էկայ, դրա խաբարն էլ Մարիամը կը բերի: Ինձ չը թողեց թէ ճնացել էի, թէ դնա՝ Հերիքնազը մենակ է, սիրտը կը նեղանայ, ինքը պառաւ կնիկ է դառել գլխիս, պառաւների հետ է նստել:

— Ի՞նչ պառաւ:

— Ինքն ու Արզումանի մէրը դրաղ էին քաշուել, չեմ գիտայ ինչ էին խօսում:

Հալբաթ Արզումանի վրայ կըլէին խօսելիս:

— Բա քու վիճակը դեռ չի դուս եկել.

— Է՛հ, իմ վիճակը, էնպէս բան դուս եկաւ, որ գլխուսանքն էլ քրքզացին: Քրքրուի խանումի ջանը. նա ասեց, կասենաս զասրդի հէնց ինձ համար էր հաղբուել: Ա՛յ ասեմ, տես ինչ դուս եկաւ.

Գիւլըմ գիւլըմ գիւլ չիչակ,
Ես ու դու մանենք մի փըչակ.
Մինչի լուսը քչփչանք,
Որ լուսանայ կչկըչանք:

— Դէ էլ ինչի՞ ես անիծում խեղճին, ուրախ բան է դուս եկել։

— Էհ ես դրա համար չեմ փիքը անում . . . Հերիքնազ, գիտե՞ս ինչ կայ, ես մի մատանի էլ Արզումանի համար էի գցել, տես ինչ դուս եկաւ նրա համար.

Դարիվեր ջուր է գնում։
Հարցրէք ո՞ւր է գնում,
Քէնուն մահանայ արած,
Իր եարի կուշտն է գնում։

— Դու Արզումանի համար ինչի՞ էլը վիճակ գցում, ասաց Հերիքնազը նախանձելով։

— Է՛հ, հէնց էնպէս, մտքումն ասի, խեղճ տղայ է, քուր չունի բան չունի, մի բան էլ նրա համար կը-գցեմ, տեսնեմ ի՞նչ է դուս գալիս։ Էդ որ դուս եկաւ, դիփուռնանքն էլ հարցրին. էդ ո՞ւմն էր, էդ ո՞ւմն էր, ես չասեցի, բայց յետոյ իմացայ, որ իրա քեռակինն էլ է մի մատանի գցել, մէրն էլ մի սագաթի խաչ էր գը-ցել։ Քեռակնկայ գցածը էս դուս եկաւ.

Կանցնեմ գետի էն կուռը
Կը քաղեմ դաստով նուռը
Թէ որ սիրածս ինձ չը տան
Կը քաշեմ խանի դուռը։

Մօր գցածիցն էլ էս դուս եկաւ.

Դեռը նի մռայ, խոր ա
Քաթան շապիկս նոր ա
Իմ նանին խաբար արէք
Ես օլքա օլքա կորայ . .

— Խեղճ նանի, ով գիտէ լաց էլաւ էդ որ լսեց։

— Զէ՛, նա ինքը չիմացաւ Հեռու նստած ձեր Մա-րիամի հետ էր խօսում, իրան խաբեցին, ուրիշ բան ա-սեցին, հա՛, ա՛յ ինչ ասեցին.

Դու նստել ես դօշակին,
Ուշքդ միտք փեշակին,
Խմել ես նռան գինին,
Հոտ կուներս մանիշակին։

— Ո՞ւր էր թէ էդպէս ըլէր։ Խեղճ նանի։

Հերիքնազը շատ սիրում էր Արզումանի մօրը։ Ար-զումանի սիրոյ համար նորան պատվում էր։ Մինչև այս տարուայ սար գալը Հերիքնազը նորա հետ մօտիկ յա-բաբերութիւն չունէր, ըստ որում բաւականին մեծէր իրանց գիւղը և նորա մի ծայրումը իրանք էին կենում, միւս ծայրումը նրանք։ Բայց այս անքամ մի բարեպատեհ հանգամանք մօտեցրել էր նրանց։ Գիւղացիք սովորաբար երբ որ սար են գնում, իրանց գիւղի դրացիների մօտ չեն շինում դազէքը, այլ հեռաւորների հետ և այս տեղ աւելի լաւ է երևում, թէ որոնք են իրարու հետ աւելի բարեկամ։ Սարի հարևանը միշտ սիրելի է լի-նում իրանց և քովէքով շարուած իրաքանչիւր ե-րեք չորս դազէն մի տան պէս են լինում։ Մարիամն այս սովորութիւնից օգուտ քաղելով բանն այնպէս բե-րաւ, որ դրացի դառնայ Արզումանի մօրը և ձեռքէն եկա ծի չափ նրան օգնէ և մխիթարէ։ Օրը, երկու օրը միանգամ Հերիքնազը լուանում էր նրա ոտները տաք ջրով ու չե-չաքարով, շաբաթը մի անգամ գլուխն էր լուանում, երկու շաբաթը մի անգամ լողացնում էր, ամենայն օր գլուխը քթվում, շորերը լուանում, կարկատում, ա-

մեն մի լաւ թիքա նրա համար պահում, ուտեցնում, ամեն երեկոյ տեղը շինում, քնացնում, շատ անգամ Շամիրը տանն էլած ժամանակը խեղճ պառաւի հետ պարկում միասին քնում, նորան գգվում, ... համբուրում և նորանով իւր սիրեկանի կարօտն առնում: Երբ որ Արզումանին միտն էր բերում, ուզում էր արտասուել խեղճ մայրը, Հերիքնազը չէր թողնում, այնպէս էր յոյս տալիս նորան ու մխիթարում: Խեղճ պառաւը չէր իմանում, ինչպէս շնորհակալ լինի այս երկնային հրեշտակից: Էս դարսը կնիկ եմ դառել, ասում էր նա շատ անգամ ուրիշներին, դեռ էսպէս հոդեղէն ոչ տեսած եմ, ոչ լսած: Խեղճ պառաւը չէր իմանում, որ սոքա ինչպիսի և ինչ յարաբերութիւն ունեցել են կամ ունին իր որդու հետ: Որտեղ նստում էր, Հերիքնազի ու Մարիամի գովասանքն էր անում, նրանց օրհնում, նրանց արևով երդվում: Ո՞ւր էր թէ Արզումանին յայտնի լինէր, որ Հերիքնազը իւր մօր պահապան հրեշտակն է այժմ:

— Ախչի, Հերիք, հանաքը դենը կենայ, ասում են դու Արզումանին սիրում ես. ըղորդ է՞, ասայ Մագթաղը պարզսրտութեամբ.

— Ի՞նչ կը լինի որ ըղորդ ըլի:

— Ինչ պիտի ըլի, էն կըլի, ինչոր էլել է Քեռամուն ու Աղուն: Երկուսդ էլ էդ սիրովը կերուիք, ձեր մուրազին չէք հասնի:

— Ես լաւ եմ համարում նրա սիրովը երուիմ, քան թէ մի ուրիշի սիրով կանանչիմ, էդ էլ գիտե՞ս:

— Դու լաւ ես համարում, ամմա թէ քեզ թողնեն է՞: Ես էլ եմ ուզում Գրիգորի սիրովն երուիմ, բայց ո՞վ կը թողնի: Իմ հէրն ու մէրը ասում են, ուզես չուզես, քեզ պիտի Կիրակոսին տանք . . . Է՜, Հերիք Ջան, ես էլ դարդեր ունեմ քեզ նման: Շատ անգամ ինձ ու ինձ որ փիքը եմ անում է՜, ասում եմ էլ մենք ինչացո՞ւ ենք, որ իսկի մարդու տեղ չենք դընում, հէնց ում ասես տալիս են, էլ հարցնել կայ, ոչ դէս ոչ դէն: Բայց էլի քու բանն իմիցը դժար է: Ես որ Գրիգորին ուզեմ, էլի հաւատալու է, կը սովրացնեմ, մի գիշեր կը գայ կը փախցնի, մի երկու օրից յետոյ կըպսակեն կերթայ: Բայց դո՞ւ: Քեզ որ փախցնեն, պիտի օլքա օլքա կորցնեն, էլ երեսդ չենք տեսնիլ: Դու էդ կա՞նես:

— Ինչի՞ չեմ անել, թէ որ տեսնեմ ուրիշ հնար չըկայ: Ինձ համար էնտեղ է լաւ, որտեղ որ ինձ սիրում են . . .

— Մեզ կը մոռանաս, էլ չենք տեսնիլ քեզ, մի՞թէ մենք չենք սիրում, ումի՞ց ես դառը խօսք լըսել, ո՞վ է քեզ ասել տեղդ ծուխ է, դէն նստի, մենք ամենքս էլ քեզ սիրումենք, մեր գեղումը մի աղջիկ, մի կնիկ, մի մարդ էլա չկայ որ քեզ չըլի սիրելիս: Մեզ պիտի թողնես, ընկնես սարէ սար, գնաս դարիր դուրբաթ տեղ: Օ՛ էդ դժար բան է, ասիլն է հեշտ: Մեր սարերի պէս սարեր, մեր ջրերի պէս ջրեր, մեր բաղերի պէս բաղեր, մեր քօլերի ու անդերի նման՝ ոչ մի երկրում, ոչ մի աշխարհքումչես գտնիլ: Էդ էլ գիտե՞ս թէ չէ . . ,

— Քրքրուիս դու, Մագթաղ, հիմիկուանից լացս բերում ես: Ախչի՛ մէկ թող դեռ լաւանամ, յետոյ Աստուած ողորմած է: Ինչոր մարդուս ճակատին գը-

բած է, էն կըլի, հազար դու էլ ասա, ես էլ։ Հիմի ջանս սկսումէ կոտրտել էրէկսայ պէս. ով գիտէ, էլի պիտի դողացնեմ, ես հէնց իմացայ թէ պրծայ։

— Օ՛ դրան դող կասեն, դեռ որտեղ ես։ Ամեն օր կէսօրից յետոյ պիտի բռնի։

— Բա սրա համար մի դեղ ու ճար չը կա՞։

— Դրա ճարն էն է, որ դողդ բռնի թէ չէ, գնաս վրէդ սառը ջուր ածես, իմանո՞ւմես, երբոր տաքութիւնդ բռնած կը լինի էն վախտը։ Է՞նքան պիտի ածես, որ ջանդ սկսի ընդը ընդը դողալ, յետոյ կը պրծնես։

— Ասումեն վախն էլ կը պրծացնի։ Դու մի օր ինձ վախեցրու, մի բաշ վրէս ջուր ածա, բալքի պրծնեմ։

— Էդ սուտ է, ինչ կուզէ վախացնեն չի պրծնուիլ։ Էդ չէ, ասումեն Նունիա մի տէրտէր կայ։ Ծալկու գեղերումը, գիտես. էդ տէրտէրը աղօթումէ թէ չէ, էն սահաթը կորվումէ դողը։ Ըղորդ է Մոլա-Ալին էլ է պրծացնում, բայց էս տէրտէրի հատը չի ըլի։ Ինչ էրբերք կնիկ ասես, որ գնումէ Նորա մօտ, նա մի գիր է անում թէ չէ, տարուայ գլխին կնիկը տղայ է բերում. աղջիկ էլ չէ, որ մեղ նման անբաղտ չըլի։ Էլ նղաւոզ ասես, գիժ ասես, Նրա դուռը լիքն են լինում։ Էս օր էլ Կիրակոսի հէրը իրան մունջ տղին տարաւ Նրա մօտ, ով գիտէ էգուց էլ օր կը բերի լեզուն բաց էլած . . .

— Դէ էդ տէրտէրին ո՞րտեղ գտնենք էս սահաթիս։ Արի մի ման վեր առնենք, գնանք ձորի աղբիւրը, էնտեղ մարդ չի տեսնիլ, ես կը տկլորուեմ, դու

իմ վրէս ջուր ածա՝ ինչքան որ գիտես։ Շուտ արա գնանք թէ չէ, Մարիամը որ գայ էլ չի թողնել. միշտ ասումէ չմրսես, չմրսես։ Ղորդ էլ է ասում խեղճը, էն օրը որ ես էն թաց տեղը քնած չըլէի, ով գիտէ չէի էլ դողացնել . . . Արի՛, արի՛ գնանք, հիմի ինչ կըլի, կըլի, եա դէս կըկորի, եա դէն։

Հերիքնազը գնաց լողանալու։

—

Դ.

Վարդավառից մի օր յետոյ, այսինքն երկոշաբթի օրը սարեցիք ծաղկափթիթ լեռներից վեր եկան և իջան նոցա սաղրոտաներումը մի անտառուտ հովտի մէջ։ Մինչև այս ուրդը տեղափոխուելը գիւղացոց մեծ մասը դեռ ևս սրանումն էին, բայց հիմայ որ արդէն հունձն աւարտել ու խուրցը կրել էին կալերի մօտ գիգել, բոլորեքեանք եկել էին սար, որ մի քանի շաբաթ սառը ջրերի վերայ հովանան; Գեղայոց այս սովորութիւնը ամենայն տարի կրկնվումէ։ Մայիսին ուղարկումեն տաւարը և նոցա հետ տաւարածներին, կանանց և երիխայոցը, իսկ տղամարդիք մի քանի բըզնած պառաւների հետ սպասումեն մինչև հունձի աւարտը։

Շատ անգամ ամբողջ ուրդի մէջ շաբաթներով տղամարդի երես չի տեսնվում և այդ պատճառով չափազանց զովացած դեղեցիկ տեղը փոքր ինչ տաքանալու հակամիտութիւն է ցոյց տալիս։ Գիշերային արկածքներ պատահումեն երբեմն հարսների ու

տաւարարածների մէջ, բայց առանց Ճնասակար հեռանքի չի մնում: Ինչ և իցէ . . . Արանի մարդիկը երբոր հաւաքվում են այստեղ, որպէս թէ մի քանի խաղաղ և հանգիստ օրեր անցկացնելու մտօք, բայց նոցանից շատ քիչերն են վայելում այդ ցանկութիւնը, նոքա մեծ մասամբ անդադար աշխատում են և իրանց գործածական փայտեայ հաՃլենէրը՝ օրինակ՝ սայլ, գութան, կամն, լուծ, հորսելի, թի, խնոցի, մղաւ, խոնջայ, տաշտ, տաշտակ, խփի, բոտին, զանազան կոթեր, գդալներ, շերեփներ եւ ուրիշ բաներ այստեղ են լինում:

Այսպէս, մի քանի մեծամեծ կաղնու շուաքի տակ, իրանց համար գործատեղի էին արել և երեսուն-քառասուն մարդ որն ուրաքով, որը կացնով տաշ էին անում, իսկ անգործները մօտերը պարկոտած, քընած կամ նստած թամաշա էին անում գործատէրնեերին և որին փոնում, որին գովում էին, թէև իրանցից շատերը մի սամի շինելու չափ շնորհք չուէին և Գէօշ-ուսպոռ (աչքով վարպետի) տիտղոս էին առել իրանց վերայ: Շամիրն էս այս անշնորհքներից էր, բայց դդալ շինել լաւ էր իմանում: Սա անցեալ երեկոյին էր եկել արանիցը: Առաւօտեան վաղ վեր կացաւ և իւր փոքր ուրաքն ու կրակիոցը առաւ գնաց հատարակաց գործատեղին, որ գդալներ շինէ: Շամիրը նոր արդէն տեղ էր հասել և դեռ էս նստած չընստած, Ճաղարանց Թաթոսը ամբոխի միւս ծայրից կանչեց

— Ա՛ Շամ, Շամիր հէյ, հէ հէ Շամիր, բաւեց Թաթոսը, քանի մի անգամ կրկնելով Շամիրի անունը, որովհետև բազմաթիւ կացինների և ուրաքներ թխկթխկոցը թոյլ չէր տալիս շուտով լսելու մի խօսք, թէև առանց այս էլ բաւելու սովորութիւնից զուրկ չէր Ճաղարանց Թաթոսը:

— Հը՞ նչա, ապէր:

— Արանիցն ի՞նչ խաբար ունիս:

— Խէր խաբար լօխ էլ լաւ ըն, ձէր տղէքը թխուալ ըն, սրտընէն մածուն ա օգուտ:

— Ասում են Հանէսի գլուխը պատռել են Ճաղարանց տղերքը, ըզորդ է, հարցրեց մի ուրիշը:

— Ճաղարանց տղէքը ինչ ասես, կանեն, իրանք օխտնուած հոգի, Հանէսը մեն մենակ: Գցում են արլեի մէջը, բահով էնքան են վեր հատում գլխին, որ քիչ է մնում թէ մեռնի, թէ որ տղէրքը հատած չը լինէին, ասաց տուշ անուղներից Վարթան անունով մէկը, ուրաքն ուսին գնալով, և յետոյ գարձաւ դէպի Թաթոսը և շարունակեց իւր խօսքի թելը աւելի կրքով և բարկութեամբ:

— Ա՛ հլիւոր, ինչի՞ քու շների կապը չես քաշում. ամեն մարդ պէտք է Ալզումանի նման գլխիցը ձեռք վերցնի, որ նրանց հետ խօսի: Էլ ոչ Ջուարի էք մտիկ տալիս, ոչ քոխվի էք անկաջ դնում, էդ ինչ անաստուածութիւն է, որ դուք անում էք: Էն օրը քիչ մնաց ինձ սպանում էին: Ասում եմ Ջուրը նոքա թողէ, Ջուրն ինձ է պուտ, թէ Ջուարին . . . դէ արի մի սպանի դրանց: Ասած է " խանդ, սուր ա, յանդը բաժանովի ա ,, : Ասենք թէ ես մի վենակ տպայեմ, քամակ չունեմ, հէնց պիտի ինձ դուխ ասակ գըցէք: Էնպէս բան արէք, որ Վրատած վեր կալնի, թէ չէ, Սուրբ Սարգսի անումը վկայ է, մի օր էլ ես գըլ-

խիցս ձեռը կը վերկանեմ, էն ժամանակը տեսնենք ում մեր տղայ կը բերի: . . .

— Ա՛դա ի՞նչ ես հաչում, ի՞նչ ես գլխիցդ սարսաղ սարսաղ դուս տալիս: Արզումանի նման շանիցն ես օրինակ առնում: Մարդասպանը դու ես, որ մարդասպանին ես քոմակ անում: Համբերի հալա մի մոզրովը գա՞, տես քու կաշին վոնց եմ մաշկելատալիս . . .

— Ես ու իմ Աստուածը Արզումանն անմեղ էր: Բոխվէն նրան հողէր տուել, նա գնաց վարելու: Ձեր բաղի տակի հողը, Ներքի հողերի քիօնդալանը, ցաքուաի դիքավարը, քոլաբերանքի սիպտակ հողը, դամիի չորս օրուան տեղը, որ ունինք հիմի, ում են էդ տափերը. Արզումանի հերը չէր վարում, էդ նրանցը չէր, որ նա մեռաւ թէ չէ դուք ձեր ճանկը գցեցիք . . . Չի՞ էլ ամանչում, անումը պառաւ մարդ է դրել, սաղ գեղը քանդում տակն ու վրայ է անում, ...

— Տօ տեսնում էք էս շանը ինչեր է հաչում:

— Վարթան, մի՛ վախել, մի յաւ բէսաբուռ արա, քանի որ մենակ է, շշնջաց Վարթանին մի ուրիշը, բայց Թաթոսը կարծեց թէ ասում է, սուս կաց. ամոթ է, ծեր մարդ է, էդպէս խօսքեր չի կարելի ասել, և սկսաւ աւելի կատաղել:

— Տօ տեսնում էք էդ շան տղին ինչեր է խօսում. . . . գիշերս Արզումանը քու կշտին ինչէր անում, ասա տեսնեմ, դու ի՞նչ իրաւունքով ես մարդասպանին տեղ տալիս, հը՞:

— Մոդոնի, մոդոնի, որքան կարաս շառեր մոդոնի, ես քու սուերիցը չեմ վախենում: Դու որ Արզումանին ինձ մօտ տեսել ես, հայրաթ մի քանի մարդ էլ ուրիշ կրլե տեսած, ասա տեսնեմ էլի ով է տեսել, վկայ ունիս:

— Ես սաղ խալխը քօռ հօ չեն, բոլորն էլ վկայ չե՞ն:

— Խալխին ուր ես վկայ բերում, Թաթոս բիձայ, խալխից մէկն էլ ես եմ, Արզումանի երեսը չեմ տեսել, ասաւ մէկ ուրիշ տաշ անող գլուխը բարձրացնելով և ճակատից քրտինքը կոշտացած ձեռքովը սրբելով:

— Ա՛յ խալխ, ա՛յ ջամհաթ, չէք լսել, որ Արզումանին օրը ցերեկով, կէս գիշերին, տեսել ե՞ն . . . . բղաւեց Թաթոսը:

— Արզումանին Վարթանի մօտ ոչով չի տեսել, ձայն տուեց մի ուրիշը, էն օրը ծաղկաքաղին աղջկերքն են տեսել, Շամիրի կնկայ հետ է խօսել, էն գիշերն էլ վերի աղբիւրի դռաղին են տեսնում, էլի Մարիամի հետ:

— Կէս գիշերին, Մարիամի հետ, շշնջաց Շամիրը, չը հաւատալով իւր լսողութեանը: — Մինաս, դիւ ինքը՞ հրսկանում ը՞ս, էտ հինչ ըս ասում, ասաց Շամիրը:

— Ինչպէս թէ հրսկանում ը՞ս, խուլ հօ չե՞մ. Արզումանին տեսել են քու կնկայ հետ խօսելիս, ուրիշ մարդու հետ չեն տեսել:

Շամիրը վեր կացաւ տեղից և փնթփնթալով գընաց դէպի դագէն: Նորա քամակից հեռացաւ և ձաղարանց Թաթոսը:

— Էդ ձաղար քոփակիցը մարդու խէր չի հասնիլ, սիրաս ասում է էլի մի արիւն պիտի պատահի:

Մինաս, դու էլ որ մի քիչ բերանդ քեզ պահէիր, չէր ըլի՞: Շամիրը որ կայ, բուի առջէ, [redacted] հիմի պիտի գնայ կնկանը ոտի տակը գցի տրորի, ես գիտեմ նրա խասիաթը, ասաց տաշ անողներից մինը, երբ որ Շամիրն ու Թաթոսը հեռացել էին:

— Ես Մարիամի վրայ փիս բան չեմ փիքր անում, պատասխանեց Մինասը, ես հօ չասեցի, որ ուրիշ բան կայ մէջ տեղը: Մարիամին Արզումանի մէրը կը լի ուզարկած, չունքի ինքը պառաւ կնիկ է, չի կարում տեղիցը ժաժ գայ . . .

— Դէ էդպէս պէտք է ասէիր, դու էնպէս ասեցիր, որ նա ուրիշ բան հասկացաւ:

— Դէ լաւ հիմի, դու գնա լաւ հասկացրու: Ես ինչ որ լսել էի, էն ասեցի: Ես ի՞նչ գիտեմ Մարիամն ինչի՞ համար էր գնացել: Ժամանակիս կնկանը մավա գնալ չի ըլի: Էդ քոփակ շունը որ չըլէր, ես էդ էլ չէի ասիլ: Ինչ պէտքս է, էշն իշին, իշատէրը իրա հօրը, դաւա երդը՞ն, - դեօրմաղըմ . . . .

— Բարի յաջողում, տղէք, Աստուած զու�թ տայ, ասաց Սարգիս քոխվէն մօտենալով մեր բանուորներին:

Ե.

ՄԻՋԱՆԿԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սարգիս քոխվան մօտ յիսուն տարեկանի կարճամօրուք և միջահասակ մարդ էր: Նորա դէմքի գծագրութիւնը ցոյց էր տալիս, որ բաւականին չար ու բա-

րի տեսած և զանազան փորձերի ենթարկուած մարդ էր: Սորան շատ պատվում էին ջահելները, ըստ որում իւր բարեխեղճութեան և անաչառութեան հետ ունէր և ազատասիրութիւն ու քաջասրտութիւն: Ոչ ոք գեղի հաւատարմութիւնը այնքան գրաւած չէր, որքան սա- Իւր հասակակից մարդկերանցից ոմանք իրան թշնամի էին, և շատ էին աշխատում նորա տեղն անցնել, բայց ջահելներից պաշտպանվում էր միշտ և այս պատճառով արդէն վեց տարի շարունակ քոխվութիւն էր անում և յոյս կար քանի մի տարի էլ շարունակելու:

— Աստուծու բարին, ասացին մեր ժրաջան մշակները պատկառանօք, և որոնք որ պառկոտած էին տեղերիցը վերկացան և փեշերը թափ տալով պատուաւոր տեղը քոխվին թողին:

— Տղէք, թաթոսն էստեղ էր, ուր գնաց, ասաց քոխվէն նստելով:

— Ես տեսաւ որ դու գալիս ես, ինքը ռադ ելաւ, պատասխանեցին քանի մի ձայներ:

— Ա՜յ ձաղալ շուն . . .

— Սարգիս բիձա, էդ անիրաւի ձեռին մենք մինչև երբ պիտի տանջուինք, գանգատուեց Վարդանը:

— Մինչև որ լաւ իմանաք, թէ ինչ մարդ է դա:

— Տօ, ով չի ճանանչում էդ քոփակին . . մեղայ քեզ Աստուած, ինչի՞ է դալիս բերանս . . .

— Է՜ . . . Ոչինչ չէք գիտում, որ գիտենայիք, ձեր սիրտն էլ իմի պէս կէրուէր: Էս տեղերիցը որ հիմի մենք սարալանի (խոտահարկ) ենք տալիս, առաջ ով էր իմացել էդպէս բան, ինչպէս կասեն, գառն ու գէլը իրար հետ պրծում էին: Էդ-էդ-էդ անիրաւը գնաց

մի վրացու տակ մնաս, թէ ինձ մի տասը թուման տուր, ես կը հաստատեմ, որ էս տեղերը քունն է, թէ մենք միշտ սարալոխի ենք տուել, միշտ բահրա ենք տուել: Էն օրուանից դէսը խոտիցը ջոկ են առնում, փեսիցը ջոկ են առնում, մի ծառ ենք կտրում հաջաթի համար, նրանից ջոկ են առնում, բաղի համար սարի է պէտք, տուն ես շինում, ամբար ես շինում դերան է պէտք, դրանց համար էլ ջոկ են առնում: Հիմի ես ինչի՞ պիտի մի թիու համար երկու շահի տամ, իսկի թին ինքը երկու շահի չաժի, բայց չէ, ասում է մի տաղ ծառ ես կարել, նրանից տասը թի դուս կը դայ: Էլի էս ջհանդամը գնայ, գլուխը քարը տայ: Մեր դեղի հողերը որ դիփ էլ տիրապետել են, դիփ էլ էդ շան հունարը չի: Ո՞վ էր Թաւադի անում իմացել, ո՞վ էր նրանց երեսը տեսել: Քանի որ Մելիք Ապովը սաղ էր, ո՞վ հադդ ունէր, որ տսէր աչքներիդ վերան ունք կայ: Երմալովի ժամանակը մեր դեղի բոլոր յանդերը, էս սարերը, դիփ էլ մեր ձեռին էր: Էն ժամանակը ինչքան հող որ ցորնով էինք լցնում, հիմի էն հողերը դարմանով չենք կարում լցնել: Մեր կալի միջի հարուր թաղարանոց հողը հիմի ախպով եմ լցրել, էլ ինչին է պէտք, երբոր էնքան ցորն չի գալիս, որ քթոցներն ու ջուալներն ածենք, ուր մնաց որ հողերը: Քաղաք որ աբուր էինք տանում, սիպտակ լուսի նման հացը Թաղարը մանէթուկիսով, երկու մանէթով էինք տալիս, հիմի փութն է դառել երկու մանէթ: Բայց ինձ ի՞նչ, որ հիմի թանգ է: Էն ժամանակը ըղորդ է էժան էր, բայց մի հարիւր թաղար որ ծախումէի, էլի մի քսան թուման փող էր անում, հիմի պիտի քսան թուման

պարտք անեմ ամէն տարի, ինքս հաց առնեմ, որ ելեսէքս քաղցած չը կոտորուեն: Ո՞վ է մեղաւորը, այ էդ քոփակը, մէկ էլ Մաթոսն ու Մարկոսը, ողորմի նրանց կշտի մեռելներին, նրանք սրանից բէթար էին:

— Բա դու ի՞նչ էիր շինում, չէիր կարում ասես, դրանք սուտ են ասում:

— Էն ժամանակը իմ ըռխին ով էր մտիկ տալս. ես էլ ձեզ նման մի ջահել տղայ էի, լաւ էլ տեսնում էի, որ իրանց ձեռով իրանց տները քանդում էին գեղցիք, բայց ինչ կարող էի անել: Մէկ էլ տեսանք, հրէս մէկ մէկու եռևից եկան: Էս ո՞վ է՝ Զիչակով են ասում, նա է: Էս ո՞վ է՝ Դարիվոնը է: Էս ո՞վ է՝ Ուշնաշոնը է, էս Անանանն է, էս Թարաբոնը է, մի խոսքով էլ Թուլաձէ ասես, Շնաձէ ասես, Նաիլէբրով ասես, ով պիտէ... Կէղէր Նախլուսով, Դուբհէրով... Ծիծաղն էս էր, որ մի տեղի տասը քսան մարդ դաւի էին անում: Խաղնի մարդը ասում էր «Էս կաղնոնոնք, Սիոնի մարդն ասում էր վանքական է, մի տասը քսան Թաւադ էլ ջոկ ջոկ էին տէր դառնում: Խաղնի ու վանքի մարդիկը աչքերները էս ու էն Թաւադի վրայ էին գցում, թէ տեսնենք որից շատ բան կը հանի մեզ, որ մենք ձեռք վերցնենք, խաղնէն շատ որ զարար անի, նրանց ի՞նչ: Գեղացոց էին հարցնում, թէ դուք ինչպես էք տեսել, էս տեղերը ո՞ւմնէ, ո՞ւմ էք բահրա տուել, գեղցիք էլ էդ անիծածներին էին ընտրել, Թաւադները մի մի ստաքան չայով խափել էին, թէ ասեցէք մենք փլանին բահրա ենք տուել: Լապէսութենով մեր բոլոր հողերը ընկաւ դրանց ձեռքը, մենք էլ մնացինք իրանց ձեռքին դերի: Ասած է. տափը հարամ չի վեր կալնել,

էնպէս էլ էլաւ, հարամեցին մուռտուեցին հոլերը, տակը խռովեց, էլ մնասուլ չի տալիս։ Առաջ մի թաղար որ ցանում էինք, քսան էինք վէր կալնում, հիմի շատ անդամ սերմն էլ չենք կարում վէր կալնել, էն էլ հողատէրն է դալիս ձեռներիցս խլում, դէ արի ապրի։

— Բա՛ թուլաձինը չէս ասում Սարդիս բիձայ, թուլաձին ի՞նչպէս փախցրիր։

Սարդիս քոխվէն միտը բերաւ իւր ջահելութիւնը, մէկ քթահաղ տուաւ և երկէն բեխերը սրելով սկսեց.

— Էդ թուլաձի բանն էլ մէկ ծիծաղ էր։ Դա մի երկու տնդամ եկաւ մեր բաղերի տակի հողերին դաւի տուաւ, թէ էս տեղերն իմն է, պիտի բահրա տաք։ Հիմի էլ որ մի ոս եմ բերում, ծիծաղս գալիս է մեր խալխի վերայ։ Դուք մեծանաք բալքի ձեզանից մարդիկ դուս գան, թէ չէ էս փտած պառաւներիցը ձեզ խէր չը կայ զարարից սավահի։ Էն էի ասում։ Մի օր էլ եկաւ էդ թուլաձէն հրաման ձեռին վեց օխտը մարդ քամակիցը դըցած, թէ դէ բերէք բահրէն տուէք, մողրովիցը հըրաման եմ բերել։ Մեր աղասխակալը մարդիկը հաւաքուեցան թէ ինչ անենք. տանք թէ չը տանք։ Մի քանիսն ասեցին, եկէք բահրա տանք, ռադ ըլի, հալբաթ իրանն է, որ բահրա է ուզում, մի քանիսն ասեցին չը տանք, հիմի որ տանք իրայ վրայ կըհաստատի, յետոյ կըգայ չորսից մէկը կառնի, հիմի քիչ է ուզում, որ խաբուինք տանք, եկէք չըտանք։ Մի քանի վախլուկ մարդիկ էլ սրտները դող ընկած ասում էին, ուզենք չուզենք պիտի տանք մողրովիցը հրաման է բերել, մողրովի հրամանին ո՞վ կարայ ընդդէմ կենալ։ Էդ ժամանակը քոխվէն էլ ողորմածիկ Ակոփն էր, նա վէր կալաւ թէ՝ հրամանն ինձ վերայ է, ես բանի տեղ չեմ դնում, մողրովն ինչ գիտէ թէ էդ տեղերը դրանն է, որ հրաման է տուել, բալքի իսկի մողրովը չի տուել էդ հրամանը, ո՞վ գիտէ։ Չէ. չըպիտի տանք։ Բանն էնպէս վճռուեց, որ պիտի չը տանք։ Լա՛ւ, էս մեր թուլաձէն տեսաւ որ բանը չի յաջողում, շորերը փոխեց, մի ռսի սէրթուկ հաքաւ, ապելատնիր դրաւ ուսերին, իրա մարդիկը քամակիցը գցեց գնաց հորթերի առաջը կտրեց։ Հորթերը քշեց տարաւ մի աղալի մէջ ապրաւ, թէ չեմ թողնել մինչև իմ բահրէն չը տաք։ Հիմի կովերը եկել են առաւօտուայ արօտիցը բառանչ են գալիս, հորթ չըկայ, որ կթուին։ Հիմի էլ որ միտս է գալիս, ջանս զարզանդում է, հորթերի ու կովերի բառանջը սար ու ձոր դրմբացնում էր։ Ասա՛ քեզ ի՞նչ են արել էդ անմեղ հայվանները, դրանք ի՞նչ մեղաւոր են։ Մարդիկը դիփ էլ փախել են տները դառել, վախում են թէ դուս գան, որ մի կռուի, մի շառի մէջ չընկնին։ Էս անիծած ճաղարը դուս է եկել իրանց կորին կանդնել, ինքը իրան պարծենում է, ահ է տալիս մարդկերանցը, թէ վո՞նց ա, որ ասում եմ եկէք բահրա տանք, ինձ չէք անկաջ դնում, դէ հիմի գնացէք հորթերը բերէք։ Դու մի ասի, հէնց էս քոփանն է սորվացրել, թէ դու հորթերը տուն արա, գեղջի են, կը վախեն, բահրէդ կը տան։ Ամմա ի՞նչ կը տան . . . Ես էլ ջահել տղայ, արուինս եմ եկաւ ջանումս, մի մեծ բըհիր հանեցի չափարիցը, հասայ էս քու թուլաձին։ Բըհիրս վրայ բերի թէ չէ, թուլաձի թուրը երկու կտոր էլաւ, չունքի թուրը հանել կշտին կաղնել էր, որ

ոչով չը մնացանայ: Մէկ էլ որ հացրի, ինքը գնանին փռուց ու Ֆշվէնէն (օգնեցէք) բղաւեց: Ո՞վ պիտէր Ֆշվէնէ անի, յետ մոիկ տուի, տեսնեմ ողորմածիկ Ղուկասը նրա բիճերին աղցան է արել: Լսպէս ջաս ու բուրթ արինք քու Թուլաձին, էն գնալն էր որ գնաց, էլ նրա էրեսը չը տեսանք:

— Ա՛յ լաւ դատաստան, ասաց մի ուրիշ մարդ քովվին հասակակից, գնում ես գանդատ, տանում են բերում. բերում, տանում են, մարդի հոգի է դուս գալիս, դրանց ղանդրէ՞ (էգուց) չի հատնում: Սրան մեղրահացեր տար, նրան գառը տար, մէկէլին թաղարներով աղուր, մի ուրիշին փող տուր, մէկի ոտներն ընկիր աղաչեր . . . Ո՞վ է գեղացու ըռխին մոիկ տալի: Տանով քսանով գնում ենք դիւան խանի պատի տակին շարվում արեգուն արած խոզերի նման, ո՞վ է մեզ մարդու տեղ գնում, գիր չենք գիտում, օրէնք չենք գիտում, մի քիչ էլ որ էրեսներս պնդացնում ենք, ոտոբոծը շնքներիս տալով դուս է անում, ֆէէէ գօվբրա՞ն նի ՀՀէ, դուսաֆ ֆի ֆաչ (քեզ ասում են մի մանի, յիմար դու): Լսպէս քաշ արի, քաշ արի, յետոյ արի տանդ վեր ընկիր: Դեղացիք էլ ասում են տարաք մեր փողերը կերաք ոչինչ չը շինեցիք: Տ՚ ձեր փողերը զահրմար ըլի ուտողի գլխին, մենք ենք ուտում . . .

— Լդ լաւ դատաստան է, Պետրոս, բայց ամէն անգամ չի մարվում էդպէս դատաստանը: Դրա վրայ որ մի տարի անց կացաւ, Նախըլուսվին էլ ծեծեցինք, բայց աճսար, քիչ մնաց որ Սիբիր ուղարկեն: Սաքի որ ուղարկէին էլ, ո՞վ էր հարցնողը . . .

— Լդ ի՞նչպէս էլաւ, Սարգիս բիձայ, մէկ էդ էլ

պատմի, ասացին ջահելները և իրանց գործը թողնելով, որպէս թէ հանգստանալու համար, շարուեցին քովվի չորս կողմը: Քովվէն չիբուխը լցրեց և չախմախն խփելով սկսեց իւր պատմութիւնը:

— Ա՛յ ինչպէս էլաւ: Ողորմածիկ Ղուկասը (Արզումանի հայրը) մի առաւօտ եկաւ ինձ մօտ: Ես ու նա ընկեր էինք, ուր էլ որ գնայինք, միասին կերթայինք: Լուսահոգին քսան մարդու չէր ասիլ, թէ Աստուած է ստեղծել, ահ ասած բանդ նրա պատումը չը կար: Թէ նա սաղ կը ընէր, ես եմ գիտում, թէ ճաղարի գլխին ինչ ոյին կը գնէի, բայց հիմի թող գնան նրա գերեզմանի վրայ մամ վառեն, իրանց արևի ձէնն ածեն: Մախլասի, էն էի ասում Ղուկասը եկաւ մօտս, թէ ի՞նչ ես նստել, արի գնանք կակալ թափ տալու: Ի՞նչ կակալ, ո՞րտեղ, հարցնում եմ նորան: Նա թէ՝ մեր հողի կշտի կակալին կոտրատվում են, էնքան կայ վրաները, ոչով չի թափ տալիս. ասում եմ Նախսուլվին ինչ դաւի ունի. նրա հողումը չի, միբան չի: Նա թէ՝ ես էլ հէնց էդ եմ ասում, արի գնանք, թող ով որ զոչաղ տղայ է, գայ մեր առաջը կարի: Մէկ մէկ երկէն կակալթափի (ձող, սրբրող) առանք գնացինք: Հէնց նոր էինք ծառը նի էլել, մի մի ճիւղ ես թափ տուած կը լինէինք, ես չէ, մէ՛ էլ տեսնենք օխանութ հոգի ծառի տակը կարեցին: Նախսուլվի բճերն էին: ԴՀՀՀՀՀՀ ՆՀՀՀՀ ՀՀՀՀՀ՞ (վայր իջէք, ձեր հաւասը) որ չասեցին, մեր Ղուկասի աչքերն արնով լցուեց: Տօ ես ձեր ՀՀՀՀՀ՞ էլ, ձեր . . . Լսպէս ուշունց տալով վեր եկաւ մեր Ղուկասը, երկէն սրբրողը ձեռին զրաղ կաղնեց ու սրանց վրին թէ երկու, էլ խակի չը թողեց որ մնանան: Ես էլ բանից սակաս գիժը չէի, վեր եկայ թէ չէ, ես էլ իմ

ձողին քաշեցի, սրանց կալ մէջ արինք, հիմի վոնց են բուդուր-բուդուր ընկնէլ . . . Չէ, տեսան, որ բանները բուրթ է, փախան գլխները պրծացրին։ Սրա վրայ մի սահաթ չի անց կացաւ, մէկ էլ նայեսանք հրէս ինքը Նախաուլովը մի քսան հոգի քամակիցը գցած եկաւ։ Ասի. Ղուկաս, սրանց հետ կռուիլ չի ըլի. արի մարդավարի ասենք, էս ծառերը քունը չի, դու ինչ իրաւունք ունիս, որ ղադաղայ ես անում։ Նախաուլովը եկաւ թէ չէ՝ փափախնիս վեր կալանք առաջին կանգնեցինք, որ ինչ որ հարցնի, պատասխան տանք, ու մենք էլ մերն ասենք, բայց էն անիրաւը խսկի բան չը խօսեց, հէնց եկաւ թէ չէ, շաղէ՝ոլին ասեց մոգիլնի «Ջո՝-լի» (կապտաներգէք դրանց հաւասը), էլի «Ջո՝-լի» որ լսեց մեր Ղուկասը, փափախը ձեռքիցը վեր ընկաւ։ Կատաղած ասլանի նման ընկաւ էս քու Նախաուլովի վրայ, տեղնուտեղ վեր կոխեց. սրանն չոքեց, մի երկու բճի էլ նրա վերայ դցեց։ Ես էլ, ուզում եմ նրան օգնեմ, բայց գլխիս որ խփում են, շշմում վէր եմ ընկնում։ Մէկ էլ աչքս էն տեղ եմ բաց անում, որ իմ էլ նրա էլ ոտ ու ձեռները կապել վեր են դցել։ Էլ ինչ գլխներդ ցաւացնեմ, մեզ տարան մոզոովի կուշտը. իրեք օր էնտեղ դուզսաղ արին, իրեք օրից յետոյ տարան քաղքի նարինզալան դցեցին։ Դէ հիմի արի էտեղից դուս արի։ Մեզ դուզսաղի շորեր հագցրին, ջուր էին կրել տալի, սև հոգ ու քեալամ էին ուտացնում, մախլասի իմ դուշմանի գլուխը չը գայ, ինչ որ մեր գլուխը եկաւ։ Իրեք ամիսը որ անց կացաւ մի օր դուս բերին մեզ, տարան մի գիւան խանա։ Էդ գիւան խանի գլխաւորն էլ ինքը Նախաուլովն էր, մենք չէինք գիտում։ Վէր գցել տուաւ

մեզ էս մեր Նախաուլովը «ողէի խփել տուաւ, քսան էր, հարուր էր, միտս չի, խսկի ով կարս համբրի, երբ որ իրան ըլին խփելիս, քամակներիս կաշին մնչկեց, շան որթին, երեք ամիս էլ տեղումը պարկեցինք։ Երբ որ իրա ջիգրը հանեց, թէ դէ հիմի գնացէք խելօք կացէք, իմացէք թէ ինչ մարդու հետ գործ ունէք։ Մեր շորերը յետ մեզ տուին, եկանք մեր անները, ինչպէս ասեցի, իրեք ամիս չը կարացինք տանիցը դուս էլնք եկել։ Դու մի ասի գեղեցիք քսան անգամ եկել են արդայ են տուել, թէ մեր մարդիկն անմեղ տեղն են բռնուած, չունքի էնպէս էին հաւատացել որ մեզ Սիբիր պիտի ուղարկեն։ Բայց նրանց խնդիրքը հէնց իրան Նախաուլովն մնա է գնում, իրանք չեն իմանում, նա էլ 'ի հարկէ, կամ երելիս կը լէր, կամ դէն գցելիս։ Հիմի էլ ոչ միտս է գալիս, ջանս փշաքաղվում է։ Սիր երբ որ պատժոդ ու ազատոդ քու դուշմանն է, էլ ինչ կարաս անի նրան։ Մախլասի գեղեցու բանն էլ մի դարդ ու բալա է։ Ախպէր գեղեցին որ կայ, էրեխի պէս բան է. էրեխէն որ պահող չունենայ, կրակն էլ կընկնի, ջուրն էլ կընկնի, ինչ ասես կը պատահի . . . Քաղքցին հօ, էշի տեղ էլ չի գնում մեզ, հէնց իմանում են թէ խսկի ոչ մեր գլխումը խելք կայ, ոչ մեր սրտումը ջիգար։ Եանի թէ որ դրուստը խօսենք, մեր հալն է, ինչ որ ասեն, շատ անգամ էնպէս ենք խաբվում, որ մուռենկիքը կը ծիծաղեն մեզ վերայ, ուր ճնաց որ սատանայ քաղքցին։ Ա՜յ էդ Շաքարօն, որ էդքան տեղերը զաւթել ուտում է, գիտէք, դա ինչպէս խաբեց մեզ։ Է՜ . . . դարդերս նորում էք, պիտի մի էքա նաղլ էլ նոր սկսեմ, ասաց քոխվէն և սկսաւ չիբուխը նորոգել։

— Ա՛սա, ասա, Սարգիս բիձա, մենք իմացած էլա կը լինք, թէ էդ անիրաւը ինչպէս է ալրապետել մեր տեղերին։

— Ի՞նչպէս պիտի տիրապետի։ Ա՜հ ասեմ, անկաղ դրէք։ Սրանից մի քսան տարի առաջ, ոչ աւելի ոչ պակաս, մի խեղճ մարդ եկաւ մեր գեղը անուն Շաքարօ, ինքը հայ, ոչ բարով . . . էս խեղճ Շաքարօն առաջ սելամանութիւն էր անում կօդա. մի ձմեռ ալրի չունէր թէ եղինքը պահել էր, դիսի էլ սատկոտեցին, որն էլ ծախեց, եկաւ մեր մեծ իրիցին բաղվանչի դառաւ։ Լաւ։ Մի քանի տարի որ անց կացաւ, մի բոստանի տեղ ուզեց մեր մարդկերանցից, նրանք էլ տուին, թէ խեղճ մարդ է, թող իրա համար մի քանի բան սերմի, տանի իրա օղուլուշաղը (գերդաստանը) պահի։ Շաքարօն դառաւ բոստանչի։ Լաւ. ձմերուկ, եմիշ, (սեխ) սոխ, սխտոր, թամբաքու, տակ, գաղար, խիար, դըդում, քալամ (կաղամբ), էլ ուրիշ կանանչի որ ասես ցանեց։ Բոստանի կշտին մի դագի պէս բան էր շինել, ինքն էլ էդտեղ էր կենում գիշեր ցերեկ։ Մի երկու տարի որ անց կացաւ, մի քանի շահու տէր դառաւ, ՏԷր Վանէսի հետ ընկերացաւ, ու նրա հետ մի ջաղաց շինեց, բոստանը չափարեց, բաղ շինեց, հիմի սրանք էրկուսով համ բաղ ունեցան համ ջաղաց։ Լաւ։ Սրա վրայ երկու տարի քաշեց, ՏԷր Վանէսը մեռաւ։ Տղայ զաւակ չունէր, մի աղջիկ ունէր, նա էլ իրանց բաղվանչուն սիրեց,, մի խմէրէլ էր, վեր կալաւ տարաւ խմէրէթ։ Բաղն էլ, ջաղացն էլ մնաց Շաքարօյին, էլ ոչով դաւի չարաւ։ Շաքարօն երբոր փողը բօլացրեց, օձի նման խորխրը հան էլաւ, ձէն գցեց թէ ես աղնիւ եմ։ Սուտ չէր

ասում, գնացել էր մի աղնուականի փոդ տուել, նրան ազգական դառել։ Բայց ցաւն էս է, որ աղնիւ դառաւ թէ չէ բաղնու ջաղացը, թագաւորական տեղը, իրան գրաւ հատատաց, թէ էս իմ պապական տեղն է։ Գեղըցիք նոր ալէք բաց արին, տուր ու թմփոցը զցեցին, Շաքարօյին դուս արին, բայց էլ ինչ կօգտէր։ Նա իրա բանը լաւ էր բռնել։ Գնաց քաղաքից հողաչափներ բերեց, զեմլամերները եկան թէ չէ, նա թէ առաջ մի բաղտոսեղ ունէր, սրանք հարիւր բաղատեղ խլեցին մեզանից տուին նրան։ Մի վկայ պէտք էր, որ էդ տեղերը նրանն էր, վկան էլ հաղիր էր, այդ ճաղար անիծածը։ Հաբա, ռէլ միտք կանէր, որ ադքատ Շաքարօն վերջը մեր դլխին էսպէս օյին պիտի դնի։ Էլ, ինչ կասես, ամիու, ձեր երկրումն էլ էսպէս բաներ կան, հարցրեց քոխլէն մի ծերունի մարդու, որ ինչպէս եռեռումէր հաղուստից և խօսելուց ուրիշ երկրացի էր։

— Մեր երկիր . . . : Է՜ էհ . . . Ախպար, մեր երկիր էդման բաներ չէրան ըմա գողութիւն, տուղակութիւն շատ կեղնի։

— Գողութիւն, գողերի մադանը, նրանց վախանը, բունը մեր երկրումն է։ Դուք հէնց իմանում էք մեզանում գողութիւն չի՞ ըլում, մեզանից քիչ են գողանում։ Որ մէկ մէկու վրայ հեսաբ անեմ, տարին էն քիչը մի տասը-քսան գոմէշ, մի էգբան էլ եզը, մի երեսուն քառասուն մաղիան, հէնց մենակ մեր գեղից են առնում։ Իսկի թողում են որ եղներդ ջուխտ մնան, նա ձիուդ մէկը երկու գառնայ, մի խօսքով էնպէս են արել, էն տեղն են հասցրել, որ էլ ապրանք չենք պահում։ Բօրչալուի թուրքերը էլ մի ուրիշ փեշակ չունին, գրանցը գողութիւնն է։ Դրանց մէջ ով որ գող

չի, նա տղամարդ չի։ Ով որ ուզում է իրա ապրանքը չգողանան, պիտի ինքն էլ գողութիւն անի, գողերի ընկեր դառնայ, գողերին պահպանի, պաշտպանի։ Դրանց մէջ հարեւանը հարեւանի տունը կտրում է, կնիկը, աղջիկը փախցնում է, ցորնի դէզերը կրակ է տալիս։ Դրանք թարաքեամա խալխ են, խուրձը գիտում են թէ չէ գիտի էլ քաշում են գնում սար։ Որ օխտը դեղ մանիս, մի տարդ մի կատու չես գտնիլ։ Նոր սկսել են դարտվուլ բանել գեղերի վերայ, որ դէղ չը կրակ տան։ Այս դէղ կրակ տալն էլ նոր են սովորիլ։ Մէկ էլ օր գիշերը մեր կարիցը մարի էի տալիս, Ղամաղլուի դէղերի կրակը տաղ երկինքը կարմրացրել էր։

Խեղճ ավուն, որ միաք ունէր տեղ տիոխուելու այս գիւղերը, քսիվի պատմութիւնը լսելով՝ իւր քուրդստանի բարբարոսութիւնը մոռացաւ։ Սարդիս քոխվին իրա պատմութիւնը շատ երկարացրեց, բայց այդ ժամանակ իմ քունը տարաւ, ըստ որում թէ և սկըզբումը չասեցի, նրա ունկնդիրներից մէկն ես էի, ճանապարհորդութեամբ հանդիպած։

—

Զ.

Աղբիւրի տառը ջուրը ոչ միայն չը լաւացրեց Հերիքնազին, այլ և աւելի ստստկացրեց նորա ցաւը և բոլորովին տաքութեան փոխուելով դցեց անկողնի մէջ։ Շամիրը երբ որ քաշուեցաւ դէպի դաղէն, այդ ժամանակ Հերիքնազը ոստոտիկ տաքութեան մէջ դեղն էր տալիս և հօրդանը վերայից շրջուում։ Մարիամը կըշտին նստել էր տխուր ու տրտում և շուտ շուտ ծածկում էր Հերիքնազին, որ չը մրսէ։ Շամիրը ներս մտաւ և լուռ ու ժունջ իւր հրացանն առաւ գուրս դնաց։

Այս վերջին օրերը Մարիամը բաւականին փոխուել էր, և սկսել էր սէր ցոյց տալ իւր մարդին, միասին խօսում, ծիծաղում և արդէն չորս ամսուան յղացած էր Մարիամը։ Շամիրը շատ ուրախ էր իւր կընոջ փոխուելու վերայ և սկսել էր ընդհատել իւր հեռաղօտութիւնքը, բայց այս անգամ, երբ որ քսեց Մարիամի գիշերային այցելութիւնը, այս վերանորոգեալ յարաբերութիւնը բոլորովին ուրիշ կերպարանք առաւ նորա աչքում։ «Օ՛, ես հիմի՝ իմացայ ամեն բան, իմ կնիկն ինձ ատեց և ուրիշին ձեռք բերաւ, բայց այդ բանը ինձանից ծածկելու համար, երևի սիրեկանի խորհրդով սկսաւ ինձ սէր ցոյց տալով քնացնել։ Ես էլ ասում եմ բախտաւոր եմ, կնիկս ինձ սիրում է, վաղը միւս օրը զաւակի տէր կը դառնամ, նա ինձ հայր կասէ, ես էլ նրան իմ զաւակ կը համարեմ։ Ախմախ, ախմախ Շամիր, մի անում ունէիր խալխի միջին էլ ուրիշ ոչինչ, էլ այսուհետև ինչու համար ես ապրում, երբոր էդ անումը ցխի մէջ ընկաւ»։ Այսպէս ինքն իրան մինթինթալով բաւականին հեռացաւ Շամիրը և անյայտացաւ անտառի խորերումը։

Շամիրը երեք ամբողջ օր չերևացաւ։ Մարիամը կարծում էր, թէ կամ արան կը լինի գանցած կամ որսի, այդ պատճառով մի առանձին մտատանջութիւն չունէր այդ մասին։ Արդէն մանը օգուտ քաղելով անտառի խոռութիւնից, ամեն գիշեր դալիս էր նշանադրեալ տեղին, ուր տեսնում էր նորան Մարիամը և.

Հերիքնազի առողջութեան մասին տեղեկութիւն հաղորդում . . .

—

Է

Մի ամբոխ և մութ երեկոյ էր: Մարիամը կովեր կթելուց և կաթը տաքացնելուց յետոյ՝ մի երկուփափուկ հաց ու մի քանի կտոր պանիր մի ապուխի մէջ փաթաթելուց ճանապարհ ընկաւ դէպի Ջուխտակ ամարքին: Ճանապարհին հանդիպեցաւ Շամիրը: Մարիամը Շամիրն տեսնելուն պէս տեղն ու տեղը մխուեցաւ:

— Ո՞ւր, առա՛ջ բարի, հարցրեց Շամիրը հեգնական ձևով:

Մարիամը այնպէս շփոթուեցաւ, որ ոչ մի սուտ չը կարողացաւ հնարել, իսկ ճշմարիտը վախեցաւ խօստովանել:

— Քնեմ հարցնում, այ կնիկ, ո՞ւր ես գնում էս կէս գիշերին քօլ ու ձոր ընկած, պնդեց Շամիրը սպառնողական ձայնով:

Պատասխան չը կար:

— Սիրեկանիդ մօտ ես գնում, էնպէս չի՞, արի՛ ես քեզ կըտանեմ սիրեկանիդ մօտ: Այս ասելով անդութ Շամիրը Մարիամի ձեռքից բռնեց և քաշ տալով տարաւ անտառի խորը: Մարիամը ամօթից աղաղակ չը բարձրացրեց, որ մարդ չիմանայ, բայց ընկաւ Շամիրի ոտները և սկսաւ աղաչանքով թաց անել:

— Դու ուրիշ բան մի՛ փիքր անիլ, Շամիր Ջան

Ա՛ստուած, երկինք, ես անմեղ եմ:

— Տեսնում եմ, տեսնում, այ լիրբ աներես, ես քօռ չեմ, դու որ անմեղ ես, էլ ո՞վ է մեղաւորը: Կէս գիշերին Արզումանի հետ ի՞նչ գործ ունիս դու, գէ ասա էլե՛, թէ որ անմեղ ես, ասա տեսնեմ ինչ գործ ունէիր նրա հետ, ո՞ւր ես գնում հիմի, ասա՛, ո՞ւմ համար ես տանում էդ ապուխը, ասա:

— Ա՛ստուած, երկինք, Շամիր,, ես անմեղ եմ: Այս էր միայն Մարիամի խօսքը, որով կարծում էր թէ նորա մտքի մէջ մի երկմտութիւն կը ձգի և կազատվի մահից: Բայց անդութ Շամիրի ջանը դող էր ընկել, աչքերն արիւնով լցուել, նա չէր հաւատում կնկայ խօսքին: Մարիամը որ նորա ոտքի տակն ընկած աղեխարշ արտասունք էր թափում, մէկ էլ յանկարծ լսեց «—Հոգիդ տո՛ւր, զանջըղ» . . . Մարիամը նոր աչք բաց արաւ, տեսաւ որ հնար չկայ ազատուելու, ուզեց երեսին խաչակնքել, . . Դեռ խաչն նշանը ամբողջութեամբ չէր դրոշմել կուրծքին, յանկարծ կծկուեցաւ Շամիրի ոտքի տակին: Եղեռնագործը մի աքացիով անշնչացրեց այն անմեղ ու միամիտ, այն սուրբ Մարիամին, որ իւր կեանքի մէջ ոչոքի մի վատ խօսք չէր ասել, ոչոքի չէր բամբասել, ամուսնական ուխտի դէմ մի ցնորք անգամ իւր մտքին չէր անցկացրել: Անիրաւը տեսաւ որ շնչաւորութեան ձայն չի լսվում, մի ժամու չափ քարացած մնաց, և նոր աչք բաց արաւ, որ այսպիսի եղեռնագործութիւնը անպատիժ չեն մնում: Զարագործութիւնը ծածկելու համար իւր հայրենաւանդ բարբարոսական հնարքը գործ դրաւ: Արձակեց իւր գոհի

գոտին և անուր շինելով դցեց նորա շլինքն ու կախեց մի ծառի ճիւղից, որ տեսնողն ասէ, թէ ինքն իրան է կախել:

Ը

Շամիրը իւր չարագործութիւնից յետոյ վերադարձաւ դաղէքը: Հարբած մարդու պէս այս կամ այն կողմն էր ընկնում և ուղիղ ճանապարհը կորցնելով մինչև կէս գիշեր հազիւ կարողացաւ տեղ հասնել:

Հերիքնազը թէև պարկած էր, բայց անհամբերութեամբ սպասումէր Մարիամի վերադարձին և սաստիկ վարանման մէջ էր նորա ուշանալու համար:

— Ա՛խչի ո՞ւր է քոյրդ, ասաց Շամիրը մանելուն պէս.

— Ձը գիտեմ, պատասխանեց Հերիքնազը, դուրսը կըլի, հիմի կը գայ:

Մի ժամու չափ անցաւ սորա վերայ, Մարիամը չերևեցաւ

— Ա՛խչի ո՞ւր է քոյրդ, կրկնեց Շամիրը բարկութեամբ:

— Ես ի՞նչ գիտեմ ուր է, ասաց Հերիքնազը նոյնպէս բարկանալով, և իսկոյն վեր կացաւ տեղեցը, կարծես մի չարագուշակ ազդմունքից դրդուելով: Շամիրը սկսաւ հարևաններին զարթացնել, թէ չե՞ն տեսել արդեօք Մարիամին, դաղումը չէ՞ման են գալիս, չեն գտնում:

Հարևանները զարթեցին և ամենքն էլ սկսան

այս կողմը այն կողմը ընկնել, կանչել, բղաւել, բայց ոչ մի տեղից ձայն չըլսուեցաւ: Հերիքնազը այնքան ուժ չունէր, որ կանչէր, բայց ամենից լաւ նա էր իմանում, թէ որ կողմ երթալու է փնտրելու համար: Հերիքնազը թէև աւելի ուղիղ գնաց բայց սաստիկ մութ լինելով՝ ոչինչ չէր տեսնում: Շատ փնտրեց, ոչինչ չգտաւ և սաստիկ բեզարելով մէկ տեղ թուլացած վայր ընկաւ տխուր ու արտում, չէր իմանում ինչպէս մեկնէ այս անակնկալ յապաղումը: Ա՛խ, եթէ իմանայի թէ ինձ համար գալդ չի անել Արզումանը, ես էս սահաթիս հոգիս կը տայի, ասումէր Հերիքնազն ինքը իրան, սաստիկ թուլութիւն զգալով: Այսպէս յուսահատ դրութեան մէջ էր յանկարծ մի ոտքի ձայն սուեցաւ:

— Էդ ո՞վ ես, Մարիամ . . լալով կանչեց Հերիքնազը:

— Ա՛խչի ի՞նչ ես շինում էս տեղ, ասաց նոյն Արզումանը, երբոր մօտեցաւ և ճանաչեց Հերիքնազին:

— Ա՛խ, Արզուման, դու ես: Մարիամը կորել է, չես տեսնի՞ Մարիամին:

— Ինչպես ասում, ինչպէս թէ կորել է: Նա երեխայ հօ չի՞: Ես նրան էի մնում էս տեղ, շատ սպասելուց քունս տարաւ: Նոր զարթեցի, ուզումէի գալ ել մնա: Չի կորչիլ մի՛ վախիլ, դու ի՞նչպէս ես, դո՛ւ, լաւացել ե՞ս թէ չէ:

— Ե՞ս, ես լաւ եմ. . . ա՛խ, կռնիցս բռնի վեր կենամ, շատ եմ բեզարել. Ո՞ւր գիտէ էս տեղարէնք

նասել քեզ նման քանը տարել է, հիմի լուսը կը-
բացուի, բալքի երևայ, չեմ կարում ձէն տամ:

— Հերիքնազ Ջան դու հիւանդ ես, ինձ խա-
բում ես թէ լաւ եմ . .

— Ա՛խ, չէ՛ չէ՛, ես լաւ եմ. հաւատա . . Նը-
տինք էս տեղ, ես չեմ կարում մեն դալ . . . իմա-
նում՞ես, խօսելու ձէն է գալիս, դիմի էլ Մարիամին են
մեն գալիս, գնա՛, գնա՛, քեզ չըտեսնեն կատեղ ինձ հետ,
տուր ինձ ձեռքդ, բաքի էլ չեմ տեսնում քեզ, ինձ
համար դարդ չանես, Արզումեն Ջան . . . Այս ասե-
լով համբուրեց Արզումանի ձեռքը: Արզումանը այն-
պէս շփոթեցաւ, որ չիմացաւ ինչ խօսէ, մնաց ապ-
շած կանգնած, մինչև բաւականին մօտեցան խօսողնե-
րը, երբ Հերիքնազի սոխալմամբը հազիւ կարողացաւ ան-
ջատուել նորանից և հեռանալ:

—

Թ,

Երբոր հարևանները այս կողմ այն կողմ տարածե-
ցան, Շամիրը ևս գնաց որպէս թէ փնտրելու: Սո-
րա հետ գնաց և երբեմն Արզումանին ընկեր դիշերեգ-
նարածներից մինը, որ զարմանալով այս անակնկալ և
արնսովոր կորուստի վերայ և կասկածելով թէ մի՛ գու-
ցէ Շամիրը ծեծել է և նա էլ խռովել ընկել է ճորերը
որ մի քարափից վեր ընկնի կամ ջուրն ընկնի խեղդուի,
սկսաւ ինքնիրեն խօսելու պէս ասել.

— Ախպէր, շատ բան էինք լսել, բայց կնկայ կոր-

չել չէինք լսել. . . Ո՞ւր պիտի ըլի գնացած նարաբ:

— Մի կնիկ որ մոքումը ծուռ բան դնի, ուր
ասես կը կորչի, պատասխանեց Շամիրը:

— Ինչի՞ ես էդպէս ասում, Շամիր, դու քու
կնկանը չես հաւատում: Նա որ էդպէս կնկդերանցից
լիներ, քեզանից առաջ մենք կիմանայինք, չունքի էդ-
պէս բանը մարդը էնպէս շուտ չի կարող իմանալ, ինչ-
պէս ուրիշները:

— Ուրիշները քիչ են խօսում. էն օրը դու չը
սեցիր, որ ասում էին կէս գիշերին տեսել են Արզումա-
նի կշտին. . Ես էլի ուրիշ շատ բան եմ վարավուրդ
արել, հատատ գիտեմ, որ նա փիս բանի է:

— Շամիր, գիտես ինչ կայ, էն օրը ես էլ լսեցի
ինչ որ ասեցին, ես էլի շատ բան լսեցի, դու էնտեղ չէ-
իր, քամակդ կրակ մտաւ էլ չը համբերեցիր: Ես հէնց
վաղուց մոքումս դրել էի քեզ ամեն բան իմաց տամ,
որ իմանաս թէ բանի մէջն ինչ կայ, լաւ ժամանակ
չէի գտնում: Բայց հիմի չունքի դու էդքան տանջ-
վում ես քեզ ու քեզ, պէտք է քեզ իմաց տամ ամեն
բան: Խային մարդու աչքերը քօռ կըլի, Շամիր, դու
ոչինչ բան չես հասկանում, շատ բան ես վարավուրդ
արել, բայց դիմի ծուռն ես հասկացել: Էլի որ ես ա-
սեմ թէ ամեն բան գիտեմ, էլի խելքի մոտիկ կըլի,
բայց քեզ ոչով ոչինչ չի ասել, դու ի՞նչ տեղից կը
գիտենաս: Ա՛յ անկաջ դիր, հիմի տեղն է եկել պէտք
է ասեմ: Արզումանը քանի որ էդ փորձանքին չէր
հանդիպել, մոքումը դրել էլ, որ գայ քեզ խնդրի, որ
Հերիքնազին իրան տաս: Հերիքնազն ու Արզումանը սի-
բում են մեկմեկու, էդ սաղ աշխարհքին յայտնի է: Մի

գիշեր դու քաղաք գնացած ժամանակդ նա իմ կըշ-
ուիցս գնաց ձեր տուն։ Գնացել էր Մարիամից ու Հե-
րիքնազիցը խօսք առել, էգսի օրը պիտի օրինաւոր
մարդ ուղարկէր քեզ մօտ, նշանն էլ հագցել էր, էդ
փորձանքը որ պատահեց, ամէն բան խափանուեց. Հի-
մի Մարիամն ի՞նչպէս ասի քեզ, որ առանց քու գիտ-
նալու խօսք է տուել նրան, տուն է թողել. դու ջա-
հել չես էլել, մեր գլխովն էնպէս բաներ քիչ են անց
կացել, դրա խոթրու ոռմ անումն է կոարուել, որ
հիմի Մարիամինը կոարուի։ Նա ի՞նչ գիտէր, թէ բա-
նը էդպէս կը գայ։ Դու քօռ հօ չէս, չես տեսնում
որ Հերիքնազը ուրիշ մարդու չի գնում, նա չի կա-
րում ասի Արզումանին եմ սիրում, նրան պիտի գը-
նամ, բայց մի օր վեր կենայ նրա հետ փախչի էն կու-
ը, դու ի՞նչ կարաս անի։ Հէնց լաւն էն է, որ դու
փիսամարդի չըդառնաս, քու ձեռքով իրան տաս վեր
կալնի տանի։ Հիմի որ Արզումանը էս տեղարէնք սը-
տրտվում է, դու հէնց իմանում ես թէ քու կնկայ
խաթրու է։ Ա՛խմա՛ն զօզրա։ Մարիամն մի պստի երե-
խայ է էլել, ես իմ ձեռքին եմ մեծացրել, դեռ մին-
չև հիմի էլ հէնց գիտեմ թէ իմ ծնող քուրս է։
Դրա պէս անմեղ, միամիտ, դրա պէս ամօթով, հա-
լալ ծծիկեր, դրա պէս խստակ սրտի տեր մեր գեղումը,
ոչ կնիկ կայ, ոչ մարդ, ոչ աղջիկ, ոչ տղայ, դու ին-
չիր ես գուս տալիս գլխիցդ։

Խաչատուրի ամէն մի խօսքը նեսի պէս ցցվում է-
ին Շամիրի սրտումը, նա այդ չէր նկատում։ Շամիրի
լեզուն կապուել էր, էլ չէր կարողանում խօսել։
Խաչատուրի եռեւից քաշաքաշ գալով մի փոքր

ելյառաջ գնացին, մէկ էլ յանկարծ ինչ տեսնեն . . .
Երկու քոյր, միմեանց կախուած միւսը նորա ոտների տակ
անշընչացած . . .

Երբոր Արզումանը թողեց Հերիքնազին ու ինքը
հեռացաւ, Հերիքնազը գօռով վերկացաւ տեղիցը և
սկսաւ այս կողմ այն կողմ թափառել։ Լուսն ու մու-
թը սկսան իրարմէ բաժանուիլ թէ չէ, Հերիքնազի աչ-
քումը մի բան երևաց, մինչև նորա խելքը այդ մասին
մի հաշիւ կը տար իրեն, ահն ու կսկիծը իրարու խառն-
ուելով կայծակի արագութեամբ ընդհարեցին նորան։
Նա տեղնուտեղը վայր ընկաւ, այլ ևս չկարողացաւ
զգուել իւր միակ սիրելի քրոջ դիակը . . . . :

—

Ժ

Շամիրը, անդութ և անտաշ Շամիրը, երբոր լու-
սով տեսաւ իւր դիշերային եղեռնագործութեան պատ-
կերը, երբոր բացուեցաւ նորա մաքի ու խղճի աչքը և
տեսաւ որ կրկնապատկուել է իւր եղեռնագործութիւ-
նը, ինքը մէկին է սպանել. այստեղ երկուքն են ընկ-
կած, մի սարսափելի և կատաղի գուռում գոչում բարձ-
բացրեց, գլուխը ծառերին քարերին սկսաւ զարկել,
այսահարուածի նման գետնի գետին զարկեց ինքը զինքը։
Նրա աչքերումը արտասունք չկար, նա կատաղել էր և
ինքը իրա միսը ուտում էր։ Մարդիկ ժողովեցան շու-
տով և ուզեցան նորա ոտ ու ձեռք կապեն, որ ինք
զինքը չսպանէ, բայց նա սորա նորա ձեռնները կծոտե-

լով՝ վայրենացածի պէս ընկաւ ձորերը։ Մարդիկը վա-
զեցին նորա եաւէից, բայց չկարողացան բռնել։ Նա մէկ
ահագին քարաժայռի գլխից անդունդ գլորուեցաւ և
կաւոր կաւոր եղաւ։ Շամքերին նոյն իսկ գլորուած տեղը
թաղեցին մի ձորամիջում, իսկ Հերիքնազի և Մարիա-
մի համար " Երկուհոգիս ,, անուանուած կաղնի ծա-
ռի տակը փորեցին և երկու քրոջը մի գերեզմանի մէջ
դրին իրանց շորերովը. . .

Աստղներ եղան, թէ հարկաւոր է գնալ քահա-
նայի եաւէից գիւղ, բայց աւելի ծերերը պնդեցին, թէ
անհաղորդ էլածներին, ինքնիրան սպանողներին քա-
հանայով չեն թաղիլ։ Այսպէս ոչ մի աղօթք չասու-
եցաւ նրանց վերայ, ոչ մի հոգեհանգիստ չըկատարուե-
ցաւ նրանց համար։

Այս սարսափելի դէպքի լուրը շուտով տարած-
ուեցաւ ամէնայն տեղ, բայց ոչոքի վերայ այն տպա-
ւորութիւնը չը գործեց, ինչ տպաւորութիւն որ ա-
րաւ . . . Արզումանի վերայ . . . Կայծակի արագու-
թիւնամբ հասաւ Արզումանը, բայց նա ոչինչ չը դուաւ,
այլ միայն մի նորաթաղ գերեզման անտառի խորքու-
մը։ Զոքեց Արզումանն այդ գերեզմանի տուաջև և իւր
ուղածի չափ արտասուեց, բայց դորանով ոչ մի բաւա-
կանութիւն, ոչ մի մխիթարութիւն չտուաց։ Հետըզ-
հետէ աւելի էր զգում, որ իրեն համար էլ այսուհե-
տև կեանք չկայ, իմանում էր, որ իւր պատճառովն
էին զոհուել այս անմեղ դառները։ Արզումանը մը-
տածեց վերջ տալ իւր տանջանքներին և թէ ինչ ա-
րաւ, այդ արդէն յայտնի է այս պատմութեան ա-
ռաջին գլխից։ Ինքը զինքը սպանող երիտասարդը մեր

Արզումանն էր։ Նա եկաւ Շ. . . գիւղի քահանային
խնդրեց, որ երթայ այն անմեղ զոհերի գերեզմանի
վերայ թաղման կարգ կատարէ և իրան էլ հաղորդէ։
Քահանան յանձնառու չեղաւ, թէ նրանք իմ ժողո-
վուրդս չեն, դու էլ գնա քու քահանայի մօտ, թող
նա հաղորդէ։ Բայց երբոր ատրճանակը կրակեց և գիւ-
ղացիք հաւաքուեցան, քահանան էլ եկաւ ու մերձ
իմաստ գտնելով հաղորդեց նորան։ Շրջապատ մարդիկը
ամենքն էլ ճանաչում են Արզումանին. ամենքն էլ սկսան
յաւակցելով հարցնել. թէ ինչն ստիպեց քեզ այդ յու-
սահատութեան մէջ ընկնել։ — Ո՜հ, թողէք ինձ, Աստ-
ուած սիրէք. իմ ցաւն ինձ բաւական է։ Աշխարհիս մար-
դիկը շատ անգութ են, միայն մեռնելուց յետոյ են
ափսոսում մարդու. . .

Շ. . . գիւղացիք մի սայլի մէջ դրին Արզու-
մանին և տարան նորա պապերի գերեզմանատունը։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գարեգին Սիրուն 1879

5628

2013